«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան մշակվեց և ՀՀ ԿԳ նախարարություն ներկայացվեց փաստաթղթային փաթեթ՝ հեռակա ուսուցման համակարգում բակալավրի որակավորման աստիճանով «Իրավագիտություն» և «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությունների գծով գործունեության թույլտվություն ստանալու նպատակով: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով գործունեության թույլտվություն տրվեց այդ մասնագիտությունների գծով, և «Իրավագիտություն» մասնագիտության գծով համալսարանն ունեցավ 77 դիմորդ՝ նախատեսված 60 տեղի դիմաց, իսկ «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ՝ 41 դիմորդ՝ նախատեսված 40 տեղի դիմաց: Ընդհանուր առմամբ՝ 2010 թվականի հեռակա ուսուցման ընդունելության 295 դիմորդից քննությունների արդյունքներով համալսարան է ընդունվել 289 դիմորդ:

2010 թվականի մագիստրատուրայի ընդունելության առաջին փուլով համալսարան դիմած 99 շրջանավարտից 82-ը ստացել է ատեստավորող հանձնաժողովի դրական կարծիքը, երկրորդ փուլում 19 բակալավրիատի շրջանավարտներ ընդունելության քննությունների արդյունքներով ընդունվեցին Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայի համապատասխան բաժիններ:

ՀՀ կառավարության կողմից հաստատված «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու» կարգին համապատասխան՝ շարունակվել է համալսարանի համագործակցությունը Սևանի պետական, Մարտունու պետական, Երևանի պետական գյուղատնտեսական, Վարդենիսի պետական քոլեջների հետ: Ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փոխհամաձայնեցման և վերանայման աշխատանքներում համապատասխան մեթոդական և մասնագիտական օգնության, ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու, բարձր առաջադիմությամբ հաստատությունը ավարտած շրջանավարտների շարունակական կրթության ապահովման նպատակով՝ հաշվետու ուստարում պայմանագրեր են կնքվել նաև «Գավառի ակադեմիկոս Ա. Թամանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի, «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի, «Կապանի պետական բժշկական քոլեջի», «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի», «Երևանի Ա. Բակունցի անվան պետական մանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ-ի հետ, ինչի արդյունքում շարունակական կրթություն ստացողների թիվը հաշվետու ուստարում կազմում է 18 ուսանող: Հանրապետությունում համալսարանի տարեցտարի աճող բարձր վարկանիշի մասին է խոսում երկրորդ մասնագիտություն ստացողների քանակը՝ 20 ուսանող, նախորդ ուստարում 10 ուսանողի դիմաց:

Հանրապետության և արտերկրի պետական բուհերից հաշվետու տարում Գավառի պետական համալսարան է տեղափոխվել 13 ուսանող, իրենց ուսանողական իրավունքները վերականգնել են 147 ուսանող:

Այսպիսով, 2010-2011 ուստարվա սկզբին ուսանողների թիվը առկա բակալավրիատում կազմում էր 1039 ուսանող, մագիստրատուրայում՝ 170, հեռակա ուսուցման համակարգում՝ 1061, ընդամենը՝ 2270 ուսանող:

Հաշվետու ուստարվա ակադեմիական առաջադիմության արդյունքներով՝ ըստ հաստատված կարգի ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ անվճար և վճարովի տեղերի փոխատեղման կանոնների, առկա բակալավրիատի 12 ուսանողներ մրցույթի արդյունքում փոխեցին իրենց կարգավիճակը: Մագիստրատուրայում ուսանողների կարգավիճակի փոխատեղում չարձանագրվեց:

Ուսանողների շրջանում կարգապահության բարձրացման, ուսանողների կողմից գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի յուրաքանչյուր գործոնի արժևորման, համալսարանում սահմանված ժամկետների ճշգրիտ պահպանման նպատակով, ռեկտորատի որոշմամբ հաշվետու ուստարվա առաջին կուրսերի համար արգելվեց միջանկյալ քննությունների վերահանձնումը անբավարար ստացած, ինչպես նաև անհարգելի բացակայած ուսանողների համար: Դեկանատներից ստացած տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ փորձը հաջողված էր, և այսուհետ այն ողջ ուսումնառության ընթացքում կկիրառվի 2010-2011 ուստարում և հետագա տարիներին ընդունված ուսանողների համար:

Հաշվետու ուստարում ուսանողների ակադեմիական առաջադիմության ցու-

ցանհիշներն են.

ա) առաջին կիսամյակում առկա բակալավրիատում և մագիստրատուրայում՝ 61,6%, հեռակա ուսուցման համակարգում՝ 77,2%. նախորդ ուստարում այդ ցուցանիշները եղել են համապատասխանաբար՝ 68.8% և 80.2%,

բ) երկրորդ կիսամյակում՝ համապատասխանաբար 66,9%, և 58,0%. նախորդ ուստարում՝ 69.3% և 56.3%:

2010-2011 ուստարում համալսարանի առկա բակալավրիատի ավարտական կուրսերի 349 ուսանողներից բուհն ավարտեց 336-ը, այսինքն՝ 96,2%-ը՝ նախորդ տարվա 95,7%-ի դիմաց, 13 ուսանող պետական ավարտական քննություններից անբավարար գնահատական ստանալու և չներկայանալու պատճառով հեռացվեց համալսարանից: Բակալավրիատի շրջանավարտներից 60-ը բուհն ավարտեց գերազանցությամբ՝ այսինքն՝ 18%-ը (2009-2010 ուստարում՝ 17%-ը), մագիստրատուրայի ավարտական կուրսերի 75 ուսանողներից՝ մագիստրոսական թեզերի հաջող պաշտպանությամբ 72 շրջանավարտ ստացավ մագիստրոսի որակավորում: Համալսարանի բոլոր մասնագիտությունների գծով մագիստրատուրան ավարտեց ավարտական կուրսի ուսանողների 96%-ը, նրանցից 43-ը՝ գերազանցությամբ: Հեռակա ուսուցման համակարգում ավարտական կուրսերի 208 ուսանողներից 39-ը ստացավ անբավարար գնահատական, բուհն ավարտեց 169 ուսանող, այսինքն՝ 81,3%-ը (2009-2010 ուստարում՝ 74.2%-ը):

Հաշվետու ժամանակահատվածում մասնագիտական երկաստիճան համակարգում կրթական ծրագրերում նախատեսված պարտադիր, լրացական, ուսանողի կողմից ընտրովի կրթամասերի բոլոր դասընթացների և մոդուլների կրթական ելքային արդյունքների հիմքով լրանշակվեցին բոլոր կրթական ծրագրերի ելքային արդյունքները՝ գիտելիք, կարողություն և հմտություն կոմպետենցիաների ձևով: Առաջին անգամ 2011 թվականին Գավառի պետական համալսարանում 13 մասնագիտությունների գծով բակալավրիատի 332 շրջանավարտների շնորհիվեց ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված համաեվրոպական մոլուշի դիպլոմի հավելված՝ հայերեն և անգլերեն լեզուներով, իսկ մագիստրատուրայում՝ արդեն երկրորդ անգամ:

Մի շարք առանցքային ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական տվյալների բացահայտման և վերլուծության նպատակով ուսանողների շրջանում անցկացվել են շարունակական հարցումներ և՛ կրթական ծրագրերից, և՛ ուսումնական ռեսուրսներից, և՛ վարչական ու դասախոսական անձնակազմերի կատարած աշխատանքից բավարարվածության, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի գնահատման վերաբերյալ: Հարցումների արդյունքների վերլուծությունը նպաստեց տարբեր ուղղություններով համապատասխան բարելավումների խթանմանը:

Հաշվետու ուստարում մագիստրատուրայի կրթական աստիճանում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու, ուսանողների ինքնուրույն աշխատանքի ճիշտ պլանավորման նպատակով կարևորվեց մագիստրոսական ծրագրերի ուսումնական պլանների «գիտական սեմի-

նար» մոդուլը՝ բացի գիտական ղեկավարի սեմինարից այդ մոդուլում ներգրավելով ամբիոնների ողջ գիտական ներուժը, ինչպես նաև գործընկեր բուհերից հրավիրված մասնագետների:

ՀՀ կառավարության կողմից ընդունված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագրին, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների միջոցառումների համալիր ծրագրին համապատասխան՝ հաշվետու ուստարում մշակվեց և ԳՊՀ խորհրդի կողմից հաստատվեց «Գավառի պետական համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը», որտեղ ամրագրված են բուհի հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղությունները և սկզբունքները, կրթության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի, կոռուպցիայի կանխարգելման ընդունված գործիքների հետևողական կիրառման և վերահսկման հրամայականը: Գիտխորհուրդը հաստատեց նաև «ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգ»-ը. փաստաթղթում որպես հիմնական սկզբունքներ սահմանված են օրինականությունը, սոցիալական արդարությունը, թափանցիկությունը, հրապարակայնությունը, որակյալ կրթությունը, կրթություն՝ առանց կոռուպցիայի, կրթությունն ընդդեմ կոռուպցիայի: Միջոցառումներ են ձեռնարկվել բուհերում կոռուպցիայի դեմ պայքարի առկա փորձի փոխանակման, ինչպես նաև բուհական համակարգում կիրառվող և միջազգայնորեն ընդունված հակակոռուպցիոն կառուցակարգերին ծանոթանալու նպատակով: Գավառի պետական համալսարանի հակակոռուպցիոն փորձը ներկայացվել է Մակեդոնիայի Հանրապետության Սկոպիե քաղաքում կայացած «Թափանցիկ կրթական ցանց. Հակակոռուպցիոն միջոցառումներ կրթական համակարգում» թեմայով միջազգային գիտաժողովին: «ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը» և «ԳՊՀ ազնվության հայեցակարգը» ներկայացվել են նաև Կրթության և գիտության նախարարության, ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր (ՀԳՄԾ), Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Երևանյան գրասենյակի կողմից կազմակերպված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում թափանցիկության ու արդարության ավելացում» թեմայով միջազգային համաժողովում:

Ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների անցկացման նպատակով համալսարանը շարունակեց համագործակցությունը, ինչպես նաև երկարաձգվեցին երկկողմ պայմանագրերի, փոխըմբռնման և գործընկերության հուշագրերի ժամկետները Գեղարքունիքի մարզի, ինչպես նաև հանրապետության այլ գիտական, կրթական, մշակութային, հասարակական կազմակերպությունների հետ, այդ թվում՝ Գավառի ուսուցողական կենտրոնի, Գավառի Երկրագիտական թանգարանի, Գավառի նոտարական գրասենյակի, Գավառ քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի, «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի, «Արմենթել» ՓԲԸ-ի, «Ղ-Տելեկոմ»-ի, «Հայբիզնեսբանկ»-ի, ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության, ՀՀ գլխավոր դատախազության,

մարզի ավագ և հիմնական դպրոցների հետ:

Համալսարանը շարունակում է անդամակցել Հայաստանի Հանրապետությունում լեզվաբանական կրթության իրականացման և լեզվաքաղաքականության մշակման բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցային համագործակցության կոնսորցիումին՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի, Գյումրու Մ. Նալբանդյանի և Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտների հետ, ինչպես նաև մանկավարժական բարձրագույն կրթություն իրականացնող բուհերի միջբուհական կոնսորցիումին:

Երիտասարդ մասնագետների համար նորագույն տեխնոլոգիաների միջոցով տեսական և գործնական գիտելիքների ամրապնդման և խորացման հնարավորությունների օգտագործման, փոխշահավետ, բազմաբնույթ համագործակցային հարաբերությունների հաստատման, ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարման հարցում ընկերության աշխատակիցների ներգրավման, ինչպես նաև ուսանողների նախադիպլոմային պրակտիկաների անցկացման նպատակով պայմանագիր կնքվեց համալսարանի և «Ջի Էն Սի-Ալֆա»-փակ բաժնետիրական ընկերության միջև. արդեն հաշվետու ուստարում ուսանողները արդյունավետ, ուսուցողական պրակտիկա անցկացրեցին ընկերությունում:

Ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակության ապահովման, զինծառայողների համար կրթական, տեղեկատվական, ճանաչողական, մշակութային ծրագրերի իրականացման, համալսարանի ուսանողներին զինվորական ծառայության նախապատրաստման անհրաժեշտությունից ելնելով՝ համալսարանի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության երկրորդ բանակային զորամիավորման միջև կնքվեց փոխըմբռնման հուշագիր:

Դպրոց-բուհ կապի ամրապնդման նպատակով համալսարանում մշակվեց, ԿԳՆ ներկայացվեց «Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք ստանալու նպատակով վերապատրաստման ծրագիր» դրամաշնորհային հայտը և, մասնակցելով մրցույթին, համալսարանը իրավունք ստացավ անցկացնելու վերապատրաստումներ՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ղեկավարների թեկնածուների համար:

Էլեկտրոնային ուսուցումը հաջողությամբ ներմուծելու և տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաներ ներդնելու, դասախոսների և ուսանողների գործնական կարողություններն ու հմտությունները զարգացնելու նպատակով համալսարանը մասնակցեց և շահեց Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության և գերմանական GIZ կազմակերպության կողմից հայտարարված մրցույթը: Ծրագիրն իրականացվում է «Ինստիտուցիոնալ կարողությունների և մարդկային ռեսուրսների զարգացում էլեկտրոնային ուսուցման ոլորտում՝ Հարավային Կովկասի երկրներում» փոխըմբռնման հուշագրի հիման վրա: Ծրագիրը հեռանկարային է և՛ ուսանող-դասախոս էլեկտրոնային շփումների ձևավորման, և՛ հեռահար ուսուցման տարրերի կիրառման, ուսուցման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների

կիրառման առումով, ինչպես նաև՝ որպես լրացուցիչ արդյունք նախատեսվում է գործընկեր երկրներում ստեղծել «գերազանցության» նոր կենտրոններ, որոնք կարող են օգտագործվել որպես վերապատրաստման և խորհրդատվական աշխատանքների ազգային կամ տարածաշրջանային հարթակ էլեկտրոնային ուսուցման ոլորտում և դրա սահմաններից դուրս:

Համալսարանը մասնակցեց բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ ԿԳՆ հայտարարած դրամաշնորհային մրցույթին և շահեց «Ուսանողների գնահատման նոր մեխանիզմների մշակում և ներդրում» անվանակարգում: Դրամաշնորհային ծրագրի շրջանակում աշխատանքային խումբը՝ Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Յ. Մելիքյանի գլխավորությամբ, մշակեց «Examination-GSU» համակարգչային ծրագիրը: ԳՊՀ ամբիոնների և դեկանատների առաջարկությամբ ընտրվեց հինգ մասնագիտական դասընթաց՝ Բարձրագույն մաթեմատիկա, Ժամանակակից հայոց լեզու, Գեներտիկա, Ինֆորմատիկա, ՀՀ սահմանադրական իրավունք, որոնց գծով ստեղծվեց քննական թեստերի հարուստ բանկ, ձեռք բերվեցին անհրաժեշտ քանակով համակարգիչներ և հաշվետու ուստարվա երկրորդ կիսամյակի ամփոփիչ քննությունները, ընտրված 5 դասընթացների գծով, կազմակերպվեցին ուսանողների գիտելիքների գնահատման նոր՝ էլեկտրոնային եղանակով: Ներբեռնելով քննական թեստերը՝ ծրագիրն ինքնաշխատ կերպով ձևավորում է թեստային առաջադրանքը, առաջարկում ուսանողին՝ արդյունքում հաշվարկելով նաև ուսանողի գնահատականը: Ամփոփելով անցկացված քննությունների թեստային արդյունքները՝ արձանագրվեց, որ ծրագիրը հուսալի և պաշտպանված է, գնահատման կարգը՝ օբյեկտիվ և թափանցիկ, և ամենակարևորը, ընդունելի թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների կողմից:

Կրթության որակի ուսումնասիրման, վերահսկման և շարունակական բարձրացման, ինչպես նաև կրթական ծրագրերի իրականացման գործընթացում բուհի ուժեղ և թույլ կողմերի բացահայտման, Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակի ապահովման չափանիշներին և ուղենիշներին համապատասխան՝ որակի ապահովման բուհական համակարգի ստեղծման, ինքնավերլուծության անցկացման, բուհի կրթական ծրագրերի ենթակառուցվածքային և ծրագրային հավատարմագրմանը նախապատրաստվելու նպատակով, մշակվել և հայտ է ներկայացվել «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ԿԳ նախարարության կողմից հայտարարված «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում կամ դրանց հետագա բարելավում» դրամաշնորհային ծրագրին:

Շարունակվել են աշխատանքները դասախոսների անձնական և ակադեմիական տվյալների էլեկտրոնային երկլեզու բազա, հետագայում նաև համալսարանական համալիր տեղեկատու ստեղծելու ուղղությամբ:

Պրոֆեսորադասախոսական կազմը շարունակել է վերապատրաստումների և որակավորման բարձրացման ծրագրերին մասնակցությունը:

Հաշվետու ուստարում ԳՊՀ գիտխորհրդի երաշխավորմամբ՝ ՀՀ բարձրա-

գույն որակավորման հանձնաժողովի կողմից պրոֆեսորի գիտական կոչում է շնորհվել իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր Զրանուշ Յակոբյանին, իսկ դոցենտի գիտական կոչում՝ ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու Մաքսիմ Յակոբյանին, ֆիզիկամաթեմատիկական և քիմիական գիտությունների ամբիոնի դասախոս, քիմիական գիտությունների թեկնածու Կարինե Ավետիսյանին, կենսաբանության, բնապահպանության և առողջապարհակերպի ամբիոնի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու Զովիկ Փանոսյանին, հայոց լեզվի ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Թաթուլ Ասոյանին:

Համալսարանի դասախոսների և վարչական աշխատակիցների համար շարունակվել են անգլերեն լեզվի ուսուցման դասընթացները:

ԳՊԴ ուսումնամեթոդական գրականությունը մշտապես համալրվում է նաև մեր դասախոսների հեղինակած աշխատանքներով, որոնք տարեցտարի ավելի բազմաքանակ են դառնում: Հաշվետու ուստարում ԳՊԴ գիտական խորհրդի որոշմամբ երաշխավորվել են տպագրության մեր դասախոսների հետևյալ մեծագրություններն ու ուսումնամեթոդական ձեռնարկները.

1. Զրանուշ Յակոբյան՝ «Պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունները ԶԶ-ում»,

2. Թամարա Ալեքսանյան՝ «Կապակցված խոսքի զարգացում»,

3. Արուսյակ Մուխսիխաչոյան՝ «Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա»,

4. Սամվել Խաչատրյան՝ «Հայկական գրադաշտական իրավունքը»,

5. Սամվել Խաչատրյան՝ «Աշխարհի իրավական համակարգերը»,

6. Զովիկ Սուքիասյան՝ «Պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման և ապապետականացման խնդիրներն ու գնահատումը ԶԶ-ում»:

Բուհում մշտապես խրախուսվում է հեռահաղորդակցման ժամանակակից միջոցների կիրառումը, էլեկտրոնային գրադարանային պաշարների օգտագործումը: Յուրաքանչյուր առարկայական ծրագրի մեջ գրականության ցանկում պարտադիր կարգով ներառվում են էլեկտրոնային կայքեր, օգտակար հղումներ՝ համացանցի հնարավորությունների օգտագործման նպատակով: Ուսանողների և դասախոսների համար բավականաչափ ընդլայնվել է բուհում համացանցի օգտագործման հնարավորությունները, համակարգիչների քանակը ավելացել է, հաշվետու ուստարում համալսարանում բացվեց համակարգչային նոր լսարան: «Կրթության որակ և համապատասխանություն. վարկային երկրորդ ծրագրին» շրջանակներում մանկավարժական կրթության բարեփոխումների նպատակով համալսարանին տրամադրվեց 21 համակարգիչ, MF բազմագործոնային սարք, 1 լուսացրիչ, 21 հոսանքի անխափան ապահովման սարք, 1 տեղական ցանց, 21 սեղան, 41 աթոռ, 21 համակարգչային սեղան:

Հաշվետու ուստարում համալսարանում կազմակերպվեց ամենամյա 13-րդ գիտաժողովը՝ նվիրված վաստակաշատ կենսաբան և մանկավարժ Զրանտ Բատիկյանին: Գիտաժողովի ընթացքում զեկույցներով հանդես եկան և՛ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, և՛ համագործակից բուհերի ներկա-

յացուցիչներ: Երկօրյա գիտաժողովի նյութերը՝ 103 գիտական աշխատանքներ /12-րդ գիտաժողովում՝ 82 աշխատանք/ տպագրվեցին (8-ը Վրաստանի Թելավի-վի համալսարանի դասախոսների գիտական հոդվածներն են):

2010-2011 ուսումնական տարում ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները գործուղվել են ինչպես հանրապետական, այնպես էլ արտասահմանյան գիտահետազոտական և ուսումնական հաստատություններ և մասնակցել դասընթացների ու գիտաժողովների:

2010-2011 ուստարում հանրության հետ կապերի և լրատվության բաժնի, ուսանողական խորհրդի, ինչպես նաև ուսանողական գիտական ընկերության կողմից իրականացվել են բազմաբովանդակ աշխատանքներ: Ուսանողական ինքնակառավարման մարմինները՝ համագործակցելով տարածաշրջանի և հանրապետության երիտասարդական կառույցների, հասարակական կազմակերպությունների հետ, իրենց գործունեության ընթացքում արձանագրել են շատ հաջողություններ: Ուսանողները, մասնակցելով ԱՄՆ Կրթության զարգացման կենտրոնի կողմից ֆինանսավորվող «Թափանցիկ կրթությունը Հայաստանում» դրամաշնորհային մրցույթին, շահել են՝ նպաստելով Հայաստանում երիտասարդների ակտիվ քաղաքացիական դիրքորոշման և հակակոռուպցիոն վարքագծի ձևավորմանը: ԳՊՀ ուսանողները հաջողությամբ մասնակցել են ՎիվաՍել-ՄՍՍ ընկերության «Կարիերայի զարգացման» ծրագրի շրջանակներում հայտարարված «Իրավաբանական աշխատություն» ֆորումին, կոմպոզիտոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Առնո Բաբաջանյանի ծննդյան 90-ամյակին նվիրված «Մշակույթների երկխոսություն» միջազգային հինգերորդ գիտաժողովին, Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան մանկավարժական ինստիտուտի կողմից կազմակերպված միջբուհական ուսանողական օլիմպիադային և հանրապետության տարբեր ուսումնական հաստատություններում կազմակերպված գիտաժողովների: Համալսարանը հյուրընկալել է տարբեր բուհերի ուսանողների՝ հանրապետական գիտաժողովներ կազմակերպելով: Հատկանշական է ԳՊՀ աշխարհագրության ամբիոնի նախաձեռնությամբ և ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպված «Կտոր մը հայրենիք» համալսարանական ուսանողական գիտաժողովը, որի 2-րդ փուլը Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի ջանքերով դարձավ համահայկական:

ՀՀ յոթ բուհերի ուսանողների մասնակցությամբ ԳՊՀ-ում կազմակերպվեց «Սևան. հիմնախնդիրներ, հիմնախնդիրներ» ուսանողական գիտաժողովը:

Ուսումնական տարվա սկզբին համալսարանի ուսանողները, ԳՊՀ-ում հիմնադրված «Տուրիզմի ակունքի» անդամները՝ ՀՀ սփյուռքի նախարարի հովանավորությամբ, մասնակցել են էքսկուրսիաների, Հայաստանի Հանրապետության պատմամշակութային արժեքների բացահայտմանն ուղղված ճանաչողական արշավների, այցելել թանգարաններ, մասնակցել մշակութային զանազան միջոցառումների:

Համալսարանում տարբեր թեմաներով կազմակերպվող «Կլոր սեղանների», «բանավեճերի», սեմինար-քննարկումների ընթացքում ուսանողները հնարավորություն են ունեցել արտահայտել իրենց կարծիքները, պաշտպանել սեփական

ԳՊՀ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

դիրքորոշումը, հանդես գալ պատասխան ելույթներով, ինչպես նաև ծանոթանալ տվյալ ոլորտի մասնագետների կարծիքներին, տեսակետներին:

«Գրական Խաչմերուկներ»-ի շրջանակում բուհի ուսանողները առիթ ունեցան գրական հետաքրքիր քննարկումներ ծավալելու ՀՀ գրողների միության նախագահ Լևոն Անանյանի, բանաստեղծ Հենրիկ Էդոյանի, գրող, թարգմանիչ Հակոբ Մովսեսի հետ:

«Երիտասարդական լսարանի վրա զանգվածային լրատվական միջոցների դրական և բացասական ազդեցության հիմնախնդիրները» թեմայով՝ համալսարանի տարբեր բաժինների ուսանողների մասնակցությամբ, գրագետ, ակտիվ բանավեճ տեղի ունեցավ Հայկական 2-րդ հեռուստաալիքի հաղորդավարուհի Գայանե Փայտյանի հետ:

«Կրթության նորագույն տեխնոլոգիաներ» թեմայով սեմինար-քննարկում տեղի ունեցավ ուսանողների, դասախոսների և բուհի վարչական անձնակազմի ներկայացուցիչների մասնակցությամբ:

«Տեղեկատվություն երիտասարդությանը» ծրագրի շրջանակներում ուսանողները մասնակցեցին սեմինարների շարքի՝ «Սահմանադրական իրավունքի հիմունքներ» թեմայով, որը վարում էին իրավագիտության ամբիոնի դասախոսները:

Հետաքրքիր քննարկում ծավալվեց նաև բուհի ուսանողների և Ատլանտյան և Եվրոպական համագործակցության նախագահ Տեոդասիս Գեորգիուի, Հունաստանի տարբեր համալսարանների ուսանողների հետ՝ Յուլիսատլանտյան դաշինքի, ԵԱՏՕ-ի կառուցակարգերի վերաբերյալ Հայկական ատլանտյան ասոցիացիայի կողմից ԳՊՀ-ում կազմակերպված տեսախորհրդաժողովի ժամանակ:

Հաշվետու ուստարում ուսումնագիտական աշխատանքների կատարողական ցուցանիշների գնահատումը և 2011-2012 ուստարում կատարվելիք աշխատանքների պլանավորումը ճշգրիտ կլինի, եթե համեմատվեն կատարված, թերակատարված կամ չկատարված աշխատանքները: Ընդհանուր առմամբ, 2010-2011 ուստարվա զարգացման հայեցակարգում տեղ գտած 32 կետ պլանավորված աշխատանքներից համապատասխան ֆինանսավորման, կամ նյութատեխնիկական ռեսուրսների բացակայության պատճառով չի կատարվել 8-ը, այսինքն՝ ընդհանուր աշխատանքների 25%-ը, իսկ այն աշխատանքները, որոնք իրատեսական են, ներառվել են 2011-2012 ուստարվա զարգացման հայեցակարգում:

**2011-2012 ուսումնական տարում
ԳՊՀ ուսումնագիտական զարգացման հայեցակարգը**

Գավառի պետական համալսարանում մշակվել և իրականացվում է ռազմավարություն կրթության որակի շարունակական բարձրացման նպատակով: Բուհում մշակվել են քաղաքականություն և հարակից ընթացակարգեր կրթական ծրագրերի և շնորհած որակավորումների որակի և չափորոշիչների ապահովման համար, առկա են կրթական ծրագրերի պարբերական վերանայման և վերահս-

կողմից անցկացված մեխանիզմներ, ուսանողների գնահատումը կատարվում է ըստ նախապես հրապարակված և համապատասխան կանոնակարգերում ամրագրված չափանիշների, ձեռնարկվում են միջոցներ՝ ապահովելու դասախոսական անձնակազմի որակի շարունակական աճի և վերահսկողության մեխանիզմները, մշակվում են կառուցակարգեր ակադեմիական արդյունավետ կառավարման համար համապատասխան տեղեկություններ ստանալու, վերլուծելու և պլանավորելու ուղղությամբ, բուհը կանոնավոր կերպով հրապարակում է օբյեկտիվ քանակական և որակական տեղեկություններ՝ կրթական ծրագրերի, շնորհվող որակավորումների վերաբերյալ:

Չամալսարանում առկա է բավականաչափ նյութատեխնիկական, ուսումնամեթոդական, ակադեմիական ներուժ, որը հիմք է ծառայում բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին համապատասխան՝ ծրագրային և ենթակառուցվածքային ինքնավերլուծություն անցկացնելու և բուհի հավատարմագրմանը նախապատրաստվելու համար: Ինքնավերլուծությունը համարելով որակի ներքին ապահովման մեկնակետ՝ 2011-2012 ուսումնական տարին Գավառի պետական համալսարանի համար հայտարարվել է «Կրթության որակի ապահովման տարի»: ԳՊԴ զարգացման և բարեփոխման 2011-2016թթ. հայեցակարգին համապատասխան՝ 2011-2012 ուստարում ծրագրում ենք հետևյալ աշխատանքները՝ ըստ համապատասխան ոլորտների.

1. Ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտահետազոտական գործունեության ոլորտներ

1.1. Իրականացնել կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային փոփոխություններ՝ ուղենիշ ունենալով որակավորումների եվրոպական շրջանակի չափանիշները, հաշվի առնելով ուսանողների, շրջանավարտների, գործատուների շրջանում նախորդ ուստարում կատարված հարցումների արդյունքները: Շահառուների պահանջները, գործատուների կողմից արված առաջարկությունները ներառել ուսումնական պլաններում և առարկայական ծրագրերում՝ կրթության արդիականացման, շրջանավարտների մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների ընդլայնման նպատակով:

1.2. Բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճանների համար մշակել և ներդնել ուսուցման ելքային արդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերի հայեցակարգեր:

1.3. Շարունակել կրթական գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների բանկի համալրման աշխատանքները, ստեղծել էլեկտրոնային գրադարան և էլեկտրոնային արխիվ:

1.4. Ստեղծել և կիրարկել դասընթացներին ուսանողների գրանցման, նրանց անձնական, ուսումնական առաջադիմության տվյալների մուտքագրման ու մշակման, ակադեմիական տեղեկագրի, դիպլոմի հավելվածի պատրաստման միասնական էլեկտրոնային համակարգ:

1.5. Ներմուծել համալսարանում կառուցվածքային ստորաբաժանումներ

տարեկան գործունեության արդյունքների վերլուծության և հաշվետվողականության նոր ձևաչափ, կարևորել մասնագիտական ամբիոնների հաշվետվությունները և կրթական ծրագրերի զարգացման հայեցակարգերը:

1.6. Քննությամբ ավարտվող դասընթացների համար ստեղծել քննական թեստերի բանկ, ամփոփիչ քննությունները անցկացնել համակարգչային, թեստային եղանակով: Համադրել ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման ձևերը՝ ավանդական և համակարգչային թեստավորման եղանակով, վերլուծել արդյունքները:

1.7. Համադրել առարկայական ծրագրերում սահմանված կրթական վերջնարդյունքները և ուսանողների փաստացի ձեռքբերված կոմպետենցիաները՝ ուսանողների շրջանում անցկացված ինքնագնահատականի և թեստային եղանակով քննությունների արդյունքների վերլուծությամբ, իսկ ուսումնառության ավարտին՝ կրթական ծրագրի նախատեսված ելքային արդյունքների ու ամփոփիչ ատեստավորման արդյունքների համադրությամբ գնահատել շրջանավարտների փաստացի ձեռք բերած կոմպետենցիաները:

1.8. Վերանայել բազմագործոն գնահատման համակարգը և վերաարժևորել գնահատման գործոններին տրվող կշիռները:

1.9. Եվրոպական չափորոշիչներին համապատասխան ուղղություններով անցկացնել բուհի ենթակառուցվածքային ինքնավերլուծություն, մշակել և ներդնել որակի բարձրացմանը միտված նոր կառուցակարգեր:

1.10. Բազմազանեցնել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլաններում ընտրովի դասընթացները՝ ապահովելով այդ դասընթացների նկարագրությունները, ամրագրելով ակնկալվող ելքային արդյունքները:

1.11. Շարունակել ուշադրության կենտրոնում պահել մագիստրոսական ծրագրերում գիտական սեմինարը և գիտահետազոտական պրակտիկաները, ուսանողական գիտական կոնֆերանսներին մագիստրոսների գիտական զեկուցումներով հանդես գալը:

1.12. Կազմակերպել անգլերենի ուսուցման և համակարգչային դասընթացներ բակալավրիատում և մագիստրատուրայում բարձր առաջադիմությամբ սովորող ուսանողների համար:

1.13. Աջակցել ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի աշխատանքներին՝ ուսանողների մոտ զարգացնելու նախաձեռնողական և ինքնակազմակերպման կարողություններ, հետազոտական հմտություններ:

1.14. Ապահովել համալսարանի դասախոսների մասնակցությունը առցանց գիտաժողովներին և վերապատրաստումներին:

1.15. 14-րդ ամենամյա գիտաժողովը նվիրել Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին, իրականացնել հետևողական աշխատանք՝ հանրապետության և արտերկրի բուհերից գիտնականների մասնակցությունն ապահովելու նպատակով:

2. Դասախոսական կազմի մասնագիտական աճի ապահովմանն ուղղված աշխատանքներ

2.1. Շարունակել դասախոսական և վարչական անձնակազմի վերապատրաստումները՝ անգլերենի ուսուցման, համակարգչային, էլեկտրոնային ուսուցման, կրթական նոր տեխնոլոգիաներին տիրապետելու և ուսումնական գործընթացում ներդնելու հմտությունների ձևավորման և մասնագիտական աճի նպատակով:

2.2. Դասախոսների համար ապահովել պայմաններ՝ զբաղվելու գիտահետազոտական աշխատանքով, մասնակցելու տարբեր գիտական ծրագրերի իրականացմանը:

2.3. Շարունակել դասախոսներին էլեկտրոնային հասցեների տրամադրման և համացանցային էջերի բացման աշխատանքները՝ խրախուսելով ուսանող-դասախոս էլեկտրոնային հաղորդակցությունը:

2.4. Շարունակել ուսանողների շրջանում հարցումների անցկացումը՝ դասատվության, գործնական աշխատանքների անցկացման, ուսանող-դասախոս հարաբերությունների գնահատման վերաբերյալ, ամփոփել արդյունքները, խրախուսել ուսանողների կողմից առավել բարձր գնահատականների արժանացած դասախոսներին:

2.5. Երիտասարդ մասնագետներին աջակցել՝ լավագույն փորձի փոխանցման, ուսուցման և ուսումնառության նորագույն մեթոդների տիրապետման ու կիրառման, դասընթացների առարկայական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման մեթոդաբանության լուսաբանման, մեթոդական, մանկավարժական, մասնագիտական օգնության միջոցով:

3. Հանրության հետ կապերի ամրապնդմանն ուղղված աշխատանքներ

3.1. Շարունակել ուսումնասիրությունները աշխատաշուկայում, հավաքագրել գործատուների՝ շրջանավարտ-մասնագետներին ներկայացվող պահանջները, համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի, ուսումնական պլանների վերաբերյալ նրանց առաջարկությունները, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում ներգրավել գործատուների ներկայացուցիչներին:

3.2. Կնքել համաձայնագրեր և պայմանագրեր տարածաշրջանում գործող ուսումնական, գիտական, կրթական, հասարակական, երիտասարդական, մշակութային կազմակերպությունների հետ՝ ընդլայնելու ուսանողների ուսումնական, արտադրական, նախադիպլոմային պրակտիկաների անցկացման բազաները:

3.3. Համալսարանի ինտերնետային կայքում ստեղծել տարբեր տարիների ԳՊԴ շրջանավարտների տեղեկատվական բազա, հետևել նրանց հետագա մաս-

նագիտական աճին ու ծառայողական առաջխաղացմանը:

3.4. Շարունակել համագործակցությունը տարածաշրջանում գործող ավագ և հիմնական դպրոցների հետ, ակտիվացնել աշակերտների կապը համալսարանի հետ, լուսաբանել համալսարանում իրականացվող կրթական ծրագրերը աշակերտների շրջանում, օգնել նրանց՝ մասնագիտական կողմնորոշման հարցում:

3.5. «Համալսարանական ժամ» եթերաժամի շրջանակում ողջ ուսումնական տարվա ընթացքում հանրությանը իրազեկել՝ ապահովելով համալսարանի կրթական ծրագրերի, կառուցվածքային ստորաբաժանումների, ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության, դասախոսական կազմի, լրացուցիչ կրթական ծառայությունների, ուսումնական ռեսուրսների, կանոնակարգային հենքի, համալսարանի բարերարների, միջազգային կապերի և այլ բնույթի՝ հանրությանը հետաքրքրող համալիր տեղեկատվությամբ:

Ն. Ա. ԿՈՒՏՈՒԶՅԱՆ
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒՆՏԵՏ

Դեկան՝ *Կատվալյան Վիկտոր Լիպարիտի,
բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ԳՊԴ պրոֆեսոր*

Դեկանի տեղակալ՝ *Բաղալյան Մարինե Միքայելի*

ՖԱԿՈՒՆՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
031000	Հայոց լեզու և գրականություն
032400	Ռուսաց լեզու և գրականություն
031300	Անգլերեն լեզու և գրականություն

Մասնագիտացումներ՝

բակալավր՝ բանասիրության, մանկավարժության բակալավրի

մագիստրոս՝ բանասիրության մագիստրոսի

Ուսանողների թիվը՝ 351

Շրջանավարտների թիվը՝ 109

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2010-2011 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ 2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՉԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

2010–2011 ուսումնական տարում ԳՊԴ բանասիրական ֆակուլտետում կրթական գործընթացը կազմակերպվել է համաձայն ուսումնական պլանների և հաստատված ժամանակացույցի, նախատեսված բոլոր ծրագրերը լիովին իրականացվել են, ինչպես նաև կատարվել են ուսումնամեթոդական, դաստիարակչական, գեղագիտական բնույթի զգալի աշխատանքներ:

Ուսումնական տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքներով բանասիրական ֆակուլտետի՝ բակալավրիատի կրթակարգով սովորող ուսանողների ուսման բացարձակ առաջադիմությունը կազմել է 58,33 տոկոս, իսկ գարնանային քննաշրջանի արդյունքներով՝ 68,84 տոկոս, այսինքն՝ ուսումնական տարվա ընթացքում նկատելի է առաջադիմության աճ տասը տոկոսով: Գարնանային քննաշրջանում, ձմեռայինի համեմատությամբ, առաջադիմության աճ են արձանագրել բոլոր կուրսերը: Առաջին կուրսերը ձմեռային քննաշրջանի 59 տոկոս առաջադիմության դիմաց ունեցել են գարնանային քննաշրջանի 72 տոկոս առաջադիմություն, երկրորդ կուրսերն ունեցել են համապատասխանաբար 54 և 67 տոկոս առաջադիմություն, իսկ երրորդ կուրսերը՝ 63 և 69 տոկոս առաջադիմություն: Իրենց ցուցանիշները բարելավել են ինը խմբերից յոթը: Միայն Անգլերեն լեզու բաժնի 1-ին և Ռուսաց լեզու և գրականություն բաժնի 2–րդ կուրսերն են գարնանային քննաշրջանում կրկնել իրենց ձմեռային քննաշրջանի ցուցանիշները: Ուսումնական տարվա ավարտին լավագույն ցուցանիշ են ունեցել Ռուսաց լեզու և գրականություն բաժնի երկրորդ կուրսի ուսանողները՝ 100 տոկոս առաջադիմությամբ: Բարձր ցուցանիշներ են ունեցել Հայոց լեզու և գրականություն բաժնի երրորդ /84 տոկոս/ և առաջին /77 տոկոս/, Անգլերեն լեզու բաժնի երկրորդ /75 տոկոս/ կուրսերը: Վատագույն ցուցանիշ հանդես են բերել Ռուսաց լեզու և գրականություն բաժնի երրորդ կուրսի ուսանողները՝ իրենց 46 տոկոս առաջադիմությամբ:

Ինչպես նախորդ տարիներին, բակալավրիատի Հայոց լեզու և գրականություն բաժնում առկա է սովորողների կայուն և համեմատաբար բարձր առաջադիմություն: Ռուսաց լեզու և գրականություն բաժնում շարունակվում է ուսման որակի և առաջադիմության աճը, ինչը նկատելի էր նաև նախորդ երկու ուսումնական տարիներին: Դրական տեղաշարժեր նկատելի են նաև Անգլերեն լեզու բաժնում, որը, նախորդ ուսումնական տարում լինելով ընդգծված հետնապահ, հաշվետու ուսումնական տարում հանդես է բերել համեմատաբար բարձր ցուցանիշներ:

Այսպիսով, եթե նկատի ունենանք տոկոսային ցուցանիշները, կարող ենք արձանագրել առաջադիմության ընդհանուր աճ, ինչը անշուշտ վկայում է թե՛ ուսա-

նողների և թե՛ դասախոսների ջանադիր աշխատանքի մասին: Միևնույն ժամանակ, այդ արդյունքները, այնուամենայնիվ, գոհացուցիչ լինել չեն կարող, և ֆակուլտետի խորհրդում ընդունվելու է գործողությունների համալիր ծրագիր, որը կնախանջի մեր անելիքները ոչ միայն ուսման որակի բարձրացման նոր մեխանիզմներ մշակելու և իրագործելու, այլ նաև ընդհանրապես ուսումնակրթական գործընթացը որակական նոր աստիճանի հասցնելուն միտված հետագա քայլեր ձեռնարկելու ուղղությամբ:

Վերադառնալով գարնանային քննաշրջանի արդյունքներին՝ նշենք, որ բակալավրիատի 215 ուսանողներից 30-ը քննությունները հանձնել են միայն «զերազանց» գնահատականներով, 83-ը՝ «զերազանց» և «լավ» գնահատականներով, 35-ը՝ խառը գնահատականներով: 31 ուսանողներ էլ վաստակել են անբավարար գնահատականներ:

Ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետի ուսանողներից հինգը ազատվել է համալսարանից, ութը՝ հեռացվել, տարկետում են ստացել յոթ ուսանողներ, այլ ֆակուլտետ են տեղափոխվել տասը ուսանողներ: Իրենց ուսանողական իրավունքները վերականգնել և այլ ֆակուլտետից բանասիրական ֆակուլտետ են տեղափոխվել 14 ուսանողներ:

2010–2011 ուսումնական տարում բակալավրիատի պետական ավարտական քննություններին մասնակցեցին ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 86 ուսանողներ, որոնցից 19-ը վաստակեցին միայն «զերազանց» գնահատականներ, իսկ 12-ը արժանացան զերազանցության դիպլոմի:

Մագիստրատուրայում գարնանային քննաշրջանի արդյունքներով առկա է 80 տոկոս առաջադիմություն՝ ձմեռային քննաշրջանի 77 տոկոսի դիմաց: Անցած ուսումնական տարում բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրան ունեցավ 23 շրջանավարտ, որից 16-ը մագիստրատուրան ավարտեց զերազանցության դիպլոմով: Մագիստրատուրայի շրջանավարտների ցուցաբերած արդյունքները հիմնականում գոհացուցիչ էին, այնուամենայնիվ մագիստրատուրայի կրթական համակարգը հիմնավորապես տիրապետելու և կատարելագործելու առումով դեռևս որոշակի անելիքներ ունենք:

Անցած ուսումնական տարում ֆակուլտետի առօրյան հագեցած էր տարաբնույթ գիտական, գեղարվեստական, հոբելյանական, ճանաչողական, ինտելեկտուալ, բարեգործական միջոցառումներով, ցերեկույթներով, մրցույթներով: Հիշատակության արժանի են հանդիպումը Հայաստանի գրողների միության անդամների հետ, Րաֆֆու «Սամվել» վեպին նվիրված միջոցառումը, ԳՊՀ մյուս երեք ֆակուլտետների միջև բանասիրականի կազմակերպած ինտելեկտուալ, երաժշտական, հումորային մրցույթը, մեր ուսանողների կողմից գրքերի նվիրաբերումը ԳՊՀ գրադարանին և այլն:

Անցած ուսումնական տարում բանասիրական ֆակուլտետի շրջանակում գործող ամբիոններում շարունակել են թարմացվել առարկայական ծրագրերը, պատրաստվել են դասախոսությունների էլեկտրոնային նոր տարբերակներ, դասավանդվող առարկաների բնութագրեր, տարբեր կարգի հարցաշարեր ու այլ փաստաթղթեր՝ կրեդիտային համակարգի պահանջներին համապատասխան:

Ամբիոններում պարբերաբար անցկացվել են գիտական բանավեճեր, սեմինարներ և քննարկումներ: Համալսարանում ներդրված «Examination-GSU» համակարգչային ծրագրի շրջանակներում Հայոց լեզու և գրականություն բաժնի առաջին կուրսի ուսանողները «Ժամանակակից հայոց լեզու» դասընթացի քննությունը հանձնել են նոր՝ թեստային համակարգով:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական գործունեության արդյունքում հրապարակվել են մենագրական աշխատանքներ, գիտական հոդվածներ ինչպես ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածուում, այնպես էլ հանրապետության այլ գիտական հանդեսներում ու ամսագրերում: Դասախոսներն իրենց գիտական աշխատանքներում ներգրավել են նաև գիտական հետաքրքրություններ ունեցող մագիստրատուրայի և բակալավրիատի ուսանողների: Ամբիոնների մի շարք աշխատակիցներ կատարում են աշխատանքներ գիտական թեզերի ամբողջացման ուղղությամբ, նրանցից մեկը (ի դեպ, ԳՊԴ-ի շրջանավարտ) անցած ուսումնական տարում հաջողությամբ պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն:

Անցած ուսումնական տարում ունեցել ենք նաև թերացումներ: Անհանգստացնող է այն, որ ֆակուլտետում դեռևս զգալի քանակություն են կազմում ակադեմիական առումով ակնհայտորեն հետ մնացող ուսանողները, որոնք զրեթե բոլոր քննաշրջաններում ունենում են առարկայական պարտքեր, որոշակի քանակություն են կազմում նաև շարունակաբար միջին առաջադիմություն ունեցողները: Առանձին դեպքերում դասախոսները դեռևս չեն կիրառում դասատվության նորագույն եղանակներ, ուսանողների հանդեպ չի ցուցաբերվում անհատական մոտեցում, մագիստրատուրայում բավարար ուշադրություն չի դարձվում սովորողների ստեղծագործական, գիտահետազոտական ունակությունների զարգացման և դրսևորման հարցերին, ինքնուրույն աշխատանքների կատարումը և ստուգումը հաճախ կրում է ձևական բնույթ, ամբիոնները պարբերաբար չեն կազմակերպում փոխադարձ դասալսումներ, քիչ են տեղի ունենում գրական երկերի քննարկումներ, գրականագիտական ու լեզվաբանական բանավեճեր:

Ուսումնական գործընթացը շարունակվում է, և այդ գործընթացի բոլոր ուղղություններով թերացումները ըստ հնարավորին շտկելու, նորանոր ծրագրեր ներդնելու, աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, բարձրորակ ուսումնակրթական ծառայություն մատուցելու համար նոր քայլեր ձեռնարկելու խնդիր է դրել իր առջև բանասիրական ֆակուլտետը, ուստի 2011–2012 ուսումնական տարվա՝ ֆակուլտետի զարգացման հայեցակարգի բուն նպատակն է՝ ապահովել ուսումնական ողջ գործընթացի որակի էական աճ:

Ելնելով առաջադրված նպատակից՝ բանասիրական ֆակուլտետի 2011–2012 ուստարվա զարգացման հայեցակարգը նախատեսում է աշխատանքների ծավալում հետևյալ ուղղություններով.

1. Ուսումնական պլանների և ծրագրերի շարունակական թարմացում, նորագույն պահանջներին համապատասխանեցում:

2. Ամբիոնային աշխատանքների արդյունավետության աճ:

3. Ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության աճ:

ԳՊԴ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

4. Դասատվության արդյունավետության բարձրացում:
 5. Ուսումնական գործընթացի, գիտելիքների նկատմամբ ուսանողների հետաքրքրության աճի ապահովում:
 6. Ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացում:
 7. Ուսումնական արդյունքների ստուգման և գնահատման արդյունավետության բարձրացում:
 8. Ուսանող երիտասարդության հայրենասիրական, քաղաքացիական, բարոյական, հոգևոր-մշակութային որակների զարգացում:
 9. Արտաֆակուլտետային գործունեության ծավալում, ակտիվ մասնակցություն համահամալսարանական ծրագրերին և գործընթացներին:
 10. Ուսանողների շրջանում ինքնուրույն հետազոտական աշխատանքի հմտությունների զարգացում:
- Ֆակուլտետի զարգացման սույն հայեցակարգի հիման վրա ձևավորվել է ԳՊԴ բանասիրական ֆակուլտետի՝ ուսման որակի բարձրացման ծրագիր-կառուցակարգը:

**ԳՎԿՎՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ՝
ՈՒՍԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ 2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԾՐԱԳԻՐ-ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳ**

h/h	Որակի աճին միտված գործողություն	Գործողության մեխանիզմներ	Ակնկալվող արդյունք	Ժամկետ
1.	Ուսումնական պլանների և ծրագրերի շարունակական թարմացում, նորագույն պահանջներին համապատասխանեցում	1.1. ուսումնական պլանների քննարկում ամբիոնների նիստերում, առաջարկությունների մշակում, ապա ներկայացում և հիմնավորում ֆակուլտետի խորհրդի նիստերում 1.2. ուսումնական ծրագրերում գիտության առաջընթացի արտահայտում, թեստերի, հարցացուցակների, անհատական և կուրսային աշխատանքների թեմաների, հանձնարարվող գրականության ցանկի թարմացում, էլեկտրոնային կայքերի ներառում 1.3. ամբիոնների նիստերում առարկայական ծրագրերի պարբերական քննարկում, անհրաժեշտության դեպքում աշխատանքային խմբի ստեղծում՝ ուսումնական ծրագիրը վերամշակելու համար	1. ըստ հնարավորին արդիական և մասնագիտության ներկա պահանջներին բավարարող, հետագայում ևս շարունակական բարեփոխումների ունակ ուսումնական պլանների և ծրագրերի առկայություն	1.1. մինչև ուսումնական տարվա ավարտ 1.2. մինչև նոյեմբերի վերջ 1.3. ողջ ուս. տարվա ընթացքում

ԳՊԴ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

2.	Ամբիոնային աշխատանքի արդյունավետության բարձրացում	<p>2.1. ամբիոնի՝ ուսումնամեթոդական, գիտական, դաստիարակչական ուղղություններով աշխատանքների տարեկան ծրագրի ձևավորում, ամբիոնի նիստում հաստատում և ֆակուլտետի խորհրդի նիստում ներկայացում</p> <p>2.2. բոլոր դասընթացների համար ուսումնամեթոդական ձեռնարկների և ուղեցույցների պատրաստում</p> <p>2.3. գիտական սեմինարների պարբերական անցկացում, աշխատակիցների գիտական աշխատանքների քննարկում</p> <p>2.4. գիտամեթոդական, խորհրդատվական աջակցությունների տասարդ-դասախոսներին</p> <p>2.5. ամբիոն-ուսանող կապի ամրապնդում, ուսանողներին էսսեների, ռեֆերատների պարբերական հանձնարարում, հետազոտական աշխատանքներում գիտական հետաքրքրություններ ունեցող ուսանողների ներգրավում, ամբիոնում լավագույն ուսանողական աշխատանքների ներկայացում, քննարկում և արժևորում</p> <p>2.6. փոխադարձ դասալսումների պարբերական կազմակերպում, դրանց քննարկում, առաջավոր փորձի տարածում, բացթողումների վերհանում և բացառում</p> <p>2.7. համապատասխան բաժնի ուսանողների առաջադիմության ցուցանիշների քննարկում, ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ անհատական և արդյունավետ աշխատանքի կազմակերպում</p>	<p>2. բուհում բարձր համարում և պատշաճ գիտական մակարդակ ունեցող ամբիոնների առկայություն, որոնք արդյունավետորեն համատեղում են ուսումնամեթոդական և գիտական աշխատանքները, ապահովում են շարունակական գիտական աճ, յուրացում են բնագավառի գիտական նվաճումները և դրանք մատուցում ուսանողությանը, ակտիվորեն մասնակցում են բուհական ուսումնական ողջ գործընթացին</p>	<p>2.1. մինչև նոյեմբերի կեսը</p> <p>2.2. շարունակական</p> <p>2.3. ամեն շաբաթ</p> <p>2.4. միշտ</p> <p>2.5. ողջ ուստարում</p> <p>2.6. ամեն շաբաթ</p> <p>2.7. յուրաքանչյուր միջանկյալ և ամփոփիչ ստուգումից հետո</p>
3.	Ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացում	<p>3.1. տարբեր կուրսերի, նույն դասընթացը տարբեր ժրագրերով ուսումնասիրող խմբերի միացյալ դասատվության բացառում</p> <p>3.2. անհրաժեշտության դեպքում դասատվության գործընթացին երիտասարդ մասնագետների, մագիստրանտների ներգրավում՝ անցած նյութը ամրապնդելու, նորագույն մեթոդներ կիրառելու պայմանով</p>	<p>3. յուրաքանչյուր ուսումնական խմբում ուսումնական պլանով և դասացուցակով նախատեսված բոլոր դասընթացների թեմատիկ պլանների անխափան և արդյունավետ կատարում, ուսումնական գործընթացում ծագող խնդիրների լուծման շկուցություն և օպերատիվություն</p>	<p>3. ողջ ուսումնական տարվա ընթացքում</p>

ԳՊԴ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

		<p>3.3. որևէ ուսումնական խմբում նույն օրվա ընթացքում միևնույն դասախոսի երկրորդ և հաջորդական մուտքերի ըստ հնարավորին բացառում</p> <p>3.4. դասաժամի լիարժեք և արդյունավետ անցկացում</p> <p>3.5. սեմինար և գործնական պարապմունքները ըստ հնարավորին փոքր խմբերով կազմակերպում</p> <p>3.6. ամբիոնների աշխատանքի և միջամբիոնային համագործակցության համակարգում</p> <p>3.7. ֆակուլտետի խորհրդի և դեկանատի նիստերի պարբերական գումարում, որոշումների կատարման վերահսկում</p> <p>3.8. ուսումնական խմբերի ավագների հետ աշխատանքների համակարգում, դասամատյանների վարման գործում բացթողումների և անժտությունների բացառում</p>		
4.	<p>Դասատվության արդյունավետության բարձրացում</p>	<p>4.1. դասախոսության թելադրման պրակտիկայի իսպառ բացառում</p> <p>4.2. չբացառելով գիտելիքի մատուցման գործոնը՝ դասի ընթացքում ուսանողի վերլուծական, դատողական ունակությունների զարգացման կարևորում, գիտելիքը օգտագործելու կարողությունների ու հմտությունների ծնավորում՝ դասը վարելով քննարկումներով, հարց ու պատասխանով, խնդիրներ առաջադրելով ու դրանց լուծումները գտնելով և այդ ամենը զուգորդելով հանգամանալից մեկնաբանություններով</p> <p>4.3. դասատվության ընթացքում դիդակտիկ նյութերի, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիական միջոցների օգտագործում</p>	<p>4. ուսանողների կողմից ուսումնական ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր թեմայի համակողմանի ըմբռնում և խորը իմացություն, թեմայի շուրջ դատողություններ անելու ունակություն, ձեռք բերված գիտելիքները գործնականում գործադրելու հմտություն</p>	<p>4. ողջ ուսումնական տարում</p>

ԳԴԴ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

5.	Ուսումնական գործընթացի, գիտելիքների նկատմամբ ուսանողների հետաքրքրության աճի ապահովում	<p>5.1. առարկայական օլիմպիադաների, վիկտորինաների, բանավեժերի կազմակերպում</p> <p>5.2. ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում</p> <p>5.3. ուսումնական յուրաքանչյուր խմբում որևէ գրողի ստեղծագործությունների համակողմանի քննարկումների անցկացում</p> <p>5.4. բնագավառի հայտնի գիտնականների հրավիրում և հրապարակային դասախոսությունների կազմակերպում</p> <p>5.5. դասախոս-ուսանող էլեկտրոնային հաղորդակցման մշակույթի ներդրում</p> <p>5.6. ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու հարցում ուսանողին մեթոդական հիմնավոր աջակցության ցուցաբերում</p>	5. ուսանողների՝ ավելի շատ գիտելիքներ ունենալու և դրանք դրսևորելու ծգտում, գիտելիքի դերի և կարևորության ըմբռնում	5.1. յուրաքանչյուր ամիս 5.2., 5.3., 5.4. կիսամյակում մեկ անգամ 5.5. 2011-2012 ուսումնական տարվա առաջին կիսամյակից սկսած 5.6. միշտ
6.	Ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացում	<p>6.1. յուրաքանչյուր առարկայի գծով թերացող ուսանողների ցուցակի կազմում և նրանց ուսման գործընթացի մշտադիտարկում ամբիոնների և դեկանատի կողմից</p> <p>6.2. յուրաքանչյուր առարկայից թերացող ուսանողին անհատական առաջադրանքների հանձնարարում և կատարման ստուգում՝ գրանցում կատարելով հատուկ մատյանում</p> <p>6.3. թերացող ուսանողներին հետաքրքրաշարժ, գիտահանրամատչելի բնույթի առաջադրանքների հանձնարարում</p> <p>6.4. անհրաժեշտության դեպքում ուսանողի առաջադիմության հարցի քննարկում նրա ծնողի հետ</p>	6. թերացող ուսանողների մոտ ուսման հանդեպ անտարբերության վերացում, պատասխանատվության զգացումի և ուսումնական հետաքրքրությունների ձևավորում	6. ողջ ուս. տարվա ընթացքում

ԳՊԴ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

7.	<p>Ուսումնական արդյունքների ստուգման և գնահատման արդյունավետության բարձրացում</p>	<p>7.1. յուրաքանչյուր դասընթացի բնույթից ելնելով՝ ստուգման տարբեր եղանակների /թեստ, գրավոր աշխատանք, բանավոր հարցում/ կիրառում և արդյունքների համադրում 7.2. անհատական աշխատանքների դերի մեծացում՝ դրանց պաշտպանության անցկացման միջոցով 7.3. միջանկյալ ստուգումների անցկացում թեստային եղանակով, իսկ գրավոր աշխատանքի ձևով անցկացնելու դեպքում՝ հարցացուցակներում տրամաբանական, վերլուծական բնույթի հարցերի ընդգրկումով 7.4. ամփոփիչ ստուգման բազմագործոն գնահատման համակարգում հաժախումների կշիռը ամբիոնի նշած շրջանակներում ինքնուրույն որոշելու հնարավորության տրամադրում դասախոսին՝ ելնելով յուրաքանչյուր դասընթացի յուրահատկություններից 7.5. ամփոփիչ ստուգումների օբյեկտիվությունն ապահովելու նպատակով այդ գործընթացում նաև մագիստրատուրայի ուսանողների ընդգրկում 7.6. ավարտական աշխատանք կատարող ուսանողների համար տվյալ առարկայից բուհական ավարտական բանավոր քննության անցկացում 7.7. ԳՊԴ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների հետևողական ծանոթացում և կիրառում</p>	<p>7. գիտելիքների ստուգման և գնահատման օբյեկտիվություն, ուսանողի կատարած աշխատանքի արժևորում, գործընթացի թափանցիկություն, կոռուպցիոն ռիսկերի բացակայություն</p>	<p>7.1.-7.5. ողջ ուսումնական տարվա ընթացքում 7.6. երկրորդ կիսամյակի սկզբում</p>
8.	<p>Ուսանող երիտասարդության հայրենասիրական, քաղաքացիական, բարոյական, հոգևոր-մշակութային որակների զարգացում</p>	<p>8.1. հայրենասիրական դասերի, գիտահանրամատչելի, գրական-գեղարվեստական, երաժշտական, հումորային տարաբնույթ միջոցառումների կազմակերպում, քաղաքացիական ակտիվ դիրքորոշման ձևավորում</p>	<p>8. ուսանողի մոտ մարդկային բարձր որակների, լայն աշխարհայացքի, հարուստ ներաշխարհի, կիրթ վարվելակերպի ձևավորում</p>	<p>8. ուսումնական տարվա ընթացքում</p>

ԳՊԴ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

		<p>8.2. բարեգործական ձեռնարկումների անցկացում</p> <p>8.3. մարզի և հանրապետության նշանավոր մարդկանց հետ հանդիպումների կազմակերպում</p>		
9.	Արտաֆակուլտետային գործունեության ծավալում	<p>9.1. Համահամալսարանական, ինչպես նաև ԳՊԴ առանձին ֆակուլտետների ուսանողության համար բանասիրական բնույթի գիտահանրամատչելի, գրական-գեղարվեստական, մրցութային միջոցառումների կազմակերպում</p> <p>9.2. մարզի և հանրապետության այլ ուսումնական, գիտակրթական ու մշակութային հաստատությունների, լրատվության միջոցների հետ համագործակցության ծավալում</p> <p>9.3. ուսանողների ծնողների հետ պարբերական հանդիպումների կազմակերպում, ծնողական խորհրդի ձևավորում և ուսումնական գործընթացի բարելավման ուղղությամբ այդ խորհրդի առաջարկությունների քննարկում ֆակուլտետի խորհրդի նիստում</p> <p>9.4. ֆակուլտետի շրջանավարտների հավաքի կազմակերպում, շրջանավարտների խորհրդի ձևավորում, որակի բարձրացման ուղղությամբ այդ խորհրդի առաջարկների քննարկում</p> <p>9.5. գործատուների հետ, ավարտական ամփոփիչ քննություններից գործատուների մասնակցության կազմակերպում</p>	<p>9. ուսանողների պատասխանատվության աճ, գիտելիքների, մշակութի կրողի հոգեբանության ձևավորում, կրթական որակի բարձրացման ուղղությամբ հասարակական կարծիքի և պահանջարկի հաշվառում</p>	<p>9.1.-9.2. ուսումնական տարվա ընթացքում</p> <p>9.3. կիսամյակում երկու անգամ</p> <p>9.4. նոյեմբերի կեսերին</p> <p>9.5. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում</p>

ԳՊՀ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

10.	Ուսանողների շրջանում ինքնուրույն հետազոտական հմտությունների զարգացում	10.1. ուսանողական գիտական կրեդիտային կազմակերպում 10.2. դասախոս-ուսանող համատեղ գիտահետազոտական աշխատանքների կատարում 10.3. մագիստրատուրայի ուսանողների հետազոտական աշխատանքների ընթացքի պարբերական քննարկում 10.4. գիտական սեմինարներից ուսանողների ներգրավում	10. ուսանողների մոտ հետազոտական աշխատանքի նկատմամբ հետաքրքրության աճ, հետազոտվող նյութը վերլուծելու, եզրահանգումներ կատարելու ունակությունների զարգացում	10.5. ուսումնական տարվա ընթացքում
-----	---	--	--	-----------------------------------

Հաստատված է ֆակուլտետի խորհրդի՝ 2011թ. հոկտեմբերի 8-ի նիստում:

Վ. Լ. ԿՍՏՎԱԼՅԱՆ
ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ղեկան

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Սասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	22	4	8	68,18
2-րդ	36	14	7	50,00
3-րդ	31	0	7	80,65
4-րդ	22	0	6	72,73
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	10	6	2	40,00
2-րդ	16	5	2	56,25
3-րդ	13	2	1	38,46
4-րդ	20	-	4	65,00
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	29	10	4	58,62
2-րդ	27	8	4	59,26
3-րդ	30	7	4	56,67
4-րդ	44	13	10	45,45
ԸՆԴԱՄԵՆՆԸ	300	69	59	58,33
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	7	0	6	85,71
2-րդ	8	0	5	87,50
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	10	0	5	80,00
2-րդ	9	0	5	100
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	4	0	2	50,00
2-րդ	6	0	0	33,33
ԸՆԴԱՄԵՆՆԸ	44	0	23	77,27

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Սասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակլավրիատ				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	22	3	2	77,27
2-րդ	36	4	3	66,67
3-րդ	31	0	8	83,87
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	10	0	2	100
2-րդ	16	3	3	56,25
3-րդ	13	6	1	46,15
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	29	10	3	58,62
2-րդ	28	3	4	75,00
3-րդ	30	2	4	60,00
ԸՆԴԱՄԵՆՆՐ	215	31	30	68,84
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	7	0	6	85,71
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	9	0	4	66,67
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	4	0	2	100
ԸՆԴԱՄԵՆՆՐ	20	0	12	80,00

2010/2011 ՈՒՄ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ծեռնարկ	Ուսումնամեթոդական ծեռնարկ	Գորված	Ձեկուցումների թեզիս
3	2	3	6	45	2

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 4

ՀԱՅՈՑ ԼԵՉՎԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Համբարձումյան Վազգեն Գուրգենի, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Կատվալյան Վիկտոր Լիպարիտի - ԲՖ դեկան, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Ասոյան Թաթուլ Արտիկի - բանասիրական գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
3. Խանդանյան Սիրանուշ Կառլենի - ասիստենտ
4. Վարդանյան Գայանե Լևիկի - ասիստենտ
5. Սարգսյան Ռուզաննա Մարատի - ասիստենտ
6. Ղազարյան Օլգա Ալբերտի - դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Ալեքսանյան Թամարա Կարապետի - մանկավարժական գիտ. թեկնածու
6. Հակոբյան Ռ. Խ. Նկատառումներ սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի հասկացության և էության վերաբերյալ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 446-457:

7. Հակոբյան Ռ. Խ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31.1-րդ, 34-րդ հոդվածների մեկնաբանություններ // Հայաստանի Հանրապետու-

թյան Սահմանադրության մեկնաբանություններ, Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Զարությունյանի, Ա. Վաղարշյանի, էջ 380-388; 422-430, Երևան: Իրավունք, 2010:

8. Հակոբյան Ռ. Խ. Սահմանադրական պատասխանատվության օրենսդրական աղբյուրները Հայաստանի Հանրապետությունում, ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N13, 2011:

9. Խաչատրյան Ա. Զ. Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի իրավական կարգավիճակի սահմանադրական ամրագրման մի քանի հարցերի շուրջ // ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 458-471:

10. Խաչատրյան Ա. Զ. Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրների սահմանադրական ամրագրումը // ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 471-490:

11. Խաչատրյան Ա. Զ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ, 48-րդ, 70-րդ, 79-րդ, 80-րդ և 83.4-րդ հոդվածների մեկնաբանություններ // Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Զարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, 2010, էջ 526-534, 542-562, 715-720, 761-770, 800-811:

12. Խաչատրյան Ա. Զ. Հայաստանի հարկերի համակարգը. իրավաքաղաքական և պատմատեսական ակնարկ (հին շրջանից մինչև 1918) // ՀՀ ԳԱԱ Պատմաբանասիրական հանդես, 2010 N 2(84), էջ 53-69:

13. Խաչատրյան Ա. Զ., Խաչատրյան Զ. Ա. Պատգամավորական հարցման և հարցապնդման սահմանադրաիրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում // «Մանց» համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, 2010, էջ 206-216:

14. Խաչատրյան Ա. Զ. աչատրյան Զ. Ա. Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանային գործունեության հիմնահարցերը ՀՀ Սահմանադրության 70-րդ հոդվածի մեկնաբանությունների շրջանակում // «Մանց» համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, 2010, էջ 197-206:

15 Խաչատրյան Ս. Ա. Լեզվաբանությունը և լեզվաբանությունը՝ որպես իրավունքի ներքին օբյեկտիվ հատկանիշներ // ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 496-507:

16. Խաչատրյան Ս. Ա. Զրադաշտական իրավունքի ճանաչման աղբյուրները // ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 507-517:

17. Խաչատրյան Ս. Ա. Համեմատական իրավագիտություն դասընթացի վերաբերյալ իրավագիտության և այլ ֆակուլտետների մագիստրատուրայի ուսանողների ու դասախոսների համար մեթոդական ցուցումներ, Երևան, 2011:

18. Խաչատրյան Ս. Ա. Խոսքով Երրորդ Մեծի և Տիրիդատ Երրորդ Մեծի թագավորելու ժամանակի հարցը (քննություն իրավաբանական հետազոտման մեթոդի միջոցով), ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N13, 2011:

19. Ապրոյան Ա. Յ. Երեխայի իրավական կարգավիճակի զարգացման պատմությունը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 533-546:

20. Ապրոյան Ա. Յ. Անչափահասների քրեական պատասխանատվության առանձնահատկություններն արտասահմանյան որոշ երկրներում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N12, 2011:

21. Մուրադյան Մ. Ա. Իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման և ընդունման գործընթացը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 547-555:

22. Մուրադյան Մ. Ա. Մ. Նալբանդյանի իրավաքաղաքական հայացքները // Ազգային գաղափար, Երևան, 2010:

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ **Ամիրխանյան Սամվել Գրիգորի,**
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

Դեկանի տեղակալ՝ **Հերզոյան Սարիամ Նորիկի,**
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
080300	Ֆինանսներ
081500	Հաշվապահական հաշվառում
080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում

Մասնագիտացումներ՝ տնտեսագետի

Ուսանողների թիվը՝ 341
Շրջանավարտների թիվը՝ 114

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2010-2011 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ 2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՉԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ԳՊԴ տնտեսագիտական ֆակուլտետում 2010-2011 ուսումնական տարվա աշխատանքները ուղղված էին ֆակուլտետի զարգացման հայեցակարգի դրույթների կենսագործմանը, ինչպես նաև տարվա ընթացքում համալսարանի գիտխորհրդի և ռեկտորատի ընդունած որոշումների և դրանցից բխող միջոցառումների իրականացմանը՝ ուղղված ուսանողների առաջադիմության բարձրացմանը և ուսման որակի ապահովմանն ու բարելավմանը: Հաշվետու ուսումնական տարին առանձնահատուկ էր նրանով, որ տնտեսագիտական ֆակուլտետի բակալավրիատի բաժիններում ընդունված 16 ուսանող հնարավորություն ունեցան առաջին անգամ սովորելու պետական բյուջեի միջոցների հաշվին, այդ թվում՝ ֆինանսներ բաժնում՝ 5, հաշվապահական հաշվառում բաժնում՝ 6, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնում՝ 5 ուսանողներ: Մյուս առանձնահատկությունը այն էր, որ ավարտում էր բակալավրիատի բաժիններում կրեդիտային համակարգով սովորած շրջանավարտների առաջին սերունդը:

Դեկանատը և ամբիոնները հիմնական ուշադրությունը հատկացրել էին ուսումնական գործընթացի մշտադիտարկմանն ու վերլուծությանը, որի արդյունքում ունեցանք հետևյալ ցուցանիշները. հաշվետու տարում տնտեսագիտական ֆակուլտետում սովորում էին 351 ուսանողներ, այդ թվում՝ բակալավրիատում՝ 312, մագիստրատուրայում՝ 39:

Առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքներով տնտեսագիտական ֆակուլտետի՝ բակալավրիատի բաժիններում սովորող ուսանողների ուսման բացարձակ առաջադիմությունը կազմել է 67.6%, երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքներով՝ 63.4%, իսկ մագիստրատուրայում այն կազմել է 100%: Այսպիսով, ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը 66.7% էր, ինչը նախորդ տարվանից ցածր է 12.4%-ով (նախորդ տարի այն կազմել է 77.3%): Նման ցուցանիշը կարելի է վերագրել որակի ապահովման հանդեպ ընդհանուր պահանջկոտությանը:

Առաջադիմությունը առաջին կուրսերում ըստ կիսամյակների կազմել է՝ 60 % և 61.9%, երկրորդ կուրսերում՝ համապատասխանաբար՝ 72.7% և 66.2%, երրորդ կուրսերում՝ 66.3% և 63.4%, չորրորդ կուրսերում, միայն առաջին կիսամյակում՝ 67.6%:

Առաջադիմության նվազումը հիմնականում տեղի է ունեցել առաջին և չորրորդ կուրսերում, քանի որ երկրորդ կուրսերում այն մնացել է նույն մակարդակին:

Ըստ մասնագիտությունների, առաջադիմությունը ունի հետևյալ պատկերը.

ԳՊԴ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

«Ֆինանսներ» մասնագիտության երկրորդ կուրսում առաջադիմությունը բարձրացել է 6.3%-ով՝ նախորդ ուսումնական տարվա համեմատ, իսկ առաջին և երրորդ կուրսերում նվազել է 28-30%-ով: «Ֆինանսներ» մասնագիտության 1-ին կուրսում պատճառը կրեդիտային համակարգի գնահատման կարգի մեջ փոփոխություն մտցնելն էր, այն է՝ միջանկյալ քննությունների վերահանձնում չթույլատրելը:

«Հաշվապահական հաշվառում» մասնագիտության երկրորդ կուրսում առաջադիմությունը մնացել է նույնը, իսկ առաջին և երրորդ կուրսերում՝ նվազել համապատասխանաբար 2.1%-ով և 25.7%-ով:

«Չեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության առաջին կուրսում առաջադիմությունը աճել է 40%-ով և կազմել 100%: Երկրորդ և երրորդ կուրսերում այն նվազել է համապատասխանաբար 17.4%-ով և 8.4%-ով:

Հաշվետու տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանին մասնակցել են բակալավրիատի բաժնի 205 և մագիստրատուրայի բաժնի 20 ուսանողներ:

Բակալավրիատի բաժնի ուսանողներից դրական գնահատական է ստացել 150 ուսանող, իսկ անբավարար գնահատական՝ 99 ուսանող:

Մագիստրատուրայի ուսանողներից դրական գնահատական է ստացել 20 ուսանող:

Ներկայացնենք ուսանողների առաջադիմությունն՝ ըստ միջին որակավորման գնահատականների.

2010-2011 ուս. տարում ըստ մասնագիտությունների և կուրսերի ձևավորված ՄՈԳ-ը համապատասխան սանդղակներով

Կուրսերն ըստ մասնագիտությունների	1.7-2.9	3.0-3.5	3.6-4.0
	ուսանողների թիվը	ուսանողների թիվը	ուսանողների թիվը
Ֆինանսներ 1-ին	11	4	10
Ֆինանսներ 2-րդ	11	3	20
Ֆինանսներ 3-րդ	14	5	17
Հաշվապահական հաշվառում 1-ին	1	1	6
Հաշվապահական հաշվառում 2-րդ	6	6	8
Հաշվապահական հաշվառում 3-րդ	17	3	15
Չեռնարկությունների տնտ. և կառ. 1-ին	-	-	7
Չեռնարկությունների տնտ. և կառ. 2-րդ	9	2	9
Չեռնարկությունների տնտ. և կառ. 3-րդ	10	4	4

ՄՈԳ-ի ամենաբարձր ցուցանիշը ապահովել են «Ֆինանսներ» մասնագիտության 2-րդ կուրսը (20 ուսանող), «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության 3-րդ կուրսը (15 ուսանող) և «Ֆինանսներ» մասնագիտության 1-ին կուրսը (10 ուսանող): «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության 7 ուսանող ապահովել է 3.6-4.0 միջին որակական գնահատական (ուսանողների 100%-ը):

Նվազագույն ՄՈԳ գրանցեցին երկու ուսանող՝ «Ֆինանսներ» մասնագիտության առաջին և «Հաշվապահական հաշվառում» առաջին կուրսերից:

Քննաշրջանն առարկայական պարտքերով փակած ուսանողները լուծարային շրջանում պարտքերը հանձնեցին, սակայն այդ վերահանձնումները միշտ չէ, որ ընթանում են պատասխանատվության բարձր զգացումով: Որոշ ուսանողներ վարժվել են պարտք ունենալուն և քննությունները հանձնեցին ձգձգվող ժամկետներում: Եզրակացությունն այն է, որ դեկանատը, ամբիոնները, դասախոսները պետք է միջոցներ ձեռնարկեն և ուսանողի վարքագծում փոփոխություններ մտցնեն: Առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում 4 ուսանողներ լուծարային շրջանում իրենց առարկայական պարտքերը չհանձնելու պատճառով հեռացվեցին համալսարանից, իսկ երկրորդ կիսամյակում հեռացվեցին 2 ուսանողներ:

Ակադեմիապես թույլ ուսանողների հետ դասախոսները պետք է իրականացնեն անհատական աշխատանք, գիտելիքների ստուգման յուրաքանչյուր փուլի արդյունքները քննարկեն ամբիոնում:

Լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների հաճախումներին ինչպես ռեկտորատի, այնպես էլ դեկանատի և դասախոսների կողմից: Ամենօրյա հաշվառման արդյունքում որոշ ուսանողներ ենթարկվել են վարչական պատասխանատվության (նկատողություն, խիստ նկատողություն): Այս հանգամանքը նպաստում է կարգապահության ամրապնդմանն ու բարձրացմանը: Շատ ուսանողներ փոխել են իրենց վարքագիծը՝ ապահովելով կարգապահություն և առաջադիմության բարձրացում:

2010-2011 ուսումնական տարվա երկու կիսամյակների քննաշրջանների արդյունքներով ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի առաջին կուրսի երեք մասնագիտություններում, համաձայն գործող կարգի, անցկացվեց անվճար տարկետման իրավունքով տեղերի փոխատեղման մրցույթի արդյունքների ամփոփում: Արդյունքում երեք ուսանողներ ցուցաբերեցին ցածր առաջադիմություն և իրենց տեղը զիջեցին ավելի բարձր առաջադիմությամբ համակուրսեցիներին: Մագիստրատուրայում անվճար սովորողները ցուցաբերել են բարձր առաջադիմություն և փոխատեղում չի արձանագրվել:

Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանությունը, ինչպես նաև ավարտական ամփոփիչ ատեստավորումը անցկացվել են 2011թ. մայիս ամսին՝ սահմանված կարգով:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներն ընդհանուր առմամբ գոհ էին ուսանողների գիտելիքներից: Հանձնաժողովների նախագահների դիտողություններն ու առաջարկությունները քննարկվել են համապատասխան ամբիոն-

ԳՊԴ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

ներում և կազմվել է համապատասխան միջոցառումների ծրագիր: Այն քննարկվել է ֆակուլտետի խորհրդում և ռեկտորատի նիստում: Նշված միջոցառումների իրականացումը այժմ ընթացքի մեջ է, ինչը կնպաստի 2012 թվականի ամփոփիչ ատեստավորումը արդյունավետ կազմակերպելուն:

Ավարտական ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են բակալավրիատի բաժնի 95 ուսանողներ, այդ թվում`

- «Ֆինանսներ» մասնագիտությամբ - 41 ուսանող,
- «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ - 29 ուսանող,
- «Բիզնեսի կազմակերպում» մասնագիտությամբ - 25 ուսանող:

Նախորդ տարվա 2 շրջանավարտների, որոնք անբավարար էին ստացել, թույլատրվել է մասնակցելու ավարտական ամփոփիչ ատեստավորմանը: Նրանք ևս ապահովեցին դրական արդյունք:

Հաշվետու տարում բակալավրիատի բաժնի «Ֆինանսներ և վարկ» մասնագիտությամբ ավարտեց 43 ուսանող, այդ թվում` գերազանցության դիպլոմով` 14 ուսանող: «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտությամբ ավարտեցին 29 ուսանողներ, այդ թվում` գերազանցության դիպլոմով` 6 ուսանող: «Բիզնեսի կազմակերպում» մասնագիտությամբ ավարտեց 25 ուսանող, այդ թվում` գերազանցության դիպլոմով` 6 ուսանող: «Բիզնեսի կազմակերպում» 4-րդ կուրսի 3 ուսանողներ չեն մասնակցել ավարտական ամփոփիչ ատեստավորմանը:

Ամփոփիչ ատեստավորման արդյունքները

Բաժինը		Ուսանողների թիվը	A+	A	A-	B+	B	B-	C+	C	C-	F
Ֆինանսներ և վարկ /բակալավր/	Ամփոփիչ քննություն I	41	9	4	11	4	3	-	1	4	5	-
	Ամփոփիչ քննություն II	15	-	1	2	-	1	2	1	2	6	-
	Ավարտական աշխատանք	26	12	6	5	3	-	-	-	-	-	-
Ֆինանսներ /մագիստրատուրա/	Մագիստրոսական քնն	8	6	1	-	1	-	-	-	-	-	-
Հաշվապահական հաշվառում և աուդիտ /բակալավր/	Ամփոփիչ քննություն I	29	1	7	2	2	4	1	-	6	6	-
	Ամփոփիչ քննություն II	14	-	-	-	1	1	-	4	5	3	-
	Ավարտական աշխատանք	15	1	7	3	1	3	-	-	-	-	-
Հաշվապահական հաշվառում /մագիստրատուրա/	Մագիստրոսական քնն	5	-	1	3	1	-	-	-	-	-	-
Բիզնեսի կազմակերպում /բակալավր/	Ամփոփիչ քննություն I	28	-	6	3	1	-	3	2	4	7	2
	Ամփոփիչ քննություն II	15	-	-	-	-	1	2	4	5	-	3
	Ավարտական աշխատանք	13	-	5	4	-	1	-	1	-	-	-
Չեղմանակառուցվածների տնտեսագիտություն և կառավարում /մագիստրատուրա/	Մագիստրոսական քնն	5	-	3	-	1	-	-	-	-	-	1

Հաշվետու ժամանակաշրջանում ուսանողների շարժը ֆակուլտետում

	I կիսամյակ		II կիսամյակ		Ընդամենը
	թվալսյալի	մագիստրատուրա	թվալսյալի	մագիստրատուրա	
Զորակոչվել է բանակ	4	2	7	7	20
Զորացրվել է բանակից	12	2	4	-	18
Տեղափոխվել է ԳԴԴ տնտեսագիտական ֆակուլտետ այլ ֆակուլտետներից	15	-	-	-	15
Տեղափոխվել է ԳԴԴ տնտեսագիտական ֆակուլտետից այլ ֆակուլտետ	-	-	-	-	-
Տեղափոխվել է ԳԴԴ տնտեսագիտական ֆակուլտետից այլ ԲՈՒՅ	-	-	-	-	-
Տեղափոխվել է այլ բուհից/քոլեջից/ ԳԴԴ տնտեսագիտական ֆակուլտետ	4	-	-	-	4
Դեռացվել է ԳԴԴ-ից	6	5	6	3	20
Վերականգնվել է	1	-	6	-	7
Ստացել է տարկետում	3	2	1	-	6

Հաշվետու ժամանակաշրջանում դեկանատի ուշադրության կենտրոնում է եղել ամբիոնները դասախոսական կադրերով համալրման և կայունության ապահովման խնդիրը: Դասախոսական կադրերի ընտրության գործում գերապատվությունը տրվում է որակյալ մասնագետներին: Դասախոսների փորձն ու գործնական հատկանիշները ևս կարևորվում են: Դասախոսական կազմին տեղյակ ենք պահում որակի ապահովման հիմնական կառուցակարգերին, տարբեր երկրներում կիրառվող արդյունավետ միջոցներին, որպեսզի կարողանանք բարձրացնել կրթության որակը:

Ֆակուլտետի դասախոսները կատարել են նաև գիտահետազոտական աշխատանք, տպագրել գիտական հոդվածներ, զեկուցումներով հանդես եկել գիտաժողովներում: Բուհական համակարգը համատեղում է կրթությունը և գիտությունը, ուստի մեր խնդիրներից մեկն էլ համարում ենք ամբիոններում գիտահետազոտական և մեթոդական աշխատանքների շարունակական ընթացքի ապահովումը: Ուստի, դասախոսների գիտական աշխատանքները հետախուսու ևս պետք է խթանել:

Ֆակուլտետի դասախոսները մասնակցում են արտահամալսարանական դասընթացներին, ինչը քիչ դեր չունի նրանց հետաքրքրությունների զարգացման գործում:

Առանձին դասախոսներ մասնակցեցին Վիվա-Սել ընկերության կազմակերպած «Նախագծերի կառավարում» թեմայով դասընթացներին: 2011 թվականի հունիսի 3-ին տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս. Գ. Ամիրխանյանը մասնակցեց «Համայնքային զարգացման ուղիներ» ծրագրի շրջանակներում «Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության» ծրագրին:

Գոհունակությամբ նշենք, որ վերջին տարիներին ակտիվացել է ուսանողների շարժունակությունը և այժմ տնտեսագիտական ֆակուլտետից երեք ուսանողներ ուսանում են եվրոպական բուհերում: Անգլիայի Շեֆիլդ համալսարանի Յուրիստանի մասնաճյուղի միջազգային ֆակուլտետում սովորում է մագիստրատուրայի «Ֆինանսներ» 2-րդ կուրսի ուսանողուհի Անի Մազմանյանը, Սալոնիկի տեխնոլոգիական համալսարանում՝ «Ֆինանսներ» 2-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Յովեյանը, և Մեծ Բրիտանիայի Միացյալ թագավորության Սվանսի մետրոպոլիտենի համալսարանում՝ «Ֆինանսներ» 3-րդ կուրսի ուսանող Բարկեն Ղարաբաղյանը: Արտերկիր մեկնելու նպատակ ունեցող ուսանողներին պետք է կողմնորոշել դեպի անգլերեն լեզվի իմացությունը և այդ գործին հնարավորինս նպաստել:

Տնտեսագիտական ֆակուլտետի ղեկանատը, ամբիոնների հետ միասին, պրակտիկայի կազմակերպումը նպատակաուղղում են ուսանողների մասնագիտական ունակությունների շարունակական և հետևողական զարգացմանը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: Տարեցտարի ընդարձակվում է պրակտիկայի վայրերի աշխարհագրությունը: Ի տարբերություն նախորդ տարիների, այս տարի պրակտիկայի կազմակերպման գործընթացը սկսվել է ավելի վաղ՝ հաշվի առնելով կազմակերպությունների հետ ակտիվ աշխատանքի անհրաժեշտությունը: Նախորդ տարիների փորձը ցույց է տալիս, որ լուրջ անելիքներ ունենք նախադիպլոմային պրակտիկայի անցկացման գործում: Ահա թե ինչու հաշվետու ժամանակաշրջանում կարևորվել է չորրորդ կուրսերի նախադիպլոմային պրակտիկան, որն անցկացվում է ողջ կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի ընթացքում ձգտում ենք ուսանողի մեջ ձևավորել գործնական հատկանիշներ:

Կարևոր ենք համարում խթանել գիտելիքներ ձեռք բերելու ուսանողների հակումը, ինչին կարող են նպաստել տարաբնույթ միջոցառումները, ինտելեկտուալ մրցույթները, ցերեկույթները և այլն: Ավանդույթ է դարձել ֆակուլտետում բազմաբնույթ ուսուցողական, տեղեկատվական, զեղագիտական, դաստիարակչական միջոցառումների կազմակերպումը:

2011թ. ապրիլ ամսին կազմակերպվեց «Կրթական նորագույն տեխնոլոգիաներ» թեմայով քննարկում:

Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողները ակտիվորեն մասնակցում են տարբեր կազմակերպությունների կողմից հայտարարված մրցույթների և արժանանում մրցանակների: «Ֆինանսներ» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Արմինե Արտակի Ասատրյանը և «Ֆինանսներ» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Սաթենիկ Ռաֆիկի Մարտիրոսյանը մասնակցել են 2011թ. փետրվարի 1-ից մարտի 10-ն անցկացված Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի կողմից հայտարարված «Ի՞նչ արժեք ունեն Հայաստանի անտառները» և «Ինչպե՞ս կարող է Հայաստանի կառավարությունը հաղթահարել վերջին տնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները» ակնարկների մրցույթին և արդյունքում արժանացել մրցանակի:

Համալսարանի ռեկտորատը, ղեկանատը մշտապես մտահոգվում են ուսա-

նողների սոցիալական խնդիրներով: Ներկայումս 13 ուսանողներ օգտվում են Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամի կրթաթոշակից: Երկու ուսանողներ օգտվել են «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի կրթաթոշակից և մեկ ուսանող՝ «Թուրփանջյան ընտանեկան» հիմնադրամի կրթաթոշակից:

Հետևողական աշխատանքներ են տարվում ուսանողներին զանազան մրցույթներում և ծրագրերում ներգրավելու, ինչպես նաև ծրագիր կազմելու հմտություններ ձևավորելու ուղղությամբ:

Ներկայումս խիստ կարևորվում են աշխատաշուկա մուտք գործող շրջանավարտների ոչ միայն տեսական գիտելիքները, այլև գործնական հմտություններն ու կարողությունները:

Տնտեսագիտական ֆակուլտետի 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի կարևորագույն ուղղությունը համարում ենք ուսումնական ծրագրերի իրականացման վերջնարդյունքների հնարավորինս կանխատեսումը: Դեկանատի, ամբիոնների համար ուղենիշային է այն հարցը, թե ծրագրերի ավարտին ինչ պիտի գիտենա, կարողանա և տիրապետի շրջանավարտը:

Արդի կրթական համակարգը դասախոսակենտրոն մոտեցումից ապահովում է անցումը դեպի ուսանողամետ ուսուցում: Հայեցակարգում նախատեսում ենք ուսանողին հնարավորինս նախապատրաստել իր ապագա մասնագիտական գործունեությանը: Մենք նախատեսում ենք շրջանավարտների, գործատուների և դասախոսների խորհրդակցությունների կազմակերպում, որոնց մասնակից պետք է դառնան ուսանողները:

Կրթական վերջնարդյունքների հաշվառումը ենթադրում է մոտեցումների փոփոխություն նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներում:

Կրթական վերջնարդյունքների մշակման գործընթացում նախատեսում ենք ընդգրկել տնտեսագետ մասնագետներին, գործարարներին և գործատուներին:

2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգում, վերոնշյալից բացի, առաջնահերթ ենք համարում հետևյալ ուղղությունները.

- Ուսանողները պետք է տիրապետեն մասնագիտական խոր գիտելիքների:
- Դասախոսները պետք է ուղղորդեն ուսանողի կողմից տեղեկատվություն ձեռք բերելու և վերլուծելու աշխատանքները:
- Դասապրոցեսի ընթացքում ուսանողը պետք է տրամաբանորեն և հետևողականորեն ներկայացնի յուրացված գիտելիքը, նոր տեղեկատվությունը ընկալի և մեկնաբանի ընդհանուր մասնագիտական համատեքստում:
- Մագիստրատուրայի ուսանողները դասախոսի օգնությամբ պետք է տիրապետեն հետազոտության նորագույն մեթոդներին, գիտենան նորագույն տեսությունները և դրանց մեկնաբանությունները:
- Անհրաժեշտ վերջնարդյունքների ձեռք բերման գործում կարևորում ենք ուսանողի պատասխանատվության ստանձնումը իր հետագա գործունեության համար:

Նախատեսված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է համախմբել ամբիոնների ուժերը, հաշվի առնել դասախոսների իրական կարողություններն

ու մասնագիտական ներուժը:

Դասախոսը պետք է տիրապետի ուսանողին ակտիվացնելու, գիտելիքների պահանջ ձևավորելու մեթոդներին:

Ամբիոնները պետք է ծրագիր մշակեն՝ ելքային պատշաճ արդյունքների կանխատեսման ու ձևավորման համար: Նախատեսում ենք անցկացնել որակի դասեր, նպատակ ունենալով՝

- ուսանողների օգնությամբ սահմանել «որակ» հասկացությունը,
- հստակեցնել որակի գործոնները,
- ծանոթացնել որակի կառավարման տեսությանը:

Դասախոսները պետք է նոր գաղափարներ առաջադրեն և ուսանողներին համախմբեն դրանց շուրջ: Որակի ապահովման գործընթացի շահագրգիռ մասնակիցը ուսանողներն են, որոնք պետք է դրսևորեն գիտակից վերաբերմունք:

Մագիստրատուրայում շեշտը դրվում է կիրառական հետազոտություն կատարելու վրա: Մագիստրոսական թեզի թեմաները պետք է լինեն արդիական և հեռանկարային:

Կարևորվում է մեթոդական աշխատանքը: Ուսանողին ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու գործում պահանջվում է մեթոդական հիմնավոր աջակցության ցուցաբերում: Անհրաժեշտ է կարևոր տեղ հատկացնել տեսամեթոդներին:

Խնդիր ենք դնում պարբերաբար անցկացնել զրույցներ, «կլոր սեղաններ», քննարկումներ և բանավեճեր, որոնց մասնակից կդառնան ուսանողները և փորձառու դասախոսները:

Փոփոխություններ պետք է մտցնել դասախոսությունների որակի և անցկացման ձևերի մեջ: Դասախոսությունը պետք է ունենա կուռ, տրամաբանական կառուցվածք, հարուստ բովանդակություն: Դասախոսը պետք է բացատրի առարկայի առավել կարևոր մասերը և ուսանողներին մղի ինքնուրույն աշխատանքի:

Ամբիոնների ուշադրությունը հատկացվում է դասախոսությունների այնպիսի ակտիվ ձևերի կիրառմանը, ինչպիսին են.

- հիմնախնդրային դասախոսություն,
- դասախոսություն՝ կոնկրետ իրավիճակների քննարկմամբ,
- դասախոսություն- երկխոսություն,
- դասախոսություն՝ գործնական ուսուցման մեթոդների հետ համակցված:

Վերջնարդյունքների ձեռքբերման նպատակով խիստ կարևոր է ուսանողների մեջ ինքնավերահսկման հմտությունների ձևավորումը:

Ամբիոնների առջև խնդիր է դրվում՝

- հետևել տնտեսագիտության և դրա ճյուղերի արդի փոփոխություններին, ուսումնասիրել արտասահմանյան համալսարանների համապատասխան մասնագիտությունների ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը, դրանք հաշվի առնել նոր ուսումնական տարում,

- կազմակերպել փորձի փախադարձ ուսումնասիրում և տարածում,

- կապեր հաստատել համապատասխան մասնագիտությունների գծով աշխարհի հայ դասախոսների հետ,

- համագործակցել ուսանողների և դասախոսների փոխանակման, առարկա-

յական և ուսումնական պլանների մշակման, կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: Դասախոսները պետք է ծանոթ լինեն առաջատար եվրոպական համալսարաններում որակի ապահովման կառուցակարգերին:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ուսանողական գիտական ընկերության գործունեությանը, որն արդեն որոշակի առաջընթաց է արձանագրել: Ֆակուլտետի ամբիոնները պետք է աջակցեն ՈւԳԸ-ին:

Չափազանց կարևոր է դասախոսների և ուսանողների կողմից գիտական հոդվածների նախապատրաստումը, համատեղ հետազոտությունների կատարումը:

Ֆակուլտետի ցածր առաջադիմությամբ ուսանողների հետ հարկավոր է կատարել անհատական աշխատանք, կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություն:

Անհրաժեշտ է ակտիվացնել ակադեմիական խորհրդատուների աշխատանքը: Կրթության բնագավառի ներկա փոփոխությունները հնարավոր չէ առանց հասարակական պատշաճ ընկալումների: Ֆակուլտետում նախատեսվող փոփոխությունները պետք է նախապես ընկալելի լինեն ուսանողների, դասախոսների, ծնողների, գործատուների համար: Ուստի, անհրաժեշտ է կատարել բացատրական աշխատանք, ուստարվա ընթացքում կազմակերպել հավաքներ, ծնողների հետ հանդիպումներ և ակտիվորեն համագործակցել ծնողական համայնքի հետ:

Ֆակուլտետի շրջանավարտը, լավ մասնագետ լինելուց բացի, պետք է լինի հարուստ հոգեկան աշխարհ ունեցող անձ, ուստի անհրաժեշտ է նպաստել ուսանողների հոգևոր-մշակութային և գեղագիտական զարգացմանը, այս ուղղությամբ մշակել և իրականացնել միջոցառումների ծրագիր:

Մշտապես պետք է հետևել ուսանողների կողմից կարգապահական կանոնների կատարմանը:

Ֆակուլտետում պետք է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ որակյալ կրթություն ապահովելու, կիրթ և բազմակողմանի զարգացած մարդ դաստիարակելու համար:

Տնտեսագիտական ֆակուլտետում կրթության որակի բարձրացման կառուցակարգերը

2011-2012 ուսումնական տարում տնտեսագիտական ֆակուլտետի համար առաջնահերթություն է կրթության որակի բարելավումը, ուստի՝

1. Դեկանատը, ամբիոնները պետք է կարևորեն կրթության որակի բարելավման անհրաժեշտությունը՝ որպես ֆակուլտետի մրցունակության անհրաժեշտ պայման, իսկ ուսանողները՝ գիտակցեն գիտելիքի դերը՝ որպես շուկայական հարաբերությունների պայմաններում մասնագիտական կայացման գրավական:

Կրթության որակը որոշվում է ուսուցման և ուսման բովանդակային հատկանիշների ու ցուցանիշների համակցությամբ, ինչը գիտելիքը դարձնում է պիտանի՝ հաշվի առնված նրա վրա կատարած հասարակական ծախսերը և գիտելիքի՝ որպես արժեքի բերած եկամուտները:

ԳՊԴ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

2. Ֆակուլտետում հստակեցվում է որակի վերահսկողության և կառավարման մեխանիզմը՝ այն դիտարկելով որպես զարգացման ռազմավարության իրական հիմք:

3. Ուսանողները որակյալ կրթություն կստանան, եթե գիտելիքները լոկ տեսական չլինեն, այլ շաղկապվեն իրենց կիրառության ոլորտների հետ և ներառեն նաև գործնական հմտություններն ու կարողությունները:

4. Գիտելիքների համակարգը պետք է խարսխվի անձի արժեքային համակարգի վրա, իսկ կրթական ծրագիրը պետք է նպատականշվի այդ պահանջի իրականացմանը:

h/h	Որակի բարձրացմանը նպաստող գործոններ	Նախատեսվող միջոցառումներ	Ակնկալվող արդյունքը
1	Ուսուցումը կազմակերպել ժամանակակից տեխնոլոգիաներից համապատասխան: Ենթաընտրել ուսուցման ձևերն ու մեթոդները:	Կիրառած մեթոդների վերաբերյալ դասախոսի հաշվետվություն ամբիոնում: Պարասպունքները հազեցնել զմեական մյուսերով, օգտագործել էլեկտրոնային լուսապատկերներ (սլայդներ), ալյուսակներ, դիագրամներ, գծապատկերներ, համակարգչային թեստեր, դասախոսությունների տարբերակներ և այլն:	Փոփոխվող, արդիական ուսումնական մեթոդների, տեսողական մյուսերի հարուստ պաշարի առկայություն:
2	Դասընթացը պետք է դարձնել գրավիչ, դասախոսը պետք է նախապես իմանա դասախոսության ներգործության և ուսանողների ընկալման աստիճանը:	Գրավչություն չափանիշը պարզությունը և հստակությունը է, ճշգրտությունը, մատուցման հետաքրքիր ձևերը: Դարձնում ուսանողների շրջանում՝ դասախոսության գրավիչ լինելու վերաբերյալ: Դասախոսը ստուգում է իր դասախոսության ազդեցությունը՝ հարցերի, պրոբլեմների առաջադրման և լուծման միջոցով:	Դասախոսությունների գործնական հատույցի ապահովում, կայուն գիտելիքների հարողորում, գրավչություն և ճշգրտություն:
3	Ֆակուլտետում պետք է գործի որակի երաշխավորված, կառավարվող համակարգ և «Examination year» համակարգի միջոցով ուսանողները պետք է ինքնուրույն գնահատեն իրենց գիտելիքները:	Ուսանողը պետք է իմանա իր գիտելիքների, կարողությունների չափը: Կազմակերպել փորձնական ստուգում, որտեղ ուսանողը գնահատի իր իմացությունը:	Որակի երաշխավորում, որակի կառավարման համակարգի առկայություն: Ուսանողի կողմից իր գիտելիքների գնահատում:
4	Ստուգումը, վերլուծությունը և գնահատումը դարձնել մշտական գործընթաց, արդյունքները դարձնել կանխատեսելի: Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել ընթացիկ վերլուծություն (օրինակ՝ միջանկյալ քննությունների արդյունքների վերլուծություն) և հաշվի առնել մշտադիտարկման արդյունքները:	Դեկանատը ամբիոնների հետ մեկտեղ ստուգում, վերլուծում և գնահատում է քննությունների, առանձին դասախոսի աշխատանքի արդյունքները: Միջանկյալ քննությունների հարցատոմսերը լրացնել տրամաբանական բնույթի հարցերով, խոսափել ընդհանուր հարցադրումներից:	Քննությունների արդյունքների ապահովման հստակ եղանակների առկայություն: Քննությունների գործնական մասի տեսակարար կշռի բարձրացում:
5	Կարևորություն տալ արևելակյաներին, դասավանդման մտազմնական և գործնական եղանակներին: Ավարտական ատեստավորման քննական տոմսերում առաջադրել գործնական լուծումներ պահանջող հարցեր: Դասախոսությունների ընթացքում հանձնարարել արևելակյան առաջադրանքներ և դրանց նկատմամբ առաջացնել մշտական հետաքրքրություն: Կիրառել ուսուցման գործնական ձևեր, խաղեր: «Գիտելիքը հարկավոր է կյանքում» սկզբունքի կիրառում:	Պրակտիկայի վայրը ընտրել մասնագիտական ուղղությանը համապատասխան: Պրակտիկայի վայրից ընտրել ուսանողների հետ տարվող աշխատանքի կողմնատոր: Պրակտիկայի վայրում լրացնել ուսանողի օրվա աշխատանքի մատյանը: Պրակտիկ պարասպունքները գնահատել ամեն օր: Պրակտիկայի վայրում կազմակերպել ամբիոնների վարիչների, արևելակյանների ու հիմնարկության ղեկավարների հանդիպում-քննարկումներ:	Պրակտիկաների կարևորում, արևելակյան ընթացքում մասնագիտական կարողությունների ռեալ ձևավորում: Պրակտիկան կծավորի մասնագիտական կոմպետենցիաներ, կնախապատրաստի աշխատանքի:

ԳԴԴ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

6	<p>Ուսանողը պետք է գնահատվի գիտելիքների արժեքը, մշտապես ձգտի գիտելիքին, լավ իմանա, որ ուսուցանման պրոցեսում բացթողումը կորուստ է: Առաջադիմության ցուցանիշների վերլուծություն յուրաքանչյուր կուրսում: Ուսանողի գիտակցական մակարդակի և պատասխանատվության աճ: Ուսանողի մեջ ձևավորել կիրառական հմտություններ: Ուսանողը պետք է կարևորի ինքնուրույն աշխատանքը ու անհատական աշխատանքը:</p>	<p>Կոնկրետ օրինակով ցույց տալ հաշվապահի, ֆինանսիստի և մեքենայի աշխատանքի կարևորությունը ու պիտանիությունը: Ուսանողը պետք է հանդիպի լիարժեք դնորած մասնագիտության շուկայական պահանջին: Անցկացնել կլոր սեղան «Ուսանողը ինչպես է արդարացում իր կոչումը» թեմայով: Ուսանողը ուսումնառության ընթացքում պետք է հետևի ելքային արդյունքների չափորոշիչներին: Իսկ դասախոսը պետք է հետևի, թե ուսանողը ինչ է գիտեցում, կարողանում և ինչի է տիրապետում:</p>	<p>Ուսանողի կողմից գիտելիքի արժևորում, հաղորդվող գիտելիքների որակի գնահատում, շուկայական պահանջի մշտական գիտակցում:</p>
7	<p>Դասախոսությունները մախապես տրամադրել ուսանողներին, դասախոսությանը զուգահեռ ամցկացնել թեմայի քննարկում, բանավեճ և արդյունքների ամփոփում: Դասախոսությունների ընթացքումը մախապես մղել ուսանողի վերլուծական ունակությունների զարգացմանը: Ուսանողները պետք է կարողանան խնդիր տարբեր տեսանկյուններից դիտարկել, կողմնորոշվել տարբեր եզրակացությունների մեջ և հիմնավորել մախընտրած եզրահանգումը:</p>	<p>Յուրաքանչյուր դասախոս համակարգում ներկայացնում է դասախոսությունը: Ուսանողը պարտադիր կարող է և ներկայանում պարապմունքի: Չկարողացած ուսանողները գործնական պարապմունքի ընթացքում չեն գնահատվում: Գործնական գնահատական մշակել արտաժամյա հարցումով: Կազմակերպել դասախոսների երկխոսություն՝ բանավեճ ուսանողների ներկայությամբ, որպեսզի նրանք իմանան տարբեր եղանակներ, և նրանց մեջ ձևավորվի բազմակարծություն:</p>	<p>Դասախոսությունից օգտվելու ինքնուրույնություն, ուսանողների թիմային աշխատանքի, բանավեճելու հատկությունների ձևավորում, բազմակարծության ապահովում: Դասախոսություն-երկխոսություն մեթոդական տեսակի օգտագործում:</p>
8	<p>Չեղել ուսանողի օրվա ժամանակացույցին, նրա ինքնուրույն աշխատանքին, մասնագիտական զրականությունից, համացանցից, ամսագրերից օգտվելու: Չազեցած ուսանողական առօրյայի ապահովում: Խրախուսել ակտիվ, մախածեռնող, գործունյա ուսանողին:</p>	<p>Ուսանողը պետք է լրացնի ժամաժախսի և կարողացած ամսագրերի, մասնագիտական զրականության վերաբերյալ թեքիկ և անհրաժեշտության դեպքում ներկայացնի դեկլամատ:</p>	<p>Ուսանողը կշռապատվի հոգատարությամբ, ձեռք կերի ժամանակը արդյունավետ ծախսելու փորձ, պարտադիր կօգտվի մասնագիտական զրականությունից:</p>
9	<p>Զննությունների մախապատրաստումը պետք է ընթանա դասախոսների և ուսանողների միջև փոխըմբռնման և արդյունավետ հաղորդակցության պայմաններում: Ուսանողները ոչ միայն պետք է ծանոթ լինեն հարցաշարին, այլև պատասխաններին, հիմնահնդիրներին: Զննության գործընթացը դառնում է ուսանելի:</p>	<p>Չարցատմաներում ընդգրկել միայն դասախոսի կողմից պարզաբանում ստացած հարցեր: Զննությունից առաջ կազմակերպել հարցերի քննարկում: Գրավոր աշխատանքները ոչ միայն գնահատել, այլև համառոտ վերլուծել և վերլուծությունը ներկայացնել ուսանողներին:</p>	<p>Զննությունը կդառնա դասախոսների և ուսանողների միջև լիարժեք հաղորդակցության ու փոխըմբռնման միջոց: Ուսանողը կգիտակցի քննության, գիտելիքի կոնկրետ մշակությունը:</p>
10	<p>Դասախոսը ուսանողին մոտենում է որպես որոշակի գիտելիքներ ունեցող անձի, և քննությունը մախակաուղղվում է այդ գիտելիքների քաջահայտմանը: Չիմնական մախտակը գիտելիքի ստուգումն է, վերլուծելու, ուսանողի կողմից եզրահանգումներ կատարելու կարողությունների գնահատումը: Օբյեկտիվ գնահատումը ոգևորում է ուսանողին և մղում նոր գիտելիքների ձեռքբերմանը:</p>	<p>Ամբիոնները պետք է անդրադառնան կրթության գործնական և հետազոտական խնդիրների իրականացման եղանակների մշակմանը: Անմիջապես վերաժել պրակտիկ հետազոտությունների պարապմունքների: Ամբիոնները պետք է մշակեն պրակտիկ պարապմունքների վարման ուղեցույցեր: Միջակայք քննությունները կազմակերպել ելնելով առարկաների առանձնահատկություններից: Ուսանողին առաջադրել գործնական հաշվարկներ, որոնցով պարզ կդառնան նրա գործնական հմտությունները:</p>	<p>Գործնական պարապմունքների վարման ուղեցույցերի առկայություն: Ամբիոններում: Ուսանողները կկարողանան կատարել գործնական հաշվարկներ, պրակտիկայից քիտող վերլուծություններ, կլուծեն գործնական այլ խնդիրներ:</p>

ԳՊՀ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

11	<p>Դիպլոմային և անհատական աշխատանքների նախապատրաստման ընթացքում ուսանողը պետք է կարողանա ինքնուրույն հետազոտություն կատարել: Ուսանողը պետք է գիտակցի արտագրության ու գրագրության վնասակար ազդեցությունը: Արգելվում է գրագրությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է մշել աղբյուրն ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի: Գրագրության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո:</p>	<p>Դիպլոմային աշխատանքի դեկավարը պետք է պատշաճ կատարի իր պարտականությունը: Նա պետք է հետևի կատարման ժամանակացույցին: Ամբիոնում ջնջարկման ներկայացնել կատարման ընթացքի վերաբերյալ հարցեր: Ընդդիմախոսությունը կատարել դրավով, բացառել այս գործում տեղ գտած ձևականության դեպքերը:</p>	<p>Ուսանողի ինքնուրույն հետազոտական աշխատանքի կատարում: Ամբիոնների կողմից այս ուղղությամբ տարվող աշխատանքի ծրագրի առկայություն: Ուսանողը կիրառելի արտագրությունից և գրագրությունից, անհատական աշխատանքը կրթառնա իրոց ինքնուրույն աշխատանք:</p>
12	<p>Ուսանողի մեջ պետք է ձևավորվեն հասարակությանն անհրաժեշտ քաղաքացիական հատկանիշներ: Անհրաժեշտ է ուսանողին օգնել՝ հասկանալու, որ այսօրվա գիտելիքը վաղվա աշխատանքի երաշխիքն է, ինչպես նաև ուսանողի մեջ արմատավորել պատշաճ մարդկային, քաղաքացիական որակներ:</p>	<p>Անցկացնել միջոցառումներ, համդիպումներ, բարձրացնել պրակտիկաների արդյունավետության մակարդակը: Դանդիպումներ գործատուների հետ: Կլոր սեղանների կազմակերպում: Այցելություններ ձեռնարկություններ: Դանդիպումներ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, իրավաբանների հետ:</p>	<p>ԲՈՒԳ-ը ավարտելուց հետո շրջանավարտը օժտված կլինի մարդկային պատշաճ որակներով և քաղաքացիական հատկանիշներով:</p>
13	<p>Օտար լեզուները պետք է կարևորվեն: Դրանք հարկավոր են գիտելիք ձեռք բերելու, հետազոտության և հաղորդակցության շարունակական հմտություններ ունենալու համար:</p>	<p>Օտար լեզուների ուսուցման մեջ մերդնել գործնական եղանակներ, սովորեցնել տնտեսագիտական տերմիններ, ձևավորել մասնագիտական բառապաշար:</p>	<p>Կնպաստի ուսանողների շարժումականության ակտիվացմանը, օտար լեզվով հաղորդակցվելուն, կօգնի աշխատանքում կառավարման հմտությունների դրսևորմանը:</p>

Ս. Գ. ԱՄԻՐՆԱՆՅԱՆ
ԳՊՀ տնտեսագիտական
ֆակուլտետի դեկան

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Սասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ				
1-ին	28	15	11	46.4
2-րդ	35	7	13	80.0
3-րդ	35	11	19	68.6
Ֆինանսներ և վարկ				
4-րդ	43	10	22	76.7
Հաշվ. հաշվառում				
1-ին	9	2	2	77.8
2-րդ	20	5	2	70.0
3-րդ	35	13	8	62.9
Հաշվ. հաշվ. և աուդիտ				
4-րդ	28	5	10	82.1
Չեռնարկ. տնտ. և կառ.				
1-ին	8	1	1	87.5
2-րդ	22	8	6	63.6
3-րդ	19	6	8	68.4
Բիզնեսի կազմ.				
4-րդ	30	16	9	43.3
Ընդամենը	312	99	111	67.6
Մագիստրատուրա				
Ֆինանսներ				
1-ին	7	-	5	100
2-րդ	7	-	5	100
Հաշվ. հաշվառում				
1-ին	8	-	8	100
2-րդ	5	-	2	100
Չեռն. տնտես. և կառ.				
1-ին	7	-	5	100
2-րդ	5	-	4	100
Ընդամենը	39	-	29	100

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Սասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակլավրիատ				
Ֆինանսներ				
1-ին	26	11	8	50.0
2-րդ	34	9	10	67.6
3-րդ	36	9	8	58.3
Հաշվ. հաշվառում				
1-ին	9	1	5	66.7
2-րդ	20	-	2	65.0
3-րդ	35	1	13	60.0
Ձեռն. տնտես. և կառ.				
1-ին	7	-	3	100
2-րդ	20	5	7	65.0
3-րդ	18	1	-	61.8
ԸՆԴԱՄԵՆՆՐ	205	37	56	63.4
Մագիստրատուրա				
Ֆինանսներ				
1-ին	5	-	5	100
Հաշվ. հաշվառում				
1-ին	8	-	8	100
Ձեռն. տնտես. և կառ.				
1-ին	7	-	4	100
ԸՆԴԱՄԵՆՆՐ	20	-	17	100

2010/2011 ՈՒՄ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱՎԿԵԼ ԵՆ

Դասագիրք	Անագորություն	Ուսումնական ծեռնարկ	Ուսումնամեթոդական ծեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	1	-	12	-

Ֆակուլտետում գործող ամբիոններ թիվը` 3

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ **Կարապետյան Վարազդատ Ազատի,**
տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ դոցենտ

ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Սովսեյան Դավիթ Մերուժանի - տնտեսագիտության թեկնածու,
ԳՊՀ դոցենտ
2. Խաչատրյան Գայանե Արտիկի - դասախոս, լաբորանտ
3. Մուրադյան Գուրգեն Գևորգի - ասիստենտ
4. Հերզնյան Մարիամ Նորիկի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Հարությունյան Հարություն Սարգսի - տնտեսագիտության թեկնածու,
ԳՊՀ պրոֆեսոր
2. Խաչատրյան Հակոբ Հայկի - տնտեսագիտության թեկնածու,
ԳՊՀ պրոֆեսոր
3. Սերգոյան Գեղամ Պարույրի - տնտեսագիտության հայցորդ
4. Ծատրյան Քրիստինե Վլադիկի - դասախոս
5. Խչեյան Մակիչ Համլետի - տնտեսագիտության թեկնածու,
ԳՊՀ դոցենտ

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղական և տարածքային տնտեսական զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Սենագրություն	Ուսումնական ծեռնարկ	Ուսումնամեթոդական ծեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	3	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հերգնյան Մ. Ն., Մանուկյան Է. Պ.** Փոքր և միջին բիզնեսի դերն աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունն ապահովելու գործում // ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 12, 2010:

2. **Խաչատրյան Գ. Ա.** Հարկային բարեփոխումների դերը պետական բյուջեի եկամուտների ձևավորման համատեքստում // ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 12, 2010:

3. **Սերգոյան Գ. Պ.** Բանկերի և ապահովագրական ընկերությունների համագործակցությունը // ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածու, N 12, Երևան, 2010:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՄԲՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Ղուլոյան Հակոբ Մելսիկի,*
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊԴ պրոֆեսոր

ՊՐՈՋԵՍՏՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Խլղաթյան Իշխան Երեմի** - տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր
2. **Առաքելյան Վալերի Հովհաննեսի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
3. **Ղաջոյան Կարինե Համլետի** - դասախոս
4. **Գաբրիելյան Նազելի Էդիկի** - դասախոս, լաբորանտ
5. **Քոլոզյան Արմինե Ռաֆիկի** - լաբորանտ

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Ամիրխանյան Սամվել Գրիգորի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊԴ պրոֆեսոր
2. **Այրումյան Իրինա Գագիկի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊԴ պրոֆեսոր
3. **Սարգսյան Պարգև Սուրիկի** - դասախոս
4. **Եղիազարյան Սամվել Ռադիկի** - դասախոս
5. **Հակոբյան Անահիտ Ալեքսանի** - դասախոս
6. **Մարգարյան Հասմիկ Անդրանիկի** - ասիստենտ
7. **Դանիելյան Նաիրա Ռուբենի** - դասախոս
8. **Օհանյան Այծեմիկ Վաղարշակի** - դասախոս
9. **Աղամյան Արմեն** - դասախոս

10. Խանդանյան Նաիրա Մելիքի - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության տնտեսագիտական վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակման և կատարելագործման հիմնախնդիրները:

բ) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) կառավարման մեթոդների, մեխանիզմների, գործիքների և տեխնոլոգիաների մշակման և կատարելագործման հիմնական ուղղությունները:

գ) Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի մեթոդոլոգիայի և կազմակերպման կատարելագործման հիմնահարցերը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	1	4	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Այրումյան Ի. Գ. Մեթոդական ցուցումներ - «Ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն և գնահատում» առարկայից, կուրսային աշխատանքներ գրելու վերաբերյալ, Երևան, ՀՊԱՀ, 2010թ. ՀՊԱՀ-ի տպարան, Տերյանի փողոց 74:

2. Առաքելյան Վ. Հ., Մարգարյան Հ. Ա., Սուքիասյան Հ., Սիմոնյան Մ. Վենչուրային ֆիրմաների դերը նորամուծությունների կառավարման գործընթացում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 12, 2010:

3. Առաքելյան Վ. Հ., Սուքիասյան Հ., Դոնոյան Ա., Սիմոնյան Մ. Նորամուծական գործընթացի ֆինանսական աղբյուրների ձևավորման մի քանի հարցեր // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 12, 2010:

4. Առաքելյան Վ. Հ., Մարգարյան Ա. Ա., Մելքոնյան Ա. Ա. Կազմակերպության մրցակցային ռազմավարության մշակման արդի հիմնախնդիրները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 12, 2010:

5. Դանիելյան Ն. Ռ. Ներքին աուդիտի դերը պետական ներքին ֆինանսական հսկողության համակարգում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 12, 2010:

**ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ**

Ամբիոնի վարիչ՝ **Ջաքոյան Հրաչյա Սամվելի,**
տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Հովակիմյան Ռազմիկ Ռուբենի - տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Նավասարդյան Անթ Ալֆրեդի - դասախոս
3. Բազոյան Սոնա Սահակի - դասախոս
4. Հակոբյան Սաթենիկ Վարդանի – լաբորանտ

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Բարսեղյան Արմինե Վահագնի - մանկավարժական գիտությունների թեկնածու
2. Շահինյան Վարդուհի Էդիկի - ասիստենտ
3. Թադևոսյան Նարինե Հակոբի - ասիստենտ
4. Հովեյան Աստղիկ Գագիկի - դասախոս
5. Կիրակոսյան Երեմ Լյովայի - դասախոս

**ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման հնարավորությունները ՀՀ մարզերում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	5	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Закоян Г. С. Нынешнее состояние и возможности улучшения деятельности фермерских хозяйств Республики Армения // Материалы конференции Ташкентского государственного аграрного университета, Ташкент, 2011, УДК 631.15.017.3, 2010:

2. Հակոբյան Ս. Վ. Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռի ազդեցության վերլուծությունը գնաճի և տնտեսության մրցունակության վրա 1999-2010թթ.:

3. Հակոբյան Ս. Վ. Դրամավարկային քաղաքականության մոդելների արդյունավետության գնահատումը Հայաստանի Հանրապետությունում՝ տնտեսության իրական հատվածի հետ կապի տեսանկյունից, 2010:

4. Թադևոսյան Ն. Հ. Ջարգացող երկրների տնտեսությունների վրա ձեռնարկատիրության և հասարակության փոխազդեցության գնահատումը և այն կատարելագործելու ուղիները, 2010:

5. Թադևոսյան Ն. Հ. Հայկական օղու շուկայի զարգացումները և առկա հիմնախնդիրները, 2010:

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
031000	Հայոց լեզու և գրականություն
032400	Ռուսաց լեզու և գրականություն
030400	Պատմություն (իրավունքի հիմունքներ)
020400	Աշխարհագրություն
051100	Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)
030500	Իրավագիտություն
081500	Հաշվապահական հաշվառում

Մասնագիտացումներ՝ Բանասեր. Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ
Բանասեր. Ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ
Պատմաբան. Պատմության ուսուցիչ
Աշխարհագրագետ. Աշխարհագրության ուսուցիչ
Տարրական դասարանների ուսուցիչ
Իրավագիտություն
Տնտեսագետ

Ուսանողների թիվը՝ 1061

Շրջանավարտների թիվը՝ 169

ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՖՎԿՈՒՆԵՏԻ 2010-2011 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ 2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

2010-2011 ուսումնական տարում ԳՊԴ հեռակա ուսուցման ֆակուլտետում կրթական գործընթացը կազմակերպվել է՝ համաձայն ուսումնական պլանների, համալսարանում գործող կանոնակարգերի, նախապես հաստատված ժամանակացույցերի: Հաշվետու ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ուսանողների առաջադիմությունը նախքան լուծարային շրջանը կազմել է 77,1%, իսկ 2-րդ կիսամյակում՝ 58%: Առաջադիմության էական տարբերությունն՝ ըստ կիսամյակների, պայմանավորված է քննաշրջաններում քննությունների թվի տարբերությամբ: Առաջին կիսամյակում ֆակուլտետի առաջին կուրսերում առաջադիմությունը կազմել է 62%, երկրորդ կիսամյակում՝ 40.2%, իսկ ավարտական կուրսերում՝ 87%: Առաջադիմության ամենացածր ցուցանիշը գրանցվել է իրավագիտություն մասնագիտության առաջին կուրսում՝ 28.5%, իսկ ամենաբարձրը՝ 100%, ռուսաց լեզու և գրականություն բաժնի չորրորդ, պատմություն, աշխարհագրություն, տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա բաժինների հիմնգերոդ կուրսերում: Մասնագիտական ամբիոնները դեկանատի կողմից ստացել են առաջարկ՝ ներկայացնելու համապատասխան կառուցակարգեր ուսանողների ուսման առաջադիմությունը բարձրացնելու նպատակով:

2010-2011 ուսումնական տարում նպատակային տեղերում ընդունվել է 9-ը ուսանող, նրանցից 8-ը Գեղարքունիքի մարզից են, 1-ը՝ Տավուշի: Նրանց հետ կնքվել են եռակողմ պայմանագրեր: Ուսանողների պատշաճ կարգապահությունը և առաջադիմությունն ապահովվելու, հաճախումները բարձր մակարդակի վրա պահելու նպատակով դեկանատի կողմից կատարվել են հետևողական, կանոնակարգված աշխատանքներ: Հաշվետու ժամանակահատվածում անհարգելի բացակայությունների պատճառով նկատողություն է ստացել 229 ուսանող, խիստ նկատողություն՝ 56 ուսանող, դասերին չներկայանալու պատճառով համալսարանից հեռացվել է 34 ուսանող:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողները ամփոփիչ ատեստավորման քննություններին ցուցաբերեցին 83,1% առաջադիմություն: Ամփոփիչ ատեստավորման գործընթացի արդյունքներով կարմիր դիպլոմ շնորհվեց 1 շրջանավարտի, 39 ուսանողներ հեռացվեցին՝ ավարտական քննություններին բավարար գիտելիքներ չդրսևորելու պատճառով:

Հաշվետու ուստարում ուսանողների շրջանում շարունակվել են հարցումները, որոնք վերաբերվել են գիտելիքների գնահատման չափանիշներին, կրթական ծրագրերի ուսումնամեթոդական ապահովվածությանը, ռեկտորատի, դեկանատի, վարչատնտեսական անձնակազմի աշխատանքների գնահատմանը: Ուսանողներն ակտիվորեն մասնակցել են հարցումներին, այնուհետև հետևել

իրենց կողմից արված առաջարկությունների կատարմանը: Ստացված արդյունքները վերլուծվել են դեկանատում, ապա՝ նաև ռեկտորատում, ձեռնարկվել միջոցներ: Ուսանողները դեկանատում հայտնել են իրենց գոհունակությունը:

Հարցումներ են կազմակերպվել նաև շրջանավարտների շրջանում՝ համալսարանում ուսումնառությունից, կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից նրանց բավարարվածության վերաբերյալ: Դասընթացների օգտակարությունը մասնագիտական գործունեության մեջ շրջանավարտների 20%-ի կողմից գնահատվել է գերազանց, 40%-ի կողմից՝ լավ, 20%-ի կողմից՝ բավարար, 20%-ի կողմից՝ անբավարար: Համալսարանում ուսումնառության ընթացքում ուսանողների մասնագիտական կարողությունների ձեռքբերման, հաղորդակցման, կազմակերպչական և գործնական հմտությունների զարգացման նպատակով վերլուծվել են անցկացված հարցումների արդյունքները, և նշված պահանջ-մունքները բավարարելու համար ձեռնարկվել միջոցառումներ՝ ուսումնական պլաններում և առարկայական ծրագրերում փոփոխություններ կատարելու մասին:

Դասախոսական անձնակազմը համալրվել է որակյալ մասնագետներով:

Ուսուցման որակը բարձրացնելու կարևոր գործոններից է նաև ուսումնամեթոդական բազայի ապահովումը և դրա շարունակական համալրումը: Շարունակվում է հեռակա ուսուցման համակարգում սովորողների համար ուսումնամեթոդական ձեռնարկների պատրաստման և հրատարակման գործընթացը:

Հագեցած ուսանողական կյանքի ապահովման, ուսանողների գեղագիտական հայացքների ձևավորման, ուսանողների ազատ ժամանակը հետաքրքիր դարձնելու նպատակով (չնայած դասընթացների կարծատևությամբ) ուսանողների համար կազմակերպվում են գրական, գեղարվեստական միջոցառումներ, ուսանողները հանդես են գալիս բազմաթիվ նախաձեռնություններով: Համալսարանի ուսանողական գիտական ընկերության հետ համագործակցելով՝ ուսանողները կազմակերպեցին Գարեգին Նժդեհի ծննդյան 125-ամյակին նվիրված միջոցառում, որի ընթացքում ներկայացրեցին մեծ զորավարի խոհափիլիսոփայական հայացքները, կենսագրական ոչ հանրահայտ տվյալներ: Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողները մասնակցություն ունեցան մարտի 26-ին Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի լույս ընծայման 125-ամյակին նվիրված միջոցառմանը: Ֆակուլտետի ուսանողների կողմից կազմակերպված միջոցառումների վերաբերյալ դպրոցներից ստացել ենք դրական արձագանքներ, խրախուսանքներ: Այս առումով հատկանշական է հայոց լեզու և գրականության բաժնի 6-րդ կուրսեցիների կողմից կազմակերպված Գարեգին Նժդեհի ծննդյան 125-ամյակին նվիրված միջոցառումների շարքը:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի զարգացման հայեցակարգը ներառում է.

1. ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, թեմատիկ պլանների

նորացումը,

2. ուսումնամեթոդական ռեսուրսների բազայի մոնիթորինգն ու բարելավումը,

3. բուհ-ուսանողներ հետադարձ կապի ապահովումը, ուսանողների մասնակցությունը իրենց կրթական հետազոծի ձևավորմանը,

4. կրթության որակի վերաբերյալ ամբիոնների հաշվետվությունների կարևորումը, ամբիոններում կրթական ծրագրերի իրականացման ամենամյա մոնիթորինգը,

5. դասընթացների, կրթական ծրագրերի որակի, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի աշխատանքի որակի գնահատումը,

6. ուսանողների գործնական հմտությունների ձևավորումն ու զարգացումը, դասավանդման նոր, ինտերակտիվ մեթոդների, արդի մոտեցումների ներդրումը, գործնական հմտությունների ուսուցման նոր մեթոդիկայի կիրառումը,

7. ուսուցման գործընթացում ուսանողներին անհատական մոտեցմանը և նրանց ինքնուրույնության զարգացմանն ուղղված ուսուցման մեթոդների կիրառումը՝ հիմնված ուսանողների շրջանում սովորելու կարողությունների զարգացման վրա,

8. արտադրական, ուսումնական պրակտիկաների կարևորումը, պրակտիկաների բազաների ընդլայնումը, ուսումնական պլաններում պրակտիկաների համաչափ բաշխումը,

9. մանկավարժի որակավորմամբ մասնագիտությունների գծով մանկավարժական կրթության որակի բարելավման, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի նորացման, սեմինարների կազմակերպման նպատակով՝ ԿԳՆ կրթական ծրագրերի կենտրոնի, Կրթության ազգային ինստիտուտի, Գեղարքունիքի մարզպետարանի կրթության վարչության և դպրոցների տնօրենների հետ համագործակցության ակտիվացումը,

10. հաշվի առնելով հեռակա ուսուցման համակարգում ուսանողների տեղափոխությունների, երկրորդ մասնագիտություն ստացողների ինտենսիվ աճը՝ հեռակա ուսուցման համակարգում կրթական ծրագրերում նախատեսված դասընթացների գծով ուսանողների մուտքային գիտելիքների ստուգման նպատակով առարկայական տարբերությունների հանձնումը կատարել համակարգչային եղանակով,

11. ուսանողների համար անգլերեն լեզվի և համակարգչային դասընթացների կազմակերպումը,

12. ուսանողների համար էլեկտրոնային ուսուցման դասընթացների կազմակերպումը,

13. համալսարանական գործունեության մեջ հեռակա ուսուցման համակարգում սովորողների դերի բարձրացումը,

14. հեռակա ուսուցման համակարգում ուսուցանվող մասնագիտությունների ցանկի ընդլայնումը:

**ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում
կրթության որակի բարձրացման կառուցակարգեր
(2011-2012 ուսումնական տարվա համար)**

h/h	Հայեցակարգային խնդիրներ	Գործողություններ	Ակնկալվող արդյունքներ
1	Ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, թեմատիկ պլանների նորացում	Ուսումնական պլաններում բուն մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված դասընթացների ժամաքանակի ավելացում՝ ի հաշիվ ոչ մասնագիտական դասընթացների: Ուսանողների, շրջանավարտների, գործատուների շրջանում հարցումների անցկացում, հանրապետության բարձր վարկանիշ ունեցող բուհերի նույն մասնագիտությունների ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի վերլուծական համադրություն, կրթության բովանդակության հարստացում	Արդիական ուսումնական պլաններ, բարելավված առարկայական ծրագրեր, թարմացված թեմատիկ պլաններ, նոր ծրագրերի իրականացման արդյունքում՝ աշխատանքային կայուն ճյուղում ճյուղումակ շրջանավարտներ
2	Ուսումնամեթոդական ռեսուրսների բազայի ծրագրերի և բարելավում	Մասնագիտական անհրաժեշտ գրականության ցանկի ճշգրտում, ԳՊՀ գրադարանի ռեսուրսների հետ համադրում, անհրաժեշտ աշխատանքներ նոր գրականության ձեռքբերման, էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների ստեղծմանն ուղղված	Առկա ուսումնական ռեսուրսների և կրթական ծրագրերում նախատեսված անհրաժեշտ ռեսուրսների համապատասխանություն
3	Բուհ-ուսանողներ հետադարձ կապի ապահովում, ուսանողների մասնակցություն իրենց կրթական հետազոտի ձևավորմանը	Ուսանողների և շրջանավարտների շրջանում հարցումների անցկացում, դասընթացներում ուսանողների նախընտրելի թեմաների ընդգրկում, լրացուցիչ խորհրդատվական ծառայությունների մատուցում	Ուսանողների՝ կրթության նկատմամբ հետաքրքրության ավելացում, ուսանողների շրջանում կրթության բովանդակության պատվիրատուի և «սպառողի» մշակույթի ձևավորում
4	Ամբիոնների հաշվետվությունների կարևորում, ամբիոններում կրթական ծրագրերի իրականացման ամենամյա ծնոթերի և գրքերի	Կրթության որակի ապահովման խնդիրը մասնագիտական ամբիոններում համակողմանի քննարկում, վերլուծություն, զարգացման հայեցակարգային խնդիրների ձևակերպում, ուսումնական քննաշրջաններից հետո ամբիոնների հաշվետվությունների ներկայացում գիտխորհրդին	Նորացված կրթական ծրագրեր, կրթական ծրագրերի զարգացման և բարելավման գործընթացի ճիշտ ավանակում
5	Դասընթացների, կրթական ծրագրերի որակի, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի աշխատանքի որակի գնահատում	Շարունակել հարցումների անցկացումը՝ դասընթացների որակի, դասատվության գործընթացի, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի աշխատանքից ուսանողների բավարարվածության վերաբերյալ: Դասատուների, ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի ուսումնասիրություն, վերլուծությունների և եզրահանգումների կատարում	Որակյալ պրոֆեսորադասախոսական անձնակազմ, արդյունավետ ուսուցում և ուսումնառություն

ԳԴԴ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

6	<p>Ուսանողների գործնական հմտությունների ձևավորում և զարգացում, դասավանդման նոր, ինտերակտիվ մեթոդների, արդի մոտեցումների ներդրում, գործնական հմտությունների ուսուցման նոր մեթոդիկայի կիրառում</p>	<p>Առաջավոր փորձի փոխանակում, դասախոսների վերապատրաստումների և սեմինարների անցկացում, համապատասխան գրականության ձեռքբերում, ամբիոնների գրադարանները նորագույն գրականությամբ համալրում</p>	<p>Ուսանողների գործնական հմտությունների զարգացում, ուսուցման գործնական-կիրառական ուղղվածության ապահովում, աշխատաշուկայում պահանջարկ ունեցող շրջանավարտների թողարկում</p>
7	<p>Ուսուցման գործընթացում ուսանողներին անհատական մոտեցմանը և նրանց ինքնուրույնության զարգացմանն ուղղված ուսուցման մեթոդների կիրառում՝ հիմնված ուսանողների սովորելու կարողությունների զարգացման վրա</p>	<p>Ստուգողական աշխատանքների թեմաները, կատարման մեթոդիկան առավելապես հիմնել ուսանողների ինքնուրույն ուսումնասիրությունների, վերլուծությունների վրա, որպես ուսուցանող հանդես եկող դասախոսին վերապահել ուղղորդողի, կողմնորոշողի, խորհրդատուի և խթանողի դեր</p>	<p>Ուսանողների ինքնուրույնության զարգացում, գիտական նորույթներին իրազեկում</p>
8	<p>Արտադրական, ուսումնական արևելակյաների կարևորում, արևելակյաների բազաների ընդլայնում, ուսումնական պլաններում արևելակյաների համապատասխանում</p>	<p>Աշխատաշուկայի ուսումնասիրություն, գործատուների հետ համագործակցային հարաբերությունների, փոխշահավետ պայմանավորվածությունների ձեռքբերում, պայմանագրերի կնքում, ուսումնական պլանների վերանայում</p>	<p>Ուսանողների գործնական հմտությունների զարգացում, տեսական և գործնական ուսուցման զուգորդում</p>
9	<p>Մանկավարժի որակավորմամբ մասնագիտությունների գծով մանկավարժական կրթության որակի բարելավման, կրթական ծրագրերի իրականացման, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի նորացման, սեմինարների կազմակերպման, նպատակով՝ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոնի, Կրթության ազգային ինստիտուտի, Գեղարքունիքի մարզպետարանի կրթության վարչության և դպրոցների տնօրենների հետ համագործակցության ակտիվացում</p>	<p>Ակտիվացնել մանկավարժական բուհերի կոնսորցիումին ԳԴԴ մասնակցությունը, ձեռք բերել նոր պայմանավորվածություններ, կնքել նոր պայմանագրեր, նշված կազմակերպությունների հետ ձևակերպել համատեղ իրականացվող գործողությունների պլան</p>	<p>Դասընթացների նորացված առարկայական ծրագրեր, կրթական ծրագրերի արդիական ուսումնական պլաններ, դպրոց-բուհ կապի ամրապնդում</p>
10	<p>Դաշվի առնելով հեռակա ուսուցման համակարգում ուսանողների տեղափոխությունների, երկրորդ մասնագիտություն ստացողների ինտենսիվ աճը՝ հեռակա ուսուցման համակարգում կրթական ծրագրերում նախատեսված դասընթացների գծով ուսանողների մուտքային գիտելիքների ստուգման նպատակով առարկայական տարբերությունների հանձնումը կատարել համակարգչային եղանակով</p>	<p>Կրթական ծրագրերում 1-ին և 2-րդ կուրսերի համար նախատեսված դասընթացների գծով քննական թեստերի մշակում և «Examination-GSU» համակարգչային ծրագրի մեջ ներբեռնում</p>	<p>Անկողմնակալ, օբյեկտիվ քննությունների անցկացում, դասախոսների ծանրաբեռնվածության մեղմում, ժամանակի տնտեսում, ուսանողների պատասխանատվության բարձրացում</p>

ԳՊՀ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

11	Ուսանողների համար անգլերեն լեզվի և համակարգչային դասընթացների կազմակերպում	Կամավորության հիմունքներով ուսանողների ցուցակագրում, դասընթացի անցկացման ծրագրի ճշակում, դասընթացավարի ընտրություն, դասընթացների անցկացման ժամանակացույցի հաստատում	Ուսանողների օտար լեզվով հաղորդակցման հմտությունների կատարելագործում, համակարգչային գիտելիքների մակարդակի բարձրացում, ուսանողների ազատ ժամանակի ճիշտ կազմակերպում
12	Ուսանողների համար էլեկտրոնային ուսուցման դասընթացների կազմակերպում	Էլեկտրոնային ուսուցման հնարավորություններին իրազեկում, ուսանողներին կամավորության սկզբունքով ցուցակագրում, ժամանակացույցի հաստատում	Կրթական գործընթացում աստիճանաբար հեռավար (դիստանցիոն) ուսուցման տարրերի կիրառում, ուսանող-դասախոս էլեկտրոնային հաղորդակցման ակտիվացում, ուսանողների և դասախոսների ժամանակի տնտեսում
13	Համալսարանական գործունեության մեջ հեռակա ուսուցման համակարգում սովորողների դերի բարձրացում	Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողական խորհրդի համագործակցության ակտիվացում ստեղծման նպատակով ֆակուլտետների ուսխորհուրդների, ուսանողական գիտական ընկերության հետ, ինչպես նաև համալսարանում ընթացող բարեփոխումներին, իրականացվող ծրագրերին հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողների մասնակցության ապահովում	Առկա և հեռակա ուսանողական համակազմների համագործակցություն, հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողների պատասխանատվության աճ, ուսանողական կյանքի ակտիվացում
14	Հեռակա ուսուցման համակարգում ուսուցանվող մասնագիտությունների ցանկի ընդլայնում	Դեկավարվելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով՝ նախատեսված աշխատանքային պահանջարկ ունեցող բնագավառներում և բնօգտագործում, Կենսաբանություն, Քարտեզագրություն և կադաստրային գործ, Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա, Սերվիս, Դեղագործական քիմիա մասնագիտությունների գծով անհրաժեշտ փաստաթղթային փաթեթ, ապահովել համապատասխան ուսումնամեթոդական, նյութատեխնիկական բազա և դիմել ՀՀ Կրթության և գիտության նախարարություն՝ գործունեության թույլտվություն ստանալու նպատակով	Դիմորդների ներգրավում, ուսանողների քանակի ավելացում, տարածաշրջանի և ՀՀ այլ մարզերի բնակչության մասնագիտական կրթության պահանջների բավարարում

Ն. Ա. ԿՈՒՏՈՒՅԱՆ
ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԸ

ՉՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Սասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկ- ների թիվը	Առաջադի- մության %-ը
Հայրց լեզու և գրականություն				
1-ին	29	-	6	100
2-րդ	29	7	-	48,4
3-րդ	26	4	5	65,5
4-րդ	37	-	1	92,3
5-րդ	23	-	4	95,8
6-րդ	38	-	9	89,4
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	18	7	-	57,8
2-րդ	19	-	4	90
3-րդ	23	-	3	87,5
4-րդ	18	-	1	100
5-րդ	15	-	7	93,3
6-րդ	29	2	6	89,6
Պատմություն /իրավունքի հիմ./				
1-ին	59	-	13	93,4
2-րդ	51	1	-	85,9
3-րդ	50	18	6	52,9
4-րդ	47	8	2	76,5
5-րդ	32	-	10	100
6-րդ	46	-	10	97,8
Աշխարհագրություն				
1-ին	23	13	1	32
2-րդ	22	10	1	54,5
3-րդ	23	9	-	52,1
4-րդ	30	-	7	96,7
5-րդ	20	-	4	100
6-րդ	31	10	3	62,5
Մանկավարժություն և մեթոդիկա /տարր. կրթ./				
1-ին	36	1	-	92,1
2-րդ	35	2	3	86,4
3-րդ	22	-	3	91,3
4-րդ	33	1	5	96,9
5-րդ	18	-	2	100
6-րդ	31	1	3	90,6
Իրավագիտություն 1-ին	64	34	-	28,5
Հաշվապահական հաշվառում 1-ին	37	21	-	35,1
ԸՆԴԱՄԵՆԸ	1014	149	119	77,1

ԱՄՍՈՒՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին ձասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադի- մության %-ը
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	30	11	-	56,7
2-րդ	32	11	-	53,1
3-րդ	27	-	-	85,2
4-րդ	38	-	4	73,7
5-րդ	25	1	5	80
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	17	3	-	70,6
2-րդ	23	3	2	43,5
3-րդ	22	7	2	63,6
4-րդ	18	4	-	72,2
5-րդ	14	2	1	71,4
Պատմություն /իրավունքի հիմ./				
1-ին	59	42	-	16,9
2-րդ	54	9	-	40,7
3-րդ	44	15	-	35,4
4-րդ	45	18	-	48,9
5-րդ	33	1	4	78,8
Աշխարհագրություն				
1-ին	27	10	-	48,1
2-րդ	21	5	2	71,4
3-րդ	22	-	2	86,4
4-րդ	30	-	3	86,7
5-րդ	21	-	3	76,2
Մանկավարժություն և մեթոդիկա /տարր. կրթ./				
1-ին	39	7	1	69,2
2-րդ	36	7	1	63,9
3-րդ	22	3	-	81,8
4-րդ	33	-	4	97
5-րդ	18	2	1	77,8
Իրավագիտություն				
1-ին	59	30	1	30,5
Հաշվապահական հաշվառում				
1-ին	33	19	-	27,3
ԸՆԴՀԱՆՈՒՐ	846	210	36	58

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ Ղարիբյան Ալինա Ամբիկի

2010-2011 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանում Ակադեմիական քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ ԱՔՎ) իր գործունեությունը ծավալել է հետևյալ հիմնական ուղղություններով՝ բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններում ուսումնական գործընթացների կազմակերպում և համակարգում, համալսարանում կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի, ինչպես նաև առաջադրած նոր պահանջների իրագործում, ակադեմիական փաստաթղթերի լրացում, վերանայում, թարմացում:

Հաշվետու ժամանակահատվածում ԱՔՎ-ն իր աշխատանքները կազմակերպելիս ելակետ է ունեցել համալսարանում ուսումնական գործընթացի հիմնական նպատակը՝ կրթության որակի բարձրացումը և գործել է իր լիազորությունների շրջանակում:

2010-2011 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանում կարևորվել է ուսումնական ծրագրերի և պլանների նորացումն ու թարմացումը, ինչը ուսումնական գործընթացի որակի ապահովման պայմաններից է: Այս նպատակով բոլոր ամբիոնների, դեկանատների և ֆակուլտետային մեթոդիավորումների հետ մանրամասն ուսումնասիրվել և վերլուծվել են դեռևս նախորդ ուսումնական տարում ուսանողների, շրջանավարտների և գործատուների շրջանում վարչության կողմից կազմակերպված հարցումների արդյունքները: Արդյունքում՝ հաշվետու տարում Գավառի պետական համալսարանում ուսումնական գործընթացը մեկնարկեց բակալավրիատի և մագիստրատուրայի բարելավված ուսումնական ծրագրերով և պլաններով:

Ուսումնական տարվա սկզբում վարչության կողմից պատրաստվել և գիտխորհրդի հաստատման են ներկայացվել 2010-2011 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերը և առաջին ու երկրորդ կիսամյակների ուսումնական ժամանակացույցը:

2010-2011 ուսումնական տարում վարչությունը իր առջև նպատակ էր դրել բարելավել և ավարտել դեռևս նախորդ տարիներին սկիզբ առած համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմին վերաբերող համալիր տվյալների էլեկտրոնային բազաների ստեղծման աշխատանքները: Արդյունքում՝ հաշվետու ժամանակահատվածում վարչությունում կատարվեցին անվճար և վճարովի հիմունքներով սովորող ուսանողների տվյալների, համալսարանում ուսանողների շարժունության ցուցանիշների, ուսանողության առաջադիմության տվյալների, յուրաքանչյուր ուսանողի անձնական և միջին որակական գնահատականները ներկայացնող տվյալների, հիմնական և համատե-

դության սկզբունքով աշխատող դասախոսների տվյալների և այլ տեղեկությունների հավաքագրման և էլեկտրոնային բազաների ստեղծման աշխատանքներ, որոնք շարունակական բնույթ են կրում:

Վարչության կողմից ստուգվել և ճշգրտվել են համալսարանի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածությունները, վերահսկվել է դրանց կատարման ընթացքը, ինչի շնորհիվ նվազագույնի են հասցվել, ապա լրացվել բաց թողնված ժամերը:

Հաշվարկվել են ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների ուսումնական բեռնվածքները, և ամենամսյա կատարված ժամաքանակները ներկայացվել են վճարման: Այս դեպքում ևս չկատարված դասաժամերը լրացվել են:

Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում կատարվել են դասացուցակների և լսարանային ֆոնդի համապատասխանության ստուգումներ՝ անխափան ուսումնական գործընթաց ապահովելու նպատակով: Արդյունքում ունեցել ենք ուսումնական պլանների, ուսումնական բեռնվածքների և դասացուցակների ժամաքանակների լիարժեք համապատասխանություն:

Վերահսկվել են ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ քննությունների կատարման ընթացքը և համապատասխանությունը հաստատված ժամանակացույցին: Յուրաքանչյուր կիսամյակի վերջում կատարվել են քննաշրջանի արդյունքների վերլուծություն՝ համալսարանի գիտխորհրդին և ԿԳ նախարարություն ներկայացնելու նպատակով:

Կազմակերպվել և վերահսկվել են պրակտիկաների անցկացումները՝ գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրերի հիման վրա: Ամբիոններում քննարկվել են պրակտիկաների ղեկավարների հաշվետվությունները և կարծիքները՝ ուսանողների կողմից ձեռք բերված հմտությունների և համապատասխան կազմակերպություններում ուսումնական և նախաավարտական պրակտիկաների արդյունավետության մասին:

Ուսումնական տարվա սկզբին՝ ամբիոնների առաջին միստերից հետո, վարչություն են ներկայացվել ամբիոնների կողմից հաստատված՝ բակալավրիատի և մագիստրատուրայի առարկայական ծրագրերի փաթեթները և ամբիոնների ուսումնական աշխատանքների ծավալները, կիսամյակի վերջում ստուգվել են դասամատյանները, հաշվառվել են կատարված ժամաքանակները: Կատարված աշխատանքների արդյունքում ապահովվել է նաև պատշաճ փաստաթղթային գործավարություն:

Հաշվետու ուսումնական տարվա վերջում վարչության կողմից ամբողջացվել են համալսարանի առկա և հեռակա ֆակուլտետների շրջանավարտների անձնական գործերը, ակադեմիական փաստաթղթերը, դիպլոմի միջուկների գնահատականները: Վերանայվել են դիպլոմների երկլեզու հավելվածների բովանդակությունը և կառուցվածքը: Մշակվել և պատրաստվել են քննական ու ավարտական որակավորման մատյանները:

Բացի ուսումնական գործընթացների կազմակերպման և համակարգման գործառույթներից, ԱԲՎ-ն իրականացնում է կրթության որակի բարձրացմանը

ԳՊՀ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

միտված այլ աշխատանքներ, մասնավորապես՝ կազմակերպում է կիսամյակային հարցումներ ուսանողների, շրջանավարտների և գործատուների շրջանում՝ հարցաթերթիկները մշակելիս հաշվի առնելով վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի կարծիքները: Արդյունքում՝ յուրաքանչյուր տարի ունենում ենք բովանդակային առումով ավելի տարողունակ և բնութագրիչ հարցաթերթիկներ:

Ուսումնական գործընթացի որակի ապահովման նպատակով վարչությունը համատեղ աշխատանքներ է ծավալում ֆակուլտետների, ամբիոնների հետ, սերտորեն համագործակցում է նաև կադրերի բաժնի, հաշվապահության, լրատվության և հանրության հետ կապերի բաժնի, համակարգչային տեխնիկայի շահագործման բաժնի, արխիվի, գրադարանի և համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ: ԱԲԿ-ն համագործակցում է նաև ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության հետ՝ նպատակ ունենալով մրանց ուժերը նպատակաուղղել կրթության որակի բարձացմանը:

Շարունակվել են համալսարանի վարչական անձնակազմի և ուսանողների համար կազմակերպված համակարգչային և անգլերեն լեզվի ուսուցման անվճար դասընթացները:

Վարչությունն իրականացնում է Գավառի պետական համալսարանի ուսանողների շարժունակության փաստաթղթային ձևակերպումները, կազմակերպում ներբուհական և միջբուհական տեղափոխությունների արդյունքում առաջացած տարբերությունների հանձնումը: Ակադեմիական քաղաքականության վարչությունում ստեղծվել է համալսարանում ուսանողների շարժունակության տվյալների բազան: 2010-2011 ուսումնական տարում գրանցվել է ուսանողների հետևյալ շարժը.

h/h	ԳՊՀ ուսանողների շարժը	2010-2011 ուս. տարի
1	Այլ բուհերից ԳՊՀ են տեղափոխվել	13
2	ԳՊՀ-ից այլ բուհեր են տեղափոխվել	1
3	Երկրորդ մասնագիտություն են ստանում	20
4	Քոլեջից ԳՊՀ են ընդունվել	18
5	Առկա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են հեռակա	5
6	Հեռակա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են առկա	33
7	Ներֆակուլտետային տեղափոխություն են կատարել	17

ԳՊԴ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

8	Տարկետում են ստացել	140
	> առողջական վիճակի հիմքով	27
	> զինծառայության ծեկնելու հիմքով	113
9	ԳՊԴ-ից հեռացվել են	153
10	ԳՊԴ-ից ազատվել են	24
11	Վերականգնվել են ԳՊԴ՝	147
	> զորացրումից հետո	53
	> հեռացումից հետո	31
	> տարկետումից հետո	20
	> պետական քննություններին թույլատրվածներ	43
	Ընդհանուր շարժը	571

Վարչությունում ստեղծված համակարգչային տեղեկատվական տվյալների հիման վրա նախապատրաստվել են կիսամյակային, տարեկան վիճակագրական հաշվետվություններ, համալսարանի գործունեության վերլուծություններ, տեղեկանքներ և զեկուցագրեր՝ համապատասխան մարմիններին և կազմակերպություններին ներկայացնելու համար:

Վարչության աշխատակիցները ձեռք են բերել որոշակի փորձ և հմտություններ, նրանցից ոմանք մեկնել են արտասահման՝ վերապատրաստվելու: Ակադեմիական քաղաքականության վարչության աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու, գործունեության նոր մեթոդներ ներդնելու նպատակով շարունակելու ենք ուսումնասիրել զարգացած եվրոպական երկրների բուհերում կիրառվող կառուցակարգերը, որոնք կնպաստեն համալսարանում ուսման որակի բարձրացմանը, քանի որ 2011-2012 ուսումնական տարին Գավառի պետական համալսարանում հայտարարված է ուսման որակի բարձրացման տարի:

ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Գրադարանի վարիչ՝ *Նահրա Ֆահրադի Պետրոսյան*

Գրքային ունեցվածքը՝	37.600	Բաժին՝	2
ընթերցողները՝	3.000	ընթերցասրահ՝	2
հաճախումը՝	400.000	աշխատողների թիվը՝	3
գրքատացքը՝	500.000		

Գրադարանը համալսարանի կարևոր ստորաբաժանումներից է, որի գործունեության հիմնական նպատակը գիտաուսումնական գործընթացը գիտական տեղեկատվությամբ ապահովելն է: Թեև արագ զարգացող աշխարհում տեղեկատվական էլեկտրոնային միջոցներն ունեն լայն տարածում, մեզանում դեռևս կարևորվում է գիտաուսումնական պահանջները բավարարող գրքային պաշարի առկայությունը, ուստի նաև գրքային ֆոնդի համալրումը:

ԳՊԴ գրադարանի գրքային ֆոնդը կազմում է 37.600 միավոր գրականություն: Հաշվետու տարում գրադարանի գրքային ֆոնդ է մուտքագրվել շուրջ 700 միավոր մասնագիտական և զեղարվեստական գրականություն: Ֆոնդերի համալրումը կատարվել է՝ ելնելով ուսումնական ծրագրերի և համալսարանի գիտական գործընթացի պահանջներից, համալսարանի կողմից պարբերաբար կատարվող զնումների և հեղինակների ու անհատների նվիրատվությունների շնորհիվ:

Ընթացիկ տարում կատարվել է մասնագիտական գրականության զտում, գրքերի ստուգում և վերանորոգում: Կատարվել է նաև մասնագիտական գրականության վերադասավորում և համակարգում, շարունակվել է գրքային ֆոնդի համակարգչային մուտքագրումը, նկարագրումը և դասակարգումը՝ ըստ գրադարանային մատենագիտական դասակարգումների: Գրադարանում շարունակվում է գրքային ֆոնդի այբբենական և կարգային գրացուցակների ձևավորման շարունակական գործընթացը: Շարունակվում են նաև այդ ֆոնդի էլեկտրոնային համահավաք գրացուցակի ստեղծման և գործարկման աշխատանքները: Մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակները տրամադրվել են համապատասխան ամբիոններին՝ ուսանողներին կուրսային, անհատական և ավարտական աշխատանքները պատրաստելիս գրականությամբ աջակցելու նպատակով:

Վերանայվել և կարգի են բերվել քարտարանները: Բազմաթիվ մատենագիտական ցանկերով, գիտական հոդվածների գրացուցակներով հարստացվել է

գրադարանային տեղեկատվական համակարգը: Գրադարանում առկա «Լրաբեր հասարակական գիտությունների», «Պատմա-բանասիրական հանդես», «Բանբեր Երևանի Յամալսարանի», «Գիտության աշխարհում», «Օրենք և իրականություն», «Յանրային կառավարում», «Արդարադատություն», «Ագրոգիտություն» և այլ ամսագրերից, գիտական հանդեսներից ու հոդվածների ժողովածուներից մշակվել և կազմվել է «Գիտական հոդվածների մատենագիտություն», որը պարբերաբար լրացվում է նոր հոդվածների ցանկերով և առաջարկվում է ուսանողներին և պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ համալրված տարբերակով: Իսկ ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների ամբողջ փաթեթի՝ 13 համարների մատենագիտական ցանկը տեղադրված է ԳՊՀ www.gsu.am ինտերնետային կայքում: Այսուհետ ինտերնետից օգտվող ուսանողներն ու դասախոսները կարող են տեղեկանալ ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների մատենագիտական ցանկին՝ առանց գրադարան այցելելու:

ԳՊՀ գրադարանը, լինելով «Յայկական գրադարանային միության» անդամ, համագործակցում է Ազգային գրադարանի, ինչպես նաև այլ բուհերի գրադարանների հետ և իրականացնում է ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների ամբողջ փաթեթի փոխանակում այլ ժողովածուների հետ:

Յաշվետու ժամանակաշրջանում ԳՊՀ գրադարանի աշխատակազմը շարունակել է աշխատանքը էլեկտրոնային գրադարանի համալրման ուղղությամբ: Ինտերնետային կայքերից բեռնված գրքերից կազմված գրադարանի դասակարգումը, նկարագրումը և նոր գրքերի ներբեռնման աշխատանքներն ընթացքի մեջ են: Ուսանողների ու դասախոսների էլեկտրոնային սպասարկման նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել համապատասխան տեխնիկական միջոցներ:

Ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում գրադարանում կազմակերպվել են բազմաբնույթ միջոցառումներ՝ ակտիվ ուսանողների մասնակցությամբ: Շարունակական աշխատանքներ են կատարվել ուսանողների շրջանում գրքի նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելու համար, կազմակերպվել են գրքերի ընթերցումներ և քննարկումներ: Նմանատիպ միջոցառումներ կազմակերպելիս՝ գրադարանը համագործակցել է ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ամբիոնների, ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի անդամների հետ: Այս համագործակցությունը նպաստել է նաև գրքերի տացքի, գրադարան ուսանողների հաճախելիության բարձրացմանը:

Այսպիսով, գրադարանը աշխատում է հնարավորինս լավ կատարել Գավառի պետական համալսարանի գիտական-տեղեկատվական և մշակութային-դաստիարակչական կենտրոնի իր առաքելությունը:

ԳՊՀ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ Պապին Օնիկի Սուրադյան

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժինը Գավառի պետական համալսարանի կարևոր կառուցվածքային ստորաբաժանումներից է, որի նպատակը բուհի գործունեության մասին տեղեկատվության տարածումն է հասարակության լայն շրջանակներում, ինչպես նաև հասարակական գործընթացներում ԳՊՀ-ի ակտիվ ներգրավումը:

2010-2011 ուսումնական տարում վերանայվել է բաժնի ռազմավարական ծրագիրը, որում ներառվել են բուհի ներքին և արտաքին կապերին վերաբերող հայեցակարգային նոր ուղղություններ:

Բաժնի ծրագրերում ներառվել են նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված «Պետական խորհրդանիշերի հանրահռչակման և քաղաքացիական դաստիարակության ազգային ծրագրի ու միջոցառումների» մի շարք դրույթներ:

Հաշվետու ժամանակահատվածում բաժինը մշակել է «Գավառի պետական համալսարանի լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման կանոնակարգը և ներկայացրել ԳՊՀ գիտական խորհրդի հաստատմանը:

Բաժինը սերտորեն համագործակցում է ԳՊՀ ուսանողական խորհրդի, Ուսանողական գիտական ընկերության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի հետ, կազմակերպում է դիմորդների, այլ շահառուների հետ տարվող աշխատանքները:

2010-2011 ուսումնական տարվա ընթացքում Հանրության հետ կապերի և լրատվության բաժնին աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- Ձանգվածային լրատվության միջոցների հետ աշխատանքներ,
- Համագործակցություն կրթական ոլորտի պետական և հասարակական կազմակերպությունների հետ,
- Դիմորդների հետ տարվող աշխատանքներ,
- Շրջանավարտներ և կարիերայի կենտրոնի գործունեության կազմակերպում,
- www.gsu.am ինտերնետային կայքի համալրում,
- Համացանցային տիրույթում ԳՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածում:

Ձանգվածային լրատվության միջոցների հետ աշխատանք.

• Գեղարքունիքի մարզի «Գեղամա մեդիա հոլդինգ» ՍՊԸ-ի, Գավառի «Քյավառ», Սևանի «STV1», Մարտունու «Ձանգակ» հեռուստաընկերությունների և «Գեղամա աշխարհ» թերթի հետ շարունակվում է ակտիվ համագործակցությունը:

• ԳՊՀ-ում տեղի ունեցող միջոցառումները պարբերաբար լուսաբանվել են ինչպես մարզային լրատվամիջոցների, այնպես էլ հանրապետական ՁԼՄ-ների կողմից:

• ԳՊՀ-ի վերաբերյալ տեղեկություններն էլեկտրոնային փոստով ուղարկվել են հայաստանյան լրատվամիջոցների հասցեներով: ԳՊՀ գործունեությանը պարբերաբար անդրադարձել են «Արմենպրես» լրատվական գործակալությունը, «Հայաստանի Հանրապետություն», «Առավոտ», «Ազգ», «Ժողովուրդ» օրաթերթերը, «Կրթություն» շաբաթաթերթը և մի շարք էլեկտրոնային պարբերականներ:

• Հայաստանյան տպագիր մամուլում, էլեկտրոնային թերթերում և լրատվական գործակալություններում տեղ գտած ԳՊՀ-ին վերաբերող նյութերն առանձնացվել են և կազմվել է «Մամուլը ԳՊՀ-ի մասին» ալբոմ-ժողովածու:

• Մարզային ՁԼՄ-ներից ԳՊՀ-ի գործունեությունն առավել հաճախ լուսաբանել է «Քյավառ» հեռուստաընկերությունն ու «Գեղամա աշխարհ» թերթը: Հաշվետու ժամանակահատվածում «Քյավառ» հեռուստաընկերությանը լուսաբանվել է շուրջ երկու տասնյակ միջոցառում, իսկ «Գեղամա աշխարհ» թերթում տպագրվել է ավելի քան 30 նյութ:

• «Քյավառ» հեռուստատեսությունից վերցվել են ԳՊՀ-ին վերաբերող արխիվային նյութերը և կազմվել է ԳՊՀ video արխիվը:

• Հայաստանյան տեղեկատվական ծառայություններին տրամադրվել են ԳՊՀ պատմությանն ու գործունեությանը, վարչական ու ֆակուլտետային ստորաբաժանումներին, ինչպես նաև մատուցվող կրթական ծառայություններին վերաբերող տեղեկատվություն:

• Թվանշայնացվել և արխիվացվել են ԳՊՀ հիմնադրման օրվանից մինչ այժմ լուսանկարված թղթային լուսանկարները և ԳՊՀ մեծ դահլիճի նախասրահում բացվել է բուհի պատմությանն ու առօրեային վերաբերող լուսանկարների ցուցահանդես:

• ԳՊՀ միջոցառումների ընթացքում լուսանկարված էլեկտրոնային լուսանկարներն արխիվացվել են՝ ըստ համապատասխան ամսաթվերի և անհրաժեշտության դեպքում օգտագործվում են տեղեկատվական բուկլետներ և գրքույկներ տպագրելիս:

• «Լրագրողներ հանուն ապագայի» հասարակական կազմակերպության հետ համատեղ անցկացվել է «Ձանգվածային լրատվության նոր մեդիա - միջոցները» խորագրով դասընթաց, որին մասնակցում էին ԳՊՀ «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ դասընթացի» մասնակիցներն ու Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի ակտիվ ուսանողները:

Համագործակցություն կրթական ոլորտի պետական և հասարակական կազմակերպությունների հետ.

• ՀՀ կրթության և գիտության նախարարության, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության «Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի», ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կազմակերպած «Բարձրագույն ուսումնական հաստատություններում թափանցիկության և արդարության ավելացում» թեմայով միջազգային համաժողովում ներկայացվեց Գավառի պետական համալսարանի հակակոռուպցիոն փորձը:

• «Տիրի» բրիտանական միջազգային կազմակերպության և Գավառի պետական համալսարանի միջև կնքված հուշագրի շրջանակում Ծաղկաձորում կազմակերպված «Ինտեգրումը բիզնեսի և հանրային կառավարման ոլորտում» թեմայով եռօրյա դասընթացում ներկայացվել է ԳՊԴ փորձը:

• ՀՀ զինված ուժերի երկրորդ բանակային զորամիավորման և Գավառի պետական համալսարանի միջև կնքված հուշագրի շրջանակում համագործակցություն է սկսվել ՀՀ զինված ուժերի երկրորդ բանակային զորամիավորման հետ՝ բանակ-բուհ կապերն ամրապնդելու նպատակով:

• Կրթության զարգացման ակադեմիայի (AED) հետ համագործակցության շրջանակում ԳՊԴ գրադարան է բերվել շուրջ 100 անուն գիրք և գրասենյակային պարագաներ:

• ԵՊՀ ռուսական կենտրոնի հետ համագործակցության շրջանակում ԳՊԴ բանասիրության ֆակուլտետի Ռուսաց լեզու և գրականություն բաժնին նվիրաբերվել է մեկ տասնյակից ավելի տեսաֆիլմերի սկավառակները՝ դասական գրականության սցենարներով նկարահանված:

• Պատրաստվել և տպագրվել է «Առաջին կուրսեցու ուղեցույց» գրքույկը, որը բովանդակում է ԳՊԴ ուսանողի խարտիան, ԳՊԴ ստեղծման համառոտ պատմությունը, անդրադառնում բուհի կառավարմանն ու կառուցվածքին, ուսումնական գործընթացի կազմակերպմանը, ֆակուլտետների գործունեությանը, ուսանողական և մշակութային կառույցներին, ԳՊԴ կանոնակարգերին, ԳՊԴ սովորողի իրավունքներին ու պարտականություններին, ուսանողական նպաստների, կրթաթոշակների հատկացման հիմքերին, ինչպես նաև ներառում է օգտակար խորհուրդներ ուսանողների համար:

• Ռուսաստանի Դաշնությունում կազմակերպվող «Սելիգեր-2011» համառուսաստանյան կրթական ֆորումին մասնակցելու համար ԳՊԴ ուսանողների շրջանում անցկացվել է մրցույթ: Ֆորումի ձևաչափին համապատասխան՝ հանձնաժողովը ստուգեց հայտագրված ուսանողների ռուսերեն և անգլերեն լեզուների իմացությունը, այնուհետև դրական միավորներ ստացած ուսանողներին տրվեցին մեթոդական ցուցումներ առ-ցանց հայտերը լրացնելու համար:

• ՄԱԿ-ի հաղորդակցության հարցերի հայաստանյան աշխատախմբի կողմից կազմակերպված «ՄԱԿ-ի մոդել» խորհրդաժողովին մասնակցելու վերաբերյալ հայտարարությունը տարածվել է ԳՊԴ ուսանողների շրջանում և կազմակերպվել միջոցառումների շարք:

• «Քաղաքացիական նախաձեռնություններ» ծրագրի շրջանակներում մի

խումբ ԳՊՀ ուսանողներ Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոնի Գեղարքունիքի մասնաճյուղում մասնակցեցին Կենտրոնի կողմից կազմակերպված ուսուցումներին:

- «Վիվա Սելլ-USU» ընկերության կարիերայի զարգացման ծրագրի շրջանակներում իրավական թեմաներով էսսեների մրցույթի վերաբերյալ իրազեկվել է ԳՊՀ իրավագիտության բաժնի ուսանողներին և ապահովվել է լավագույնն ուսանողների մասնակցությունը, որոնցից մի քանիսը արժանացել են խրախուսական մրցանակների:

- «Վիվա Սելլ-USU» ընկերության կարիերայի զարգացման ծրագրի շրջանակներում շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ սեմինարին մասնակցելու համար իրազեկվել են համալսարանականները և ապահովվել է լավագույն ուսանողների մասնակցությունը:

- «Վիվա Սելլ-USU» ընկերության և Նախագծերի կառավարման հայկական ասոցիացիայի հայտարարած «Նախագծերի կառավարում» դասընթաց-սեմինարին մասնակցել են ԳՊՀ ֆինանսներ և վարկ, ինչպես նաև ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի ուսանողները: Խրախուսանքի են արժանացել ՈւԳԸ նախագահ Գեղամ Աթեյանն ու ուսանողական խորհրդի անդամ Արամ Ղարազոյանը:

- «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի հայտարարած անվանական միանվագ կրթաթոշակների տրամադրման մրցույթի վերաբերյալ տեղեկատվությունը տարածվել է ԳՊՀ ուսանողների շրջանում: Արդյունքում մրցույթում հաղթող են ճանաչվել բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Մուրադյանը և տնտեսագիտության ֆակուլտետի ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Թերեզա Ղարաբաղյանը:

- «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի 2010-2011 ուստարվա առաջին և երկրորդ կիսամյակների ուսման վարձերի և կրթաթոշակների վերաբերյալ հայտարարության մասին տեղեկացվել են ԳՊՀ ուսանողները, կազմակերպվել է նրանց մասնակցությունը հիմնադրամի հայտարարած մրցույթին:

- Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակի հայտարարած ակնարկների մրցույթի վերաբերյալ իրազեկվել են համապատասխան ֆակուլտետների ուսանողները և ապահովվել է լավագույնն ուսանողների մասնակցությունը: Տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ» բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Արմինե Ասատրյանն արժանացել է 3-րդ մրցանակի: ԳՊՀ ուսանողներն արժանացել են նաև խրախուսական մրցանակի:

- «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոնի, ՀՀ մշակույթի նախարարության և Առևտրաբաժանյան հիմնադրամի կազմակերպած` Հայ մեծ կոմպոզիտոր Առևտրաբաժանյանի 90-ամյակին նվիրված «Մենք երգում ենք Առևտրաբաժանյանի երգերը» հանրապետական ուսանողական մրցույթ-փառատոնին մասնակցել են ԳՊՀ շնորհալի ուսանողները: Բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն բաժնի 1-ին կուրսի ուսանող Արփինե

Խանդանյանը մրցություն արժանացել է խրախուսական մրցանակի:

- Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպանությունների հետ համագործակցելու նպատակով ԳՊՀ ուսանողական կառույցների ղեկավարները՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի աջակցությամբ նամակներ են ուղարկել մի շարք դեսպանատներ:

- Ապահովվել է ԳՊՀ ուսանողների՝ որպես հաշվարարների ակտիվ մասնակցությունը Գեղարքունիքի մարզում անցկացվող մարդահամարում:

- Հայկական Ատլանտյան ասոցիացիայի (ՀԱԱ) հետ համատեղ Գավառի պետական համալսարանում անցկացվել է տեսախորհրդաժողով Ատլանտյան և եվրոպական համագործակցության ասոցիացիայի նախագահ Տեոդոսիոս Գեորգիուի հետ: Տեսականորոշի մասնակիցները քննարկեցին Հյուսիսատլանտյան դաշինքի, ՆԱՏՕ-ում որոշումների կայացման կարգի ու կառուցակարգերի, Հայաստան-ՆԱՏՕ գործակցության, ինչպես նաև ՀԱԱ-ի գործունեությանը վերաբերող հարցեր: Տեսախորհրդաժողովին մասնակցում էին շուրջ 40 ուսանողներ՝ ԳՊՀ տարբեր ֆակուլտետներից:

- Կազմակերպվել է հանդիպում Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի ու Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC/ԱԵՊԼԱԿ) փորձագետների հետ:

- «Նախաձեռնությունների և գործողությունների դաշտավայր» հասարակական կազմակերպության հետ համատեղ՝ «World Vision» Հայաստան միջազգային բարեգործական կազմակերպության Գավառի տարածքային զարգացման ծրագրի ֆինանսավորմամբ, ԳՊՀ-ում անցկացվեց մեկշաբաթյա դասընթաց՝ ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի վերաբերյալ: Դասընթացին մասնակցեցին ԳՊՀ տարբեր ֆակուլտետների շուրջ 20 ուսանողներ:

- «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր. 2010-2012» ծրագրի շրջանակում ուսանողական նախաձեռնող խմբերի ներկայացրած փոքր դրամաշնորհային նախագիծ-առաջարկները քննարկվել են Հանրության հետ կապերի և լրատվության բաժնում, գնահատվելուց հետո ներկայացվել են համապատասխան հանձնաժողովի հաստատմանը: Ուսանողական խմբերի կողմից ներկայացվել էին երեք նախագիծ-առաջարկներ՝ ««Նոր շունչ» սեղանի թեմիսի մրցաշար ԳՊՀ-ում, «Հաշմանդամ լինել, չի նշանակում դատապարտված լինել» և «Ճանաչենք Գավառ համայնքը»: Դրամաշնորհային խորհրդի նիստի արդյունքում հանձնաժողովի անդամներն ընտրեցին «Նոր շունչ» սեղանի թեմիսի մրցաշար ԳՊՀ-ում ծրագիրը:

- «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի կողմից Դիլիջանում կազմակերպված «Թափանցիկ կրթությունը Հյաստանում» թեմայով երկօրյա սեմինարներին մասնակցեցին նաև ԳՊՀ ուսանողները: «Թափանցիկ կրթությունը Հյաստանում» դրամաշնորհային ծրագրում երեք հաղթող թիմերից երկուսը Գավառի պետական համալսարանի թիմերն էին:

- ԳՊՀ տուրիզմի ակումբի հետ համատեղ կազմակերպված ճանաչողական էքսկուրսիայի շրջանակում ԳՊՀ վարչական և պրոֆեսորադասախոսական կազմն այցելեց եզակի մշակութային արժեք հանդիսացող Նորատուսի խաչքա-

րերի տարածք և հարակից պատմամշակութային վայրեր:

- Սեպտեմբեր ամսից Գավառի պետական համալսարանի 1-ին և 2-րդ կուրսի ուսանողները հնարավորություն են ստացել այցելելու հայկական պատմամշակութային վայրեր: Գավառի պետական համալսարանը և «Օգնություն համալսարանին» կազմակերպությունը՝ ՀՀ սփյուռքի նախարարի հովանավորությամբ, ԳՊՀ ուսանողների համար կազմակերպել է արշավներ Հայաստանի պատմամշակութային վայրեր, այցելություններ թանգարաններ, կինոթատրոններ: Մինչ արշավների կազմակերպումը հարցաթերթիկների միջոցով պարզվել են ուսանողների նախասիրություններն ու հաշվի առնվել նրանց առաջարկները:

- «Երիտասարդական նվաճումներ» կրթական հասարակական կազմակերպության «Երիտասարդությունը ներգրավված հասարակության մեջ» ծրագրի շրջանակում անցկացվող բանավիճային ակունքների միջոցառման մրցույթները զնախատելու նպատակով ներկայացվել է նույն ծրագրի 2009 թ.-ին «Բանավեճի հանրապետական մրցաշարում» 1-ին տեղը գրաված ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի պատմության (իրավունքի հիմունքներ) բաժնի 2-րդ կուրսի ուսանող Գայանե Մարտիրոսյանի թեկնածությունը:

- Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի Խաղաղության կորպուսի հայաստանյան գրասենյակի «Գեներեր և զարգացում» նախաձեռնության շրջանակում Կանանց օրվան նվիրված պաստառի և շարադրությունների մրցույթին մասնակցել են նաև ԳՊՀ ուսանողներ:

- Ամերիկայի հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան հիմնադրամի կրթավճար» ծրագրի շրջանակում հայտարարված մրցույթում ապահովվել է ԳՊՀ ուսանողների մասնակցությունը, աջակցություն է ցուցաբերվել անհրաժեշտ փաստաթղթերի կազմման գործում:

- Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի հետ համատեղ տպագրվել է «Examination gsu» ավտոմատացված համակարգի տեխնիկական նկարագրին ու հրահանգներին վերաբերող ուղեցույց: Այն տրամադրվել է ԳՊՀ դեկանատներին, իսկ էլեկտրոնային տարբերակը տեղադրվել է www.gsu.am ինտերնետային կայքում:

- Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից ֆինանսավորվող գերմանական միջազգային համագործակցության կազմակերպության և Հայաստանում էլեկտրոնային ուսուցման ցանցի հայտարարած «Ինստիտուցիոնալ կառուցում և մարդկային ռեսուրսների զարգացում էլեկտրոնային ուսուցման ոլորտում» Հարավային Կովկասի երկրներում» ծրագրին մասնակցելու նպատակով համագործակցություն է ձևավորվել նշված ծրագրի հայաստանյան համակարգողների հետ, որի արդյունքում ԳՊՀ համապատասխան ստորաբաժանումների մասնագետները մասնակցել են ուսուցումներին և առաջիկայում ԳՊՀ-ում ներդրվելու է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը:

- Պատրաստվել և տպագրվել է Գավառի պետական համալսարանի «Հեռախոսահամարների տեղեկատու»-ն, որտեղ ներկայացված են ԳՊՀ բոլոր ֆակուլտետների ու տարբեր ստորաբաժանումների, ուսանողական կառույցների և

ակումբների հեռախոսահամարները: Տեղեկատուն տեղադրվել է նաև ԳՊՀ ինտերնետային կայքում՝ www.gsu.am:

- Կրթության զարգացման ակադեմիայի (AED) 5-ամյա գործունեությանը վերաբերող համաժողովի ընթացքում ներկայացվել է ԳՊՀ «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ դասընթացի» գործունեությունը:

- Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հայտարարված կրթաթոշակների մրցույթում ապահովվել է ԳՊՀ ուսանողների մասնակցությունը: Հաղթող են ճանաչվել ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտություն բաժնի ուսանողներ Վանիկ Վարդանյանը և Ֆրունզե Հայրապետյանը:

- ԳՊՀ պատվո բարերարների անուններով պատրաստվել են հուշատախտակներ և փակցվել ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում:

- Պատրաստվել է ԳՊՀ դրոշը: Տպագրվել են ԳՊՀ տարբերանշանով թղթապանակներ, այցեքարտեր, գրիչներ:

Ղիմորդների հետ տարվող աշխատանքներ.

- «Դասը վարում են համալսարանականները» ծրագրի շրջանակներում ԳՊՀ դասախոսական կազմն այցելել է մարզի ավագ դպրոցներ և պատասխանել աշակերտներին հետաքրքրող հարցերին: Աշակերտների շրջանում անցկացվել են հարցումներ. յուրաքանչյուր այցից հետո ամփոփվել են հարցաթերթիկներում նշված պատասխանները և ներկայացվել են ԳՊՀ ռեկտորատի անդամներին: Տարեվերջին արդյունքների ամփոփման հիման վրա կազմվել է հաշվետվություն:

- Տպագրվել է «ԳՊՀ ղիմորդի ուղեցույց-2011»-ը և տեղադրվել ԳՊՀ պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.gsu.am: «Դասը վարում են համալսարանականները» ծրագրի շրջանակներում Գեղարքունիքի մարզի դպրոցներ այցելած համալսարանականները ուղեցույցը բաժանել են մարզի ավարտական դասարանների աշակերտներին:

- «Թափանցիկ կրթությունը Հայաստանում» ծրագրի շրջանակում ԳՊՀ ուսանողները Գավառի եւ Սեւանի ավագ դպրոցներում պարբերաբար հանդիպումներ են ունեցել աշակերտների հետ և անցկացրել սեմինարներ՝ հակակոռուպցիոն թեմայով:

Շրջանավարտների և կարիերայի կենտրոն.

- Մշակվել և ԳՊՀ ռեկտորատին է ներկայացվել «Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի» նոր կանոնակարգը և տարբերանշանը:

- Կազմվել է կենտրոնի գործունեությունը ներկայացնող տեղեկատվական բուկլետ:

- Պատրաստվել է ԳՊՀ ինտերնետային կայքի «Շրջանավարտ» հատվածում տեղադրվող տեղեկատվությունը:

- Կազմվել է Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործողությունների պլանը:

ԳՊՀ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

- ԳՊՀ ֆակուլտետների հետ համագործակցության արդյունքում կազմվել է ԳՊՀ շրջանավարտների բազան:
- Բուհ-գործատու կապն ամրապնդելու նպատակով կազմվել է հավանական գործատուների ցուցակը, որոնց հետ համագործակցության պայմանավորվածություն է ձեռք բերվել:
- Կազմվել է շրջանավարտների գրանցման հարցաթերթիկը, որոնք լրացնում են ԳՊՀ բակալավրի եւ մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողները:
- Տնտեսագիտական ֆակուլտետի ակտիվ շրջանավարտների հետ համատեղ կազմակերպվել է տնտեսագիտության ֆակուլտետի շրջանավարտների հանդիպումը:

www.gsu.am ինտերնետային կայք.

- Ապահովվել է ԳՊՀ կայքի պարբերաբար թարմացումն ու համալրումը:
- Կայքին թղթակցում են նաև «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» դասընթացին հաճախող ուսանողները:
- Կայքն ավելի հետաքրքիր ու բովանդակալից դարձնելու նպատակով այս ուսումնական տարվա ընթացքում ուսանողների և դասախոսների շրջանում հարցում է անցկացվել, թե համալսարանականներն ինչպիսին կցանկանային տեսնել www.gsu.am կայքը և ինչպիսի նյութեր կցանկանան կարդալ: Հարցման արդյունքներն ամփոփելուց հետո կայքում ավելացել են մի շարք խորագրեր՝ «Հայտարարություն», «Գիտական հոդվածներ, ժողովածուներ», «Հաշվետվություններ», «Ուղեցույցեր», «Տեսասրահ» եւ այլն:
- Կայքը լուսաբանում է բուհի առօրյան՝ ուսումնական ու գիտական գործունեությունը, ներկայացնում ուսանողներին հետաքրքրող հարցեր, անդրադառնում գիտաժողովների, մրցույթների անցկացմանն ու ուսանողական խորհրդի գործունեությանը:
- Կայքում տեղ են գտել համալսարանում իրականացվող կրթական բարեփոխումներին, կարգապահության բարձրացմանը, որակի ապահովմանը վերաբերող տեղեկատվական նյութեր: Մասնավորապես, անդրադարձել ենք համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման, կրթության որակի ապահովման ներբուհական ընթացակարգերի կիրառման գործընթացներին, ինչպես նաև համալսարանի արտաքին կապերին: Տեղական ու միջազգային պայմանագրերի օրինակները տեղադրվել են կայքում:
- Կայքում լուսաբանվել են նաև դասախոսների մասնակցությունը տարբեր միջազգային և հանրապետական գիտաժողովներին ու սեմինար քննարկումներին: Գիտական հոդվածների ժողովածուներն էլեկտրոնային տարբերակով տեղադրվում է ԳՊՀ պաշտոնական ինտերնետային կայքի «Գիտական գործընթաց» էջի «Գիտաժողովներ» բաժնում:

Համացանցային տիրույթում ԳՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածում.

• ՀՀ կրթության և գիտության նախարարության ինտերնետային կայքում ԳՊՀ-ի վերաբերյալ անգլերեն լեզվով տեղեկատվություն տեղադրելու նպատակով՝ նախարարությանը տրամադրվել է բուհի վերաբերյալ անգլերեն լեզվով տեղեկատվություն և մի շարք լուսանկարներ:

• ՀՀ կրթության և գիտության նախարարի առաջարկով և Սևծովյան տնտեսական համագործակցության կրթական հարցերով աշխատանքային խմբի խնդրանքով վերոնշյալ կազմակերպության կայքէջի հասցեն տեղադրվել է www.gsu.am ինտերնետային կայքում:

• Ստեղծվել է www.gphhakakorupcion.blogspot.com բլոգը, որտեղ ներկայացվում է ԳՊՀ հակակոռուպցիոն գործունեությունը:

• Ստեղծվել է ԳՊՀ պաշտոնական վիդեոբլոգ՝ <http://www.youtube.com/user/gsu> հասցեով, որտեղ պարբերաբար տեղադրվում են Գավառի պետական համալսարանին վերաբերող տեսանյութեր: «Գեղամա» հեռուստաընկերությամբ եթեր հեռարձակվող «Համալսարանական ժամ» հաղորդաշարի տեսագրությունները ևս տեղադրվում են ԳՊՀ պաշտոնական վիդեոբլոգում:

• «Facebook» սոցիալական ցանցում ստեղծվել է Գավառի պետական համալսարանի էջը: Նորաբաց էջը ընդամենը մի քանի ամիսների ընթացքում ունեցել է բազմաթիվ այցելուներ:

**ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ
2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ**

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի զարգացման հայեցակարգում ներառված են այն գերակա խնդիրները, որոնք արդի գիտակրթական հաստատությունների գործունեության անօտարելի բաղադրամասն են կազմում:

Ուսումնասիրելով հանրապետական ու միջազգային կրթական հաստատությունների փորձը՝ հանգել ենք այն եզրակացության, որ մեր օրերում խիստ կարևոր ու անհրաժեշտ է բուհական հանրության և լրատվամիջոցների հետ կապերն համակարգող կառույցի ակտիվ գործունեությունը:

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժինն իր գործունեությունն իրականացնում է երկու ուղղություններով՝ ելնելով արտաքին և ներքին հանրային կապերի (PR) առանձնահատկություններից: Ենթադրվում է, որ ներքին PR իրականացնելու անհրաժեշտություն չի զգացվում, սակայն պետք է նկատի ունենալ, որ բուհն այն կառույցն է, որում ներառված են սոցիալական տարբեր խմբերի ու խավերի ներկայացուցիչներ: Ասվածը վերաբերում է թե՛ ուսանողներին, թե՛ պրոֆեսորադասախոսական կազմին, հետևաբար անելիքները բազմազան են ու բազմաբնույթ:

Ներքին կապերի դեպքում աշխատանքներն իրականացվում են ռեկտորատի, ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության և այլ ստորա-

բաժանումների հետ, սակայն ներքին և արտաքին կապերի սահմաններն այդքան էլ զատորոշված չեն: Մի շարք ծրագրերում դրանք հատվում են և առավել նպաստում բուհի զարգացմանն ու վարկանիշի բարձրացմանը: Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործունեությունը դրա վառ դրսևորումն է: Մի կողմից բուհը ներսում աշխատանքներ է իրականացնում ավարտական կուրսի ուսանողների հետ, մյուս կողմից էլ պայմանավորվածություն է ձեռք բերում գործատուների հետ՝ շրջանավարտներին աշխատանքի ընդունելու հարցում: Դիմորդների հետ տարվող աշխատանքը կարելի է համարել արտաքին կապերի դրսևորում, սակայն պետք է նկատել, որ ամիսներ հետո այն վերածվում է ներքին կապերի: Այսօրվա դիմորդները մեր վաղվա ուսանողներն են, ուսխորհրդի ու ուսանողական գիտական ընկերության անդամները: Նույնը վերաբերում է ԳՊՀ-ի տպագիր նյութերին ու www.gsu.am կայքին: Այստեղ բացառապես հրապարակվում են Գավառի պետական համալսարանին վերաբերող նյութեր և լուսանկարներ, սակայն այն ընթերցում ու դիտում են շատերը: Այսպիսով, հասարակության հետ կապերի և լրատվության բաժինն ապահովում է Գավառի պետական համալսարանի և՛ ներսի, և՛ դրսի կապերը:

2011-2012 ուսումնական տարվա ընթացքում նախատեսում ենք իրականացնել հետևյալ գործառնություններն՝ ըստ ոլորտների.

- Աշխատանքներ իրականացնել ԳՊՀ խորհրդանշանները (օրհներգ, ֆակուլտետային տարբերանշաններ) մշակելու և մասսայականացնելու ուղղությամբ:

- Ծրագրել, կազմակերպել և վերահսկել ՋԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կառույցների հետ համագործակցության և տեղեկատվության փոխանակման գործընթացը:

- Վերլուծել լրատվամիջոցներում համալսարանի, կրթության և գիտության ոլորտի կարևոր խնդիրների մասին հրապարակված և հեռարձակված նյութերը:

- Աշխատանքներ կատարել համալսարանի մասին հասարակական կարծիքի ու դրական վարկանիշի ձևավորման ուղղությամբ՝ ներհամալսարանական ընթացակարգերի, աշխատառճի, ներքին էթիկական նորմերի, վարվելակերպի և այլ խնդիրների վերաբերյալ մեթոդական ուղեցույցերի մշակման ու ներդրման և այլ աշխատանքների միջոցով:

- Մեթոդական աջակցություն ցուցաբերել քաղաքացիների ընդունելության, օրենքով սահմանված կարգով նրանց հարցերի, առաջարկությունների, բողոքների, նամակների, դիմումների քննարկման գործընթացում:

- Նպաստել համալսարանի՝ տեղեկատվության տարածման տպագիր միջոցների զարգացմանը (տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ, բացիկներ և այլն):

- Զարգացնել ԳՊՀ ինտերնետային կայքը, ապահովել նրա օպերատիվ թարմացումները և առցանց հետադարձ կապը:

- Պատասխանել ԳՊՀ-ին հասցեագրված էլեկտրոնային նամակներին:

- Պատրաստել համալսարանի մասին տեսանյութեր ու աուդիոնյութեր և ապահովել դրանց տարածումը:

- Կապեր հաստատել Հայաստանյան տպագիր և էլեկտրոնային լրատվության միջոցների հետ:
 - Կազմակերպել մամուլի ասուլիսներ, ինչպես նաև թեմատիկ քննարկումներ լրատվամիջոցների աշխատակիցների հետ:
 - Քանակական և որակական վերլուծության ենթարկել ԳՊՀ-ին վերաբերող բոլոր հրապարակումները, հեռուստատեսային և ռադիո նյութերը, լրատվական գործակալությունների և ինտերնետային պարբերականների անդրադարձերը:
 - ԳՊՀ-ին վերաբերող տպագիր նյութերն արխիվացնել և հրատարակել «Մամուլի հրապարակումները ԳՊՀ-ի մասին» ալբոմ-ժողովածու:
 - Մշակել ԳՊՀ ձևաթղթերի նոր տարբերակներ և հրատարակել «ԳՊՀ ձևաթղթերի օգտագործման ուղեցույց»-ը:
 - Պատրաստել ԳՊՀ ֆակուլտետներն ու ուսանողական կառույցները ներկայացնող բուկլետներ (հայերեն և անգլերեն):
 - Տեսանկարահանել և լուսանկարել ԳՊՀ-ում անցկացվող բոլոր միջոցառումները:
 - Ամբողջ նյութը թվանշայնացնել և արխիվացնել DVD սկավառակների վրա,
 - Տեղեկատվական նյութեր և լուսանկարներ տրամադրել հանրապետական մամուլին:
 - Անցկացնել ԳՊՀ արտաքին վարկանիշի հետազոտություն:
 - Անցկացնել ԳՊՀ ներքին իմիջի հետազոտություն:
 - ԳՊՀ ուսանողների շրջանում անցկացնել հարցում՝ մատուցվող կրթական ծրագրերի և դասավանդման որակի վերաբերյալ:
 - Կատարել համալսարանի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը նպաստող այլ գործառույթներ:

ԳՊՀ ԱՐԻԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Արհմիության նախագահ՝ Սիրունյան Լյովա Գուրգենի

Չափետու տարում ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունն իր կանոնադրական խնդիրներին համապատասխան շարունակում է սոցիալական ուղղվածության ծրագրերի իրականացումը, համալսարանի ուսանողներին և աշխատակիցներին աջակցության ցուցաբերումը:

Համալսարանի աշխատակիցների աշխատանքային իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնելու ու պաշտպանելու նպատակով կնքվել է համալսարանի կոլեկտիվ պայմանագիրը:

2010-2011 ուսումնական տարում ԳՊՀ արհկոմիտեն ուշադրություն է դարձրել համալսարանի սոցիալապես անապահով ուսանողների նյութական օգնության խնդիրներին: Միաժամանակ, օժանդակություն են ստացել համալսարանի աշխատակիցները: Արհկոմիտեն իր միջոցներից օգնության կարգով համալսարանի 89 աշխատակիցների հատկացրել է 1 մլն. 887 հազար դրամ:

Համալսարանի արհմիութենական կազմակերպության և ուսանողական խորհրդի համատեղ ջանքերով իրականացվել են ուսանողական կյանքի ակտիվացմանը, ուսանողների հասարակական, մշակութային, ինտելեկտուալ զարգացմանն ու սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված մի շարք միջոցառումներ:

Արհեստակցական կազմակերպության ֆինանսական աջակցությամբ 2010թ. սեպտեմբերին համալսարանի տղաների հավաքականը մասնակցել է ձեռքի գնդակի հանրապետական ուսանողական առաջնությանը:

Շարունակվում է ակտիվ համագործակցությունը ՀՀ պետական բուհերի արհկոմիտեների հետ:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ուսանողական գիտական ընկերության նախագահ՝

Գեղամ Լևիկի Աթեյան

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ Ուսանողական գիտական ընկերությունը և ուսանողական խորհուրդը կազմակերպել են մի շարք ուսանողական գիտաժողովներ, սեմինարներ, քննարկումներ, այլ գիտական ու կրթական ուղղվածություն ունեցող միջոցառումներ, սատարել են կրթական և գիտական ոլորտներում ուսանողության նախաձեռնություններին, նպաստել ուսանողների գիտական, ստեղծագործական և հոգևոր-մշակութային զարգացմանը:

2010 թվականի դեկտեմբերի 19-ին Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության ամբիոնի և ՈւԳԸ-ի համատեղ ջանքերով կազմակերպվեց «Կտոր մը հայրենիք» խորագրով ուսանողական գիտաժողով: Գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ, ԳՊՀ աշխարհագրության ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր պարոն Բորիս Մնացականյանը և գիտաժողովի մասնակից ուսանողները Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարար տիկին Հրանուշ Հակոբյանի կողմից պարգևատրվեցին պատվոգրերով: Լավագույն 9 աշխատանքները ներկայացվեցին գիտաժողովի ամփոփիչ նիստում և տպագրվեցին: ՀՀ սփյուռքի նախարարության ջանքերով՝ հանձին Սփյուռքի նախարար տիկին Հրանուշ Հակոբյանի, ներկայումս ընթանում է «Կտոր մը հայրենիք» խորագրով մրցույթի համահայկական փուլը, որին մասնակցում են նաև ԳՊՀ ուսանողները:

2011 թվականի հունվարի 19-ին հեռակա ուսուցման ֆակուլտետի հետ համատեղ կազմակերպվեց հայ ժողովրդի արժանի գավակ, մեծ գորավար ու փիլիսոփա, ազգային բարոյախոս, պետական ու քաղաքական գործիչ Գարեգին Նժդեհի ծննդյան 125-ամյակին նվիրված միջոցառում:

Մայրության և գեղեցկության միամսյակի ընթացքում Ուսանողական գիտական ընկերությունը և ուսանողական խորհուրդը տարբեր լսարաններում կազմակերպեցին կանանց իրավունքներին նվիրված «Կլոր սեղան», բանավեճ-քննարկումներ, հետաքրքիր հանդիպումներ և տոնական միջոցառումներ:

Մարտի 26-ին տեղի ունեցավ Րաֆֆու «Սամվել» պատմավեպի լույս ընծայման 125-ամյակին նվիրված միջոցառում՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Միջոցառմանը ներկա էին Հայաստանի գրողների միության նախագահ Լևոն Անանյանը, միության անդամներ Հենրիկ Էդոյանն ու Հակոբ Մովսեսը, «Ռուս համագործակցություն» ներկայացուցչության պատվիրակությունը, Սոսկ-

վայի սոցիոլոգիական գիտությունների համալսարանի ռեկտոր Էռնեստ Գրիգորյանը, Մոսկվայի տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղի ռեկտոր Սեդրակ Վարդանյանը, Հայաստանի Հանրապետությունում ՌԴ դեսպանատան ներկայացուցիչները, այլ հյուրեր:

Ուսանողական գիտական ընկերությունը և ուսանողական խորհուրդը հանդես եկան «ԶԼՄ-ների դրական և բացասական ազդեցությունը երիտասարդական լսարանի վրա» թեմայով քննարկում կազմակերպելու նախաձեռնությամբ: Այս նախաձեռնության շրջանակում մարտի 27-ին տեղի ունեցավ հանդիպում Հայկական 2-րդ հեռուստաալիքի հաղորդավար Գայանե Փայտյանի հետ: Ուսանողները նախապես ներկայացրեցին իրենց զեկուցումները նշված թեմայով, ապա ծավալվեց բուռն քննարկում:

Ապրիլ 23-ին Ուսանողական գիտական ընկերությունը և ուսանողական խորհուրդը նախաձեռնեցին և կազմակերպեցին ցերեկույթ՝ նվիրված մարդկության դեմ ուղղված ամենասոսկալի ոճիրի՝ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին: Միջոցառման խորհուրդն էր խոնարհվել անթիվ-անհամար անմեղ զոհերի հիշատակին, բայց և շարունակել անկտրում կամքով առաջ նայել՝ նպաստելով անկախ Հայաստանի զարգացմանն ու առաջընթացին:

Մայիս 13-ին Ուսանողական գիտական ընկերությունը և բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության ամբիոնը կազմակերպել էին «Սևան. հիմնախնդիրներ, հիմնախնդիրներ» խորագիրը կրող հանրապետական ուսանողական գիտաժողովը՝ յոթ պետական բուհերի ուսանողների ակտիվ մասնակցությամբ:

Հունիսի 10-18-ը Ուսանողական գիտական ընկերության և «Նախաձեռնությունների և գործողությունների դաշտավայր» համայնքային հասարակական կազմակերպության կողմից՝ «World Vision Հայաստան» միջազգային, բարեգործական կազմակերպության Գավառի տարածքային զարգացման ծրագրի ֆինանսավորմամբ Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ սեմինար ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ԶԻԱՀ) վերաբերյալ:

Հունիսի 5-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի շրջանավարտների դիպլոմների հանձման հանդիսավոր արարողությունը: Այդ օրը գովեստի արժանացան և պարգևատրվեցին այն շրջանավարտները, ովքեր ակտիվորեն մասնակցել էին ՈւԳԸ-ի և ՈւԽ-ի աշխատանքներին:

Հունիսի 21-ին Ուսանողական գիտական ընկերության անդամները «Համագործակցության եզրեր» ծրագրի շրջանակում այցելեցին Գյումրի քաղաքի մեծանուն գրողների և արվեստագետների տուն-թանգարաններ և պատմամշակութային վայրեր: Այցի ընթացքում թանգարանների հետ համաձայնություն ձեռք բերվեց հետագա համագործակցության մասին:

2011թ. սեպտեմբերի վերջին Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված «Լավագույն ուսանող-2011» մրցանակաբաշխությունը:

Հոկտեմբերի 2-ին Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտա-

կան ընկերության գործող կազմը կազմակերպեց իր գործունեության միամյակի հաշվետու միջոցառում:

Հոկտեմբերին Գավառի և Սևանի ավագ դպրոցներում և Գավառի պետական համալսարանում կազմակերպվեց «Թափանցիկ կրթությունը Հայաստանում» խորագրով սեմինարների շարք:

Հոկտեմբերի 17-ին Գյումրի քաղաքում անցկացվեց «Ուսանողական աշուն» մրցույթ-փառատոնը և կազմակերպվեց հանդիպում Գրողների միության տանը:

Հոկտեմբերի վերջին ԳՊԴ բանասիրական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպեց Ակսել Բակունցի «Միրհավ» և Հրանտ Մաթևոսյանի «Այս կանաչ-կարմիր աշխարհը» ստեղծագործությունների համեմատական վերլուծություն և քննարկում:

Նոյեմբերի 17-ին կազմակերպվեց միջոցառում՝ ուսանողի միջազգային օրվան նվիրված:

Նախատեսվում է «Ուսանողական աշուն» մրցույթ-փառատոնի լավագույն 10 մասնակիցների երեքական ստեղծագործությունների տպագրում «Առաջին քայլեր» խորագրով:

Նախատեսվում է անցկացնել քննարկումներ՝ հետևյալ թեմաներով.

- «ԱՊՊԱ-ն 1 տարի Հայաստանում»,
- «Լրատվական համակարգի թերությունները»,
- «Որտեղ անցկացնել պրակտիկան»,
- «Ինչպես գրել գիտական հոդված, զեկուցում, թեզ»:

Նոյեմբերից կսկսվի «Տեսակետների խաչմերուկում» ծրագրերի շարքը. կազմակերպվելու են քննարկումներ տարբեր թեմաներով:

Դեկտեմբերին բանասիրական ֆակուլտետի ՈւԳԸ-ն կազմակերպելու է գրական քննարկումներ և գիտաժողով՝ նվիրված Պետրոս Դուրյանի ծննդյան 150-ամյակին:

Բնագիտական ֆակուլտետում կազմակերպվելու են գիտաժողովներ՝ հետևյալ թեմաներով.

- Լույսի ազդեցությունը մակընթացության վրա,
- Կենդանական բնագիտ. արդի ըմբռումները և դրսևորման ձևերը,
- Համակարգչային լույսի ազդեցությունը մարդու տեսողական օրգանների վրա,
- «Կանաչ հեղափոխություն» և դրա նշանակությունը:

Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետում կազմակերպվելու են գիտաժողովներ՝ հետևյալ թեմաներով.

- Տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարական հասարակության հիմք,
- ՀՀ սահմանադրական օրենսդրության բարեփոխման հիմնական ուղղությունները:

Տնտեսագիտական ֆակուլտետում կազմակերպվելու են բիզնես ծրագրեր գրելու դասընթացներ և գիտաժողովներ՝ հետևյալ թեմաներով.

ԳՊՀ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

- Հարկային քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում,
 - Ապահովագրությունը գյուղատնտեսության ոլորտում,
 - Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման կարգը:
2012 թվականի ապրիլի 2-րդ կեսին տեղի կունենա հանրապետական ուսանողական գիտաժողով՝ «Զբոսաշրջային Սևան» թեմայով:
Կազմակերպվելու են միջոցառումներ՝ հետևյալ թեմաներով.
 - «Սերունդների հանդիպում», որին կմասնակցեն ԳՊՀ ավագ և երիտասարդ սերնդի ներկայացուցիչները,
 - «Ճանաչիր քո հայրենիքի ամեն անկյունը», որի շրջանակում նախատեսվում է կազմակերպել արշավներ Գեղարքունիքի մարզի տարբեր պատմամշակութային վայրեր:
Ամանորին ընդառաջ նախատեսվում է կազմակերպել բարեգործական այց Գավառի մանկատուն:
- ԳՊՀ Ուսանողական գիտական ընկերությունը և ուսանողական խորհուրդը ակտիվորեն փոխգործակցում են ՀՀ այլ բուհերի ուսանողական գիտական կառույցների և ինքնակառավարման մարմինների հետ:

ԳՊՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ

Իրավաբանական կլինիկայի կոորդինատոր, իրավագիտության թեկնածու՝ Ապրոյան Արսեն Հրաչիկի

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան 8 տարի շարունակ ծավալում է իր գործունեությունը՝ նպատակ ունենալով բարձրացնել իրավաբան ուսանողների մասնագիտական գործնական գիտելիքները, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի բնակչությանը մատուցել անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Հաշվետու ժամանակահատվածը նշանավորվեց ԳՊՀ իրավաբանական կլինիկայի յոթամյա գործունեության ամփոփմամբ, որի կապակցությամբ դեկտեմբերի 10-ին կազմակերպվեց իրավաբան ուսանողների գիտաժողով՝ նվիրված Միավորված ազգերի կազմակերպության ստեղծման 65-ամյակին: Ձեկույցներով հանդես եկան 12 իրավաբան ուսանողներ: Գիտաժողովին մասնակցեց Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան գրասենյակի տնօրեն Քրեգ Հոլստեդը, ով բարձր գնահատեց ուսանողների ակտիվ մասնակցությունը, զեկույցները և քննարկումները:

ԳՊՀ-ի իրավաբանական կլինիկայում ուսանողներն ուսումնասիրում են կանոն և երեխաների իրավունքներ, փաստաբանական գործունեության հմտություններ, սովորում են մասնագիտական էթիկայի նորմեր, ընդունում են հաճախորդների, սովորում են իրավաբանական գործերի կազմման և վարման կանոնները, կազմում հայցադիմումներ, մամակներ և այլ պաշտոնական փաստաթղթեր, ինչպես նաև ծանոթանում են իրավաբանական խորհրդատվության փուլերին, ինչը նախատեսված է ուսումնական պլաններում:

Արդեն երկրորդ տարին է, ինչ իրավաբանական կլինիկայում ներդրվել է նաև «Իրավաբանական գրագրություն» դասընթացը, որի դասավանդմանն աջակցություն է ցուցաբերում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան գրասենյակը:

2010-2011 ուսումնական տարվա ընթացքում իրավաբանական կլինիկայի ուսանողները Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում մասնակցել են դատաքննությունների՝ քննված գործերի մասին իրենց կարծիքը ներկայացնելով իրավաբանական կլինիկայի «Փաստաբանական հմտություններ» դասընթացին:

Հաշվետու ժամանակահատվածում իրավաբանական կլինիկայում խորացված ուսուցում են անցել 15 ուսանողներ, որոնք 145 քաղաքացիների տրամադրել են անվճար իրավաբանական խորհրդատվություն:

2010 թվականի հոկտեմբեր – 2011թ. ապրիլ ամիսներին իրավաբանական կլինիկայի ուսանողները «Շրջիկ կլինիկա» ծրագրի շրջանակներում հանդիպումներ են կազմակերպել նաև մարզի 12 գյուղական համայնքներում, տեղի բնակիչներին հուզող բազմաթիվ իրավաբանական խնդիրների մասին տվել պարզաբանումներ:

ԳՊՀ իրավաբանական կլինիկայի բոլոր ուսանողները Ծաղկաձորում մասնակցել են Ամերիկյան իրավաբանների ընկերակցության կողմից կազմակերպված «Աշնանային դպրոց 2010»-ին և «Գարնանային դպրոց 2011»-ին՝ ստանալով մասնակցության վկայականներ, հավաստագրեր:

«Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակներում իրավաբանական կլինիկան 2010-2011 ուս.տարում «Աշխատանքային իրավունք» և «Ընտանեկան իրավունք» թեմաներով կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ, սեմինարներ, որոնց մասնակցել են շուրջ 200 քաղաքացիներ:

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան փորձում է լուծել կարևոր խնդիր՝ օժանդակելով սոցիալապես անապահով քաղաքացիներին, անվճար խորհրդատվություն մատուցելով առաջին հերթին կանանց և երեխաներին, ինչպես նաև անվճարունակ անձանց: Կարևոր է, որ իրավաբանական կլինիկան փորձում է սովորողների տեսական գիտելիքները հարստացնել պրակտիկ հմտություններով՝ ուսանողներին տալով անհրաժեշտ իմացություն՝ գործնական աշխատանքով զբաղվելու համար:

Իրավաբանական կլինիկայում դասավանդում են ժամանակակից դասավանդման մեթոդներին տիրապետող և տարբեր ծրագրերով արտերկրում վերապատրաստում անցած դասախոսներ:

2010-2011 ուսումնական տարում ԳՊՀ իրավագիտության բաժնում ներդրվել է մագիստրոսական հատուկ դասընթաց՝ սոցիալական հատուկ խմբերի իրավունքների պաշտպանության հիմնախնդիրների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակաշրջանում Իրավաբանական կլինիկայում տարբեր թեմաներով սեմինարներ են անցկացրել ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան, ՄԱԿ-ի գրասենյակի և այլ կազմակերպությունների փորձառու իրավաբաններ և փորձագետներ:

Իրավաբանական կլինիկայի դասախոսները մասնակցել են նաև ABA/ROLI Հայաստանյան գրասենյակի, ՄԱԿ-ի Փախստականների գործերով հանձնակատարի հայաստանյան գրասենյակի և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինար-քննարկումների, որակավորման բարձրացման դասընթացների:

Իրավաբանական կլինիկան շարունակում է համագործակցել Հայաստանի իրավաբանական կլինիկաների, Գավառի մանկատան հետ և այս տարի ակտիվորեն մասնակցում է «Հայաստանի իրավաբանական կլինիկական կրթության» ասոցիացիայի կայացման գործին:

ՏՆՏԵՍԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական գծով պրոռեկտոր, իրավագիտության թեկնածու՝ Ապրոյան Արսեն Հրաչիկի

2010թ. սեպտեմբերին հաստատվեց համալսարանի տնտեսական գործունեության տարեկան պլանը, որը ներառում էր 2010-2011 ուսումնական տարվա համար նախատեսված գործողությունների ժամանակացույցը: Ըստ պլանի՝ կազմակերպվել է ավելի քան 24 աշխատանքային հանդիպում տնտեսատեխնիկական աշխատակիցների հետ, քննարկվել են աշխատանքային գործունեության հիմնական ուղղությունները, ծագած խնդիրները, դրանց օպերատիվ լուծման միջոցները: Ներբուհական տնտեսությունը կազմակերպելիս՝ օգտագործվել է ինչպես համալսարանի տնտեսական աշխատակիցների, այնպես էլ այլ կազմակերպությունների մասնագիտացված աշխատակիցների ներուժը:

Հստակեցվել են համալսարանի տնտեսատեխնիկական աշխատակազմի հաստիքները, կատարվել է գործառույթների տարանջատում հիսուներկու տնտեսատեխնիկական աշխատակիցների միջև, ճշտագրվել են նրանց պարտականությունները, կարևորվել է համալսարանի տնտեսական աշխատակիցների կողմից իրականացվող աշխատանքների կատարման որակը: Իրականացվել են պարբերական ստուգումներ, գնահատումներ, բացահայտվել են թերությունները և միջոցներ ձեռնարկվել դրանց վերացման ուղղությամբ:

Ըստ ԳՊԴ տնտեսատեխնիկական անձնակազմի գործունեության կանոնակարգի՝ համալսարանի տնտեսատեխնիկական անձնակազմը բուհի կառուցվածքային ստորաբաժանումներից է, որը համալսարանի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և որակյալ կրթական գործընթաց ապահովելու նպատակով միավորում է համալսարանի տեխնիկական, անվտանգության ապահովման, տնտեսական, սպասարկման ոլորտների աշխատակիցներին:

Համալսարանի տնտեսատեխնիկական գործունեությունն իրականացվել է հետևյալ բաժինների ուժերով.

- տեխնիկական և անվտանգության ապահովման բաժին (համակարգչային տեխնիկայի շահագործման մասնագետներ, ճարտարագետ, էլեկտրիկ, հյուսն, հնոցապաններ, սանտեխնիկ, բուժքույր և այլն),

- տնտեսական բաժին (պահեստապետ, գնորդ, պարետներ, տնտեսուհիներ, բանվոր),

- սպասարկման բաժին (հսկիչներ, վարորդներ):

Աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով յուրաքանչյուր աշխատակցին առաջադրվող խնդիրները պարզաբանվել են, համակարգվել է

նրանց կուլեկտիվ աշխատանքը:

2011 թվականի հունվարից 10-20%-ով բարձրացվել են տնտեսատեխնիկական անձնակազմի աշխատավարձերը: Բոլոր աշխատակիցների աշխատավարձերը վճարվել են ժամանակին, կիրառվել են աշխատակիցների նյութական խրախուսման միջոցներ:

2011 թվականի Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ դրամական պարգևատրումներ են ստացել տնտեսական աշխատակազմի բոլոր անդամները: Դրամական պարգևատրման ձևով խրախուսվել են նաև նրանք, ովքեր մասնակցել են համալսարանում իրականացված մասնակի վերանորոգման աշխատանքներին:

Հաշվետու ժամականահատվածում

1. Կահավորվել է ԳՊԴ պատմահնագիտական թանգարանը:

2. Փոխվել են ԳՊԴ գլխավոր մասնաշենքի բոլոր պատուհանները, ԳՊԴ բանասիրական ֆակուլտետի բոլոր դռները:

3. ԳՊԴ գլխավոր մասնաշենքում շահագործման է հանձնվել նոր՝ համակարգչային նորագույն տեխնիկայով զինված, կահավորված համակարգչային լսարանը:

4. 2011 թվականի մայիս ամսից գործում է ԳՊԴ գրախանութը, պատճենահանման կենտրոնը:

5. ԳՊԴ ակադեմիական քաղաքականության վարչությանը, որակի ապահովման բաժնին, բոլոր ամբիոններին տրամադրվել են նոր գրասեղաններ:

6. Ամառային արձակուրդների ընթացքում մասնակի վերանորոգման աշխատանքներ են իրականացվել ԳՊԴ բոլոր մասնաշենքերում, ԳՊԴ դահլիճում:

7. Վերանորոգվել են ամբիոնները, ինչպես նաև հանրակացարանի մի քանի սենյակ և միջանցքը, տեղադրվել են եվրոպատուհաններ և դռներ:

Հաշվետու տարվա ընթացքում համակարգչային տեխնիկայի շահագործման (ՀՏՀ) բաժնի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Կատարվել է ամբողջ համակարգչային տեխնիկայի ընթացիկ ծրագրային սպասարկում (հակավիրուսային, օֆիսային և հարակից այլ ծրագրերի տեղադրում և թարմացում):

- Միավորվել է երեք մասնաշենքերի համակարգչային ցանցը: Կապված որոշ սկզբունքային փոփոխությունների հետ՝ կատարվել է ընդհանուր ցանցի կառուցվածքի վերանայում և ներկայումս ընթանում են աշխատանքներ երեք մասնաշենքերի համակարգչային ցանցերը համատեղելի դարձնելու և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն ապահովելու ուղղությամբ:

- ՀՏՀ բաժնի կողմից կատարվել են նաև ընթացիկ այլ աշխատանքներ՝ տպիչների լիցքավորում և անսարքությունների վերացում, համակարգիչների ծրագրային և մեխանիկական խոտանների վերացում և կարգավորում:

2011-2012 ուսումնական տարվա համար նախատեսվել է՝

1. Ֆինանսավորման առկայության դեպքում հիմնանորոգել ԳՊԴ նոր ուսանողական հանրակացարանը,

2. նորոգել ԳՊԴ գլխավոր մասնաշենքի շքամուտքը:

Չեռահար նպատակներ են՝

1. ստեղծել նոր քիմիայի լաբորատորիա,
2. իրականացնել դասախոսական հանրակացարանի բարեկարգման աշխատանքներ,
3. վերանորոգել առնվազն 6 լսարաններ, համակարգչային թիվ 1 լսարանը,
4. բարեկարգել ԳՊԴ մարզադահլիճները, մարզադաշտերը,
5. ԳՊԴ բոլոր ստորաբաժանումներին ապահովել համացանցին միանալու հնարավորություն:

Չաշվետու ժամանակաշրջանում ձեռք են բերվել տնտեսական, տեխնիկական, գրենական այն բոլոր ապրանքներն ու նյութերը, որոնք անհրաժեշտ են համալսարանի գործունեության բոլոր ոլորտների պատշաճ սպասարկման և որակյալ կրթական գործընթաց ապահովելու համար:

2010-2011 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԳՎԱԿՈՒԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇՎՐԺԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ

ԳՊՀ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ՝
Նոնա Մուրադյան
ԳՊՀ www.gsu.am կայքի ծրագրավորող՝ *Վարազդատ Ավետիսյան*

01.09.2010թ. 18-ՐԴ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՄԵԿԸ ԳՊՀ-ՈՒՄ

Սեպտեմբերմեկյան ղողանջների ներքո ԳՊՀ-ում մեկնարկեց 2010-2011 ուսումնական տարին: Ավանդույթի համաձայն՝ համալսարանում կազմակերպվել էր միջոցառում՝ նվիրված գիտելիքի, գրի և դպրության օրվան: Առաջին կուրսեցիներին, ովքեր ընդունելության քննություններից ստացել էին բարձր միավորներ, նվիրվեցին ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» գիրքը և առաջին կուրսի ուսանողի ուղեցույցը: Առաջին կուրսեցիների մուտքը համալսարան մշանավորվեց ուսանողի երդման հանդիսավոր արարողությամբ:

07.09-28.09.2010թ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ

Սեպտեմբեր ամսվա ընթացքում Գավառի պետական համալսարանի 1-ին և 2-րդ կուրսի ուսանողներին հնարավորություն էր ընձեռվել այցելելու հայկական պատմամշակութային վայրեր: Գավառի պետական համալսարանը և «Օգնություն հանրությանը» կազմակերպությունը՝ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի հովանավորությամբ, ԳՊՀ ուսանողների համար կազմակերպել էին էքսկուրսիաների շարք Երևանի պատմամշակութային հաստատություններ, այցելություններ թանգարաններ, կինոթատրոններ:

09.09.2010թ. ՍԹԻՎԵՆ ՔԵՍԱԼԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանում սեմինար-քննարկում էր կազմակերպվել: Սեմինարը վարում էին ԱՄՆ դեսպանության արդարադատության դեպարտամենտի իրավական խորհրդատու Սթիվեն Քեսալերը և իրավաբան Դավիթ Խաչատրյանը: Սեմինար-քննարկմանը մասնակցում էին իրավագիտության բաժնի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողներ: Տեղի ունեցավ հետաքրքիր և ուսանե-

լի քննարկում:

20.09.2010թ. ԲԱՆԱՎԻՃՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ

ԳՊԶ Միքայել Նալբանդյանի անվան բանավեճի ակումբում քննարկվում են ուսանողներին հետաքրքրող տարաբնույթ հարցեր: «Արդյո՞ք պետք է կիրառել մահապատիժը՝ որպես բացառիկ պատժամիջոց» թեմայով քննարկում տեղի ունեցավ ԳՊԶ բանավեճի ակումբի և ԵՊՀ Երիտասարդ համալսարանականների միության անդամների միջև: Բանավեճի ընթացքում կողմերից յուրաքանչյուրը ներկայացրեց մահապատիժի վերաբերյալ կողմ և դեմ փաստարկներ: Ուսանողները հիմնավորեցին, որ անընդունելի է մահապատիժը՝ որպես քրեական պատժատեսակ:

22.09.2010թ. ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՄԱՆ ՏՈՆԸ

ԳՊԶ-ում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակմանը: Միջոցառումը կրում էր հայրենասիրական բնույթ, ուղեկցվում էր պատմական ակնարկով, հայրենասիրական երգերով ու բանաստեղծություններով:

30.09.2010թ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐ

ԳՊԶ-ում տեղի ունեցավ հանդիպում «Անելիք» բանկի ուսանողական վարկերի տրամադրման ծրագրի ավագ խորհրդատու Արման Հակոբյանի և ֆինանսական սեկտորի խորհրդատու Ռիչերդ Քիթչի հետ: Հանդիպման նպատակն էր ծանոթանալ ուսանողների խնդիրներին, ուսանողական վարկերի տրամադրման վերաբերյալ նրանց տեսակետներին: Հանդիպման ընթացքում հյուրերը ծանոթացրեցին ուսանողական վարկերից օգտվելու կանոններին և ուսանողական երկարաժամկետ վարկավորմանը:

01.10.2010թ. ՈՒՍԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՊԶ-ում տեղի ունեցան ուսանողական խորհրդի նախագահի ընտրություններ՝ անմիջական ժողովրդավարության ճանապարհով: Ուսխորհրդի նախագահի թեկնածուներն էին տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսներ և վարկ բաժնի 4-րդ կուրսի ուսանող Գեղամ Աթեյանը, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտություն բաժնի 4-րդ կուրսի ուսանող Վահան Բաղդասարյանը, տնտեսագիտական ֆակուլտետի ֆինանսներ և վարկ բաժնի 3-րդ կուրսի ուսանող Անդրանիկ Եփրեմյանը, Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Սաթենիկ Թովմասյանը, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտություն բաժնի 4-րդ կուրսի ուսանող Արմեն Շուքուրյանը, հումանիտար մասնագիտու-

թյունների ֆակուլտետի իրավագիտություն բաժնի 1-ին կուրսի ուսանող Գևորգ Պողոսյանը: 201 ձայնով ուսանողական խորհրդի նախագահ ընտրվեց Արմեն Շուքուրյանը

06.10.2010թ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀՅՈՒՐԵՆԿԱԼՎԵՑԻՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

ԳՊԴ-ի բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն բաժնի առաջին կուրսի ուսանողներն այցելեցին ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության դեսպանատուն: Ընդունելությանը ներկա էին ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպան Վիկտոր Կովալենկոն, արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը: Ծրագրի կազմակերպիչները ողջունեցին և շնորհավորեցին առաջին կուրսի ուսանողներին՝ խոստանալով, որ ծրագիրը շարունակական բնույթ է կրելու:

08.10.2010թ. «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ» ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

ԳՊԴ Հր. Աճառյանի անվան լսարանում տեղի ունեցավ հանդիպում Ռուսանդական ծրագրային թիմի և համալսարանի ուսանողների հետ: Խմբի անդամները համառոտ ներկայացրեցին վերջին մեկ տարվա ընթացքում անցկացրած 4 սեմինարները և դրանց ընթացքում քննարկված թեմաները:

30.10.2010թ. «ՀԵԼՈՒԻՆ` ԲՈԼՈՐ ՍՐԲԵՐԻ ՏՈՆԸ»

ԳՊԴ բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզու բաժնի 4-րդ կուրսի ուսանողների և գերմաներեն լեզվի դասախոս Սաթենիկ Հայթյանի նախաձեռնությամբ անցկացվեց «Հելոուին՝ բոլոր սրբերի տոնը» թեմայով հատուկ դասը: Ուսանողները ներկայացրեցին «Հելոուին» տոնի պատմությունը և ավանդական արարողությունները:

06.11.2010թ. ԱՆՁԵՌԱԿԵՐՏ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՊԴ-ում հիմնադրվեց Տուրիզմի ակումբ, որի շրջանակում ԳՊԴ վարչական եւ պրոֆեսորադասախոսական անձնակազմը այցելեց դարավոր մշակութային հարստություն ունեցող Նորատուսի խաչքարեր եւ հարակից պատմամշակութային վայրեր: Այցելության նպատակը մեր հայրենիքի անձեռակերտ հրաշալիքների հետ ծանոթությունն էր:

11.11.2010թ. ՖՈՒՏԲՈԼԻ ՄԻՋՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Մեկնարկեց ԳՊԴ-ի մինիֆուտբոլի առաջնությունը: Մրցույթին մասնակցում էին տնտեսագիտական ֆակուլտետից «Քյավառ», «Արաքս» և «Ֆինանսիստ»

թիմերը: Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետից մասնակցում էին «Իրավաբան» և «Մարտունի» հավաքական թիմերը: Հետաքրքիր և լարված պայքար ծավալվեց «Քյավառ» և «Մարտունի» հավաքական թիմերի միջև: «Քյավառ»-«Մարտունի» հանդիպումը ավարտվեց վերջինիս հաղթանակով: 12-7 հաշվով հաղթանակ տոնեց «Մարտունի» թիմը:

11.11-14.11.2010թ. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ծաղկաձորում տեղի ունեցավ սեմինար-քննարկում «Իրավաբանական գիր և վերլուծություն» թեմայով: Սեմինարը կազմակերպել էր Ամերիկյան իրավաբանների ասոցիացիան: Սեմինար-քննարկմանը մասնակցում էին ԳՊԴ հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողները:

17.11.2010թ. ՀԱՄԱՍՈՒՐՈՐԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԳՊԴ բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ գիտաժողով՝ «Համամուրակային հիմնախնդիրները» թեմայով՝ նվիրված ուսանողների միջազգային օրվան: Զեկուցումներին հաջորդում էին բուռն քննարկումները: Գիտաժողովը հետաքրքիր էր և բովանդակալից:

19.11.2010թ. ՍԻՐՈ ՂԻՄԱՆԿԱՐ՝ ԱՇՆԱՆ ԳՈՒՅՆԵՐՈՎ

Աշնան վերջին միջոցառումը կրում էր «Սիրո դիմանկար՝ աշնան գույներով» խորագիրը: Միջոցառմանը մասնակցում էին հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մանկավարժություն և մեթոդիկա բաժնի ուսանողները, ինչպես նաև ԳՊԴ-ում գործող նկարչական ստուդիայի ուսանողները: Ներկայացվեցին Վան Գոգի կյանքը և ստեղծագործությունները: Մասնակիցները հանդես եկան սիրո և աշնան մասին երգերով ու բանաստեղծություններով:

24.11.2010թ. ՔՆՆԱՐԿՈՒՄ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԻ ԱԿՈՒՄՔՈՒՄ

ԳՊԴ-ում տեղի ունեցավ հերթական հանդիպումը՝ նվիրված Գեղարքունիքի մարզում փոքր և միջին ձեռնարկատիրության արդի հիմնախնդիրներին և հեռանկարներին: Տնտեսագետների ակումբի անդամները ներկայացրեցին իրենց միամսյա ուսումնասիրությունների արդյունքները և համապատասխան առաջարկություններ:

Հանդիպմանը ներկա էին Գավառի հարկային տեսչության, «Ազբա կրեդիտ ագրիկոլ» բանկի, Ջինիշյանի հիշատակի հիմնադրամի աշխատակիցներ, անհատ ձեռնարկատերեր:

27.11.2010թ. ՄԻԶՔՈՒՀԱԿԱՆ 2-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՎԱՆԱԶՈՐՈՒՄ

Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում տեղի ունեցավ միջբուհական ուսանողական 2-րդ գիտաժողով: Գավառի պետական համալսարանից գիտաժողովին մասնակցեցին բնագիտական ֆակուլտետի կենսաբանություն բաժնի ուսանողուհիներ Մարիամ Գուրոլյանը և Անուշ Պետրոսյանը, աշխարհագրություն բաժնից՝ Մարինե Ստեփանյանը և Ալինա Զոհրաբյանը:

04.12.2010թ. ՓՈՔՐ ԱԶԳԻ ՄԵԾ ՏԱՂԱՆԴՆԵՐԸ

Անգլերեն լեզու և գրականություն բաժնի ուսանողները՝ դասախոս Նանա Ռափյանի նախաձեռնությամբ, միջոցառում էին կազմակերպել «Փոքր ազգի մեծ տաղանդները» խորագրով՝ նվիրված թարգմանչաց տոնին: Միջոցառման ընթացքում ուսանողները ներկայացրեցին անգլերեն թարգմանություններ հայ մեծանուն գրողների բանաստեղծություններից ու երգերից: Միջոցառումը համեմվեց Հովհաննես Թումանյանի «Կիկոսի մահը» ստեղծագործության բեմականացմամբ՝ անգլերեն լեզվով:

05.12.2010թ. ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գավառի հոգևոր հովիվ Տեր Գնել Մարտիրոսյանը և Հայ առաքելական եկեղեցու Գեղարքունյանց թեմի երիտասարդաց միության ատենապետ Թերեզա Ղարաբաղյանը հանդիպեցին ԳՊՀ տարբեր ֆակուլտետների ուսանողների հետ: Ներկայացվեց Գեղարքունյանց թեմի երիտասարդաց միության իրականացրած գործունեությունը:

10.12.2010թ. ԶԵԿՈՒՑՈՒՄ ԵՆ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ԳՊՀ նիստերի դահլիճում տեղի ունեցավ Իրավաբանական կլինիկայի ուսանողների գիտական կոնֆերանս: ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտություն բաժնի ուսանողները ներկայացրեցին իրենց զեկուցումները՝ նվիրված ՀՀ Սահմանադրության ընդունման 15-ամյակին:

24.12-25.12.2010թ. ԳՊՀ 13-ՐԴ ՀՈՔԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

ԳՊՀ-ի 13-րդ հոբեյանական գիտաժողովը նվիրված էր մեր անվանի հայրենակից, վաստակաշատ գիտնական ու մանկավարժ, գիտության վաստակավոր գործիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 1963-1966թթ. Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հրանտ Բատիկյանի ծննդյան 100-ամյակին:

Հրանտ Բատիկյանի կյանքն ու գործունեությունը ներկայացրեց ՌԴ բնական

գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ԳՊՀ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արմեն Սիմոնյանը: Համաձայն ծրագրի՝ գիտաժողովը շարունակեց աշխատանքը առանձին բաժանմունքներով՝ բնական և հումանիտար գիտությունների գծով:

20.01.2011թ. ՆՇՎԵՑ ԳԱՐԵԳԻՆ ՆԺՂԵՅԻ ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՍՅԱԿԸ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված հայ ժողովրդի արժանի գավակ, մեծ գորավար ու փիլիսոփա, ազգային բարոյախոս, պետական ու քաղաքական գործիչ Գարեգին Նժդեհի ծննդյան 125-ամյակին:

Կազմակերպիչները նպատակ ունեին Նժդեհի կյանքի ու գործունեության բացառիկ օրինակով սերմանել հայրենասիրություն և երիտասարդությանը դաստիարակել նժդեհական ոգով ու գաղափարներով:

24.01.2011թ. ԹԱՓԱՆՑԻԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ սեմինար՝ «Թափանցիկ կրթությունը Հայաստանում» թեմայով՝ ծրագրի փորձագետ, դասընթացավար Աշոտ Հակոբյանի, ծրագրի ղեկավար Ինեսսա Հակոբջանյանի և ծրագրի համակարգող Անժելա Սաղաթյանի մասնակցությամբ:

Դասընթացը ներառում էր հետևյալ թեմաները՝ կոռուպցիայի պատճառները, տեսակները, կանխման միջոցները: Ուսանողներն ակտիվորեն մասնակցեցին սեմինարին:

25.01.2011թ. «ՏՍՏՅԱՆԱՅԻ ՕՐԿԱՆ» ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՈՒՄ

Ռուս-հայկական երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնը Մոսկվայի տանը կազմակերպել էր փառատոն՝ նվիրված «Տատյանայի օրվան», որին մասնակցում էին նաև ԳՊՀ ուսանողները:

Փառատոնում ԳՊՀ մասնակիցները ներկայացան ասմունքով ու երաժշտական կատարումներով: Հեռակա ուսուցման ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն բաժնի 1-ին կուրսի ուսանող Արտակ Բարսեղյանը լավագույն ասմունքի համար արժանացավ ժյուրիի խրախուսական մրցանակի:

ԳՊՀ ուսանողները վերադարձան պատվոգրերով և հուշանվերներով:

28.01.2011թ. ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՈՒՍԱՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ հարցազրույց «ERASMUS MUNDUS. Action 2» ծրագրի առաջին փուլի մասնակիցների՝ ԳՊՀ աշխատակիցների և դասախոսների հետ:

Մասնակիցները ԳՊՀ վեց աշխատակիցներն էին: Հանձնաժողովի անդամներն առաջին հերթին ստուգեցին մասնակիցների անգլերեն լեզվի իմացություն-

ԳՊՀ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

ըն: Թեկնածությունները ներկայացվեցին եվրոպական գործընկերներին:
«ERASMUS MUNDUS. Action 2» ծրագրի առաջին փուլի հաղթողներն էին՝
Նանա Ռափյանը, Լիլիթ Թոռչյանը, Սաթենիկ Սարգսյանը, Աստղիկ Յովեյանը,
Լալա Մկրտչյանը և Ռուզան Սարգսյանը:

06.02.2011թ. ԾՐԱԳՐԵՐ, ՈՐՈՆՔ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԴԱՌՆՈՒՄ

ԳՊՀ-ում «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր. 2010-2012» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ Ուսանողական նախաձեռնող խմբերի ներկայացրած փոքր դրամաշնորհային նախագիծ-առաջարկների քննարկման և հաստատման նիստ:

Ուսանողական խմբերի կողմից ներկայացվել էին երեք նախագիծ-առաջարկներ՝ «Նոր շունչ» սեղանի թեմիսի մրցաշար ԳՊՀ-ում», «Հաշմանդամ լինել, չի նշանակում դատապարտված լինել», «Ճանաչենք Գավառ համայնքը» խորագրերով:

Դրամաշնորհային խորհրդի նիստի արդյունքում հանձնաժողովի անդամներն ընտրեցին «Նոր շունչ» սեղանի թեմիսի մրցաշար ԳՊՀ-ում» ծրագիրը:

18.02.2011թ. ՍՈՎՈՐԵԼ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ, ԱՇԽԱՏԵԼ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Տեղի ունեցավ հանդիպում Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի ու Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC/ԱԵՊԼԱԿ) փորձագետների հետ: Հանդիպմանը մասնակցում էին ԳՊՀ աշխատակիցներն ու տարբեր բաժինների ուսանողներ:

Մասնակիցներին ներկայացվեցին Հայաստան-Եվրամիություն հարաբերությունները և դրանց զարգացման հեռանկարները, ապա քննարկվեցին Եվրամիության կողմից իրականացվող «Erasmus Mundus», «Tempus» և «Youth in action» ուսանողական երկարաժամկետ ու կարճաժամկետ ուսուցողական ծրագրերը:

20.02.2011թ. ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՊՀ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ

ԳՊՀ-ի գրադարանը ստեղծվել է գրքերի նվիրատվության շնորհիվ, իսկ բուհի ուսանողները շարունակում են պահպանել այդ գեղեցիկ ավանդույթը:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողները գրադարանին նվիրեցին 50 ամուն գիրք: Ուսանողների նախաձեռնությանը միացել էին նաև ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և բանասիրական ֆակուլտետի դեկան Վիկտոր Կատվայանը:

24.02.2011թ. ԳՊՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի կառավարման բարձրա-

ԳՊՀ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

գույն մարմնի՝ խորհրդի նիստ: Օրակարգում ընդգրկված էին հարցեր Գավառի պետական համալսարանի տարեկան գործունեության հաշվետվության ներկայացման և քննարկման, 2011թ-ի բյուջեի հաստատման վերաբերյալ:

ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը ներկայացրեց համալսարանի 2009-2010 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և բուհի զարգացման հայեցակարգը:

26.02.2011թ. ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍԸ՝ ՍԻՐՈ ԲԱՐԵՆՈՍ

ԳՊՀ-ում կրթական ծրագրերի իրականացումից բացի, կարևորվում է նաև ուսանողների հոգևոր-գեղագիտական դաստիարակությունը: Այս նպատակով տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Սուրբ Սարգսի տոնին: Միջոցառումը կազմակերպել էր ԳՊՀ ուսանողական խորհուրդը:

Սուրբ Սարգսի տոնի մասին տեղեկություններ հաղորդելուց բացի, միջոցառման մասնակիցները հանդես եկան երաժշտական կատարումներով: Նրանք հորդորեցին պայքարել սիրո համար և այն պահել ու փայփայել՝ խնդրելով Սուրբ Սարգսի բարեխոսությունը:

Հայ առաքելական եկեղեցու հոգևոր սպասավոր Տեր Գնել քահանա Մարտիրոսյանը մեկնաբանեց տոնի խորհուրդը:

03.03.2011թ. ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԾԱՌԱՅԵԼԸ ԲՈԼՈՐԻՍ ՊԱՐՏԵՆ Է

Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր ՀՀ զինված ուժերի երկրորդ բանակային զորամիավորման հրամանատար, կայազորի պետ, գնդապետ Հովհաննես Օհանյանին, կայազորի ներկայացուցիչներին:

Հանդիպման նպատակն էր բանակ-հասարակություն կապի ամրապնդումը, բանակային զորամիավորման ստեղծման պատմության և զինվորների ծառայության հիմնական կանոնների ու սկզբունքների ներկայացումը:

04.03.2011թ. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԸ՝ ՀԱՄԱՏԵՂ ՈՒԺԵՐՈՎ

ԳՊՀ-ում կազմակերպվեց «Կոռուպցիան կրթության ոլորտում» թեմայով սեմինար-քննարկում: Սեմինարի ընթացքում քննարկվեցին կրթության համակարգում քաղաքացիական հասարակության ինստիտուտների և բիզնես ոլորտի ներկայացուցիչների համատեղ ջանքերով կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու կառուցակարգերը:

09.03.2011թ. ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՍԱՐՏԻ 8-Ը

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում սովորող տղաները՝ դեկան Սամվել Ամիրխանյանի գլխավորությամբ, դիմավորեցին ուսանողուհիներին՝ ջերմ շնորհավորանքներով և ծաղիկներով:

ԳՊՀ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

Մարտի 8-ը այս կերպ նշելը ֆակուլտետում դարձել է ավանդույթ: Հաճելի երաժշտություն, ջերմ մթնոլորտ ու շնորհավորանքներ. այս ամենի շնորհիվ օրը տոնական էր ու շատ տրամադրող:

19.03.2011թ. ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԶՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

«Erasmus Mundus. Action 2» ծրագրի ԳՊՀ համակարգող, ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողներին ներկայացրեց Եվրոպայում կրթություն ստանալու հնարավորությունները:

Վերջում մասնակիցներին բաժանվեցին հայտադիմումներ:

**19.03.2011թ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝
ՆՎԻՐՎԱԾ ՆԱՆՏԵՆՆՈԼՈԳԻԱՆԵՐԻՆ**

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի ուսանողները կազմակերպել էին գիտաժողով՝ նվիրված նաև տեխնոլոգիաներին:

Բացման խոսքով հանդես եկավ ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկայի ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Հենրիկ Մելիքյանը:

Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 4-րդ կուրսի ուսանողները ներկայացրեցին զեկույցներ նաև տեխնոլոգիաներին վերաբերող թեմաներով:

26.03.2011թ. «ԳՐԱԿԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐԸ» ԶՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ հանդիպում ՀՀ Գրողների միության նախագահ Լևոն Անանյանի, բանաստեղծ, գրականագետ Հենրիկ Էդոյանի և գրող, թարգմանիչ Հակոբ Մովսեսի հետ:

«Գրական խաչմերուկ»-ի շրջանակում բուհի ուսանողներն ու դասախոսներն ունկնդրեցին գրողներին, լսեցին նրանց ստեղծագործություններից, ծավալվեց հետաքրքիր քննարկում:

26.03.2011թ. ՐԱՖՖՈՒ «ՍԱՄՎԵԼ»-125

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ Րաֆֆու «Սամվել» պատմավեպի լույսընծայման 125-ամյակին նվիրված միջոցառում:

Միջոցառմանը ներկա էին Հայաստանի գրողների միության նախագահ Լևոն Անանյանը, միության անդամներ Հենրիկ Էդոյանն ու Հակոբ Մովսեսը, «Ռուս համագործակցություն» ներկայացուցչության պատվիրակությունը, Մոսկվայի սոցիոլոգիական գիտությունների համալսարանի ռեկտոր Էռնեստ Գրիգորյանը, Մոսկվայի տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղի ռեկտոր Սեդրակ Վարդանյանը, այլ

հյուրեր:

Միջոցառման ընթացքում ներկայացվեցին Րաֆֆու կյանքն ու գրական ժառանգությունը, անդրադարձ եղավ Հրանտ Հակոբյանի «Եղեռնի դատապարտումը Րաֆֆու երկերում» մենագրությանը:

27.03.2011թ. ԶԼՍ-ՆԵՐԻ ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

ԳՊԴ-ում տեղի ունեցավ հանդիպում Հայկական 2-րդ հեռուստատալիքի հաղորդավար Գայանե Փայտյանի հետ: Ուսանողները նախապես պատրաստել էին զեկուցումներ՝ «Երիտասարդական լսարանի վրա զանգվածային լրատվական միջոցների դրական և բացասական ազդեցության հիմնախնդիրները» թեմայով:

Ուսանողները կարևորեցին գիտական, ուսումնական, տեղեկատվական, դաստիարակչական նշանակություն ունեցող հաղորդումները:

Հանդիպման ավարտին Գայանե Փայտյանը պատասխանեց ուսանողների հարցերին:

28.03.2011թ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԴԵՍ ԵՆ ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻՆ

Մարտի 27-ին և 28-ին Դիլիջանում քաղաքացիական հասարակության զարգացման «ՀԿ կենտրոնի» կողմից կազմակերպվել էր երկօրյա սեմինար՝ «Ծրագրի կառավարում», «Ծրագրի առաջարկի կազմում և մշակում», «Շահերի պաշտպանության գործընթացում ԶԼՍ-ների ներգրավում» թեմաներով:

Սեմինարին մասնակցում էին Գավառի պետական համալսարանի և Վանաձորի Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի ուսանողները: ԳՊԴ ուսանողները ներկայացրեցին կոռուպցիան դատապարտող դրամաշնորհային ծրագիր:

01.04.2011թ. ԳՊԴ ՌԵԿՏՈՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑ

Տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետությունում մանկավարժական կրթություն իրականացնող բուհերի միջբուհական կոնսորցիումի նիստ խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Քննարկվեցին կոնսորցիումի հետագա գործունեության հիմնական ուղղությունները: Կոնսորցիումի արդյունավետ գործունեությանը նպաստելու, մանկավարժական կրթության ոլորտում ունեցած ներդրման համար Ռուզաննա Հակոբյանը պարգևատրվեց Խ. Աբովյանի անվան ոսկե մեդալով:

01.04.2011թ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԵՏ

ՀՀ կառավարության ղեկավարն ընդունեց միջբուհական կոնսորցիումի անդամ բուհերի ղեկավարներին: Վարչապետը կարևորեց մանկավարժական կրթության ոլորտում բուհերի համագործակցությունը, համատեղ ծրագրերի իրականացումը:

ԳՊԴ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

նացումը, որակյալ, մրցունակ կադրերի պատրաստումը, համալսարանի նյութատեխնիկական բազայի հարստացումը: Վարչապետին ներկայացվեցին կոնսորցիումի գործունեության հիմնական ուղղություններն ու անելիքները:

02.04.2011թ. ՆՈՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ԳՊԴ տնտեսագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ կլոր սեղան «Նորագույն կրթական տեխնոլոգիաներ» թեմայով: Թեմայի վերաբերյալ զեկույց ներկայացրեց «Ֆինանսներ» ամբիոնի վարիչ Վարազդատ Կարապետյանը: Ցուցադրված ֆիլմի միջոցով պարոն Կարապետյանը ներկայացրեց արդի կրթական համակարգի հիմնախնդիրները և անդրադարձավ ուսանողների հնարավորությունների և ունակությունների բացահայտման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, նորագույն կրթական տեխնոլոգիաների կիրառմանը:

Ծավալվեց հետաքրքիր քննարկում ուսանողների և դասախոսների մասնակցությամբ:

06.04.2011թ. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ՈՒՂՂԱԾ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆԸ

«Բարձրագույն ուսումնական հաստատություններում թափանցիկության և արդարության ավելացում» թեմայով միջազգային համաժողովին ներկայացվեց Գավառի պետական համալսարանի հակակոռուպցիոն փորձը:

Համաժողովի նախաձեռնողներն էին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության «Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիրը», ԵԱՀԿ երևանյան գրասենյակը:

06.04.2011թ. ՄԻԶՈՑԱՌՈՒՄ՝ ՆԿԻՐՎԱԾ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ

ԳՊԴ մեծ դահլիճում տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի և ուսխորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել էր կանանց և մայրությանը նվիրված միջոցառում:

Ցերեկույթի ընթացքում ԳՊԴ ուսանողները երաժշտական կատարումներով, ջութակի կախարդական լարերի հնչյուններով, ասմունքով և նուրբ հումորով հիացրեցին հանդիսատեսին:

07.04.2011թ. ՄԱՅՐԸ ՍՐԲՈՒԹՅԱՆ ՍՐԲՈՑ Է

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ուսանողական խորհուրդը կազմակերպել էր միջոցառում՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին:

Միջոցառման ընթացքում մասնակիցների կողմից հնչեցին գնահատանքի խոսքեր՝ ուղղված հայ մայրերին ու տատիկներին:

Ուսանողական խորհուրդը կազմակերպել էր նաև կանանց հասարակական ակտիվությանը վերաբերող տեսահոլովակի ցուցադրություն, ապա տեղի ունեցավ հետաքրքիր քննարկում:

07.04.2011թ. ՄԵՆՔ ՄԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ, ՄԵՐ ՊԱՊԵՐԻ ՏՈՒՆ ԷԻՆՔ ԱՅՑԵԼԵԼ...

ԳՊՀ Հրաչյա Աճառյանի անվան լսարանում տեղի ունեցավ բաց դաս, որը վարեցին Արևմտյան Հայաստանից վերադարձած դասախոսներ՝ Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան Վիկտոր Կատվալյանը, ակադեմիական քաղաքականության վարչության պետ Ալինա Ղարիբյանը, պատմության ամբիոնի վարիչ Համլետ Հարությունյանը, ֆիզիկամաթեմատիկական և քիմիական գիտությունների ամբիոնի վարիչ Ֆրունզե Ավետիսյանը և հայոց լեզվի ամբիոնի դասախոս, ԳՊՀ գիտական քարտուղար Թաթուլ Ասոյանը:

Նրանք պատմեցին Կարս, Անի, Իգդիր, Բայազետ, Վան, Մուշ, Բիթլիս, Դիարբեքիր և Արդահան քաղաքներ կատարած ուխտագնացության մասին: ԳՊՀ դասախոսները վայելել էին Վանա լճի, Աղթամար կղզու, Սուրբ խաչ եկեղեցու, Վարազվանքի, հայոց խոնարհված մատուռների և խաչքարերի, հայրենի բնաշխարհի անկրկնելի և աննկարագրելի հմայքը, «մկրտություն» ստացել Արածանիում, համտեսել տառելի ձուկը, տեղի հացը:

Հայրենասիրական բաց դասը շատ ջերմ էր ու տպավորիչ:

08.04.2011թ. ՄԱՐՂԸ ԵՎ ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԸ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ բնագիտական ֆակուլտետի 17-րդ ուսանողական գիտաժողովը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին:

Ներկայացվեցին գեկուցումներ բնագիտական ֆակուլտետի տարբեր բաժինների ուսանողների կողմից:

ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված «Մարդը և Երկիր մոլորակը» խորագիրը կրող գիտաժողովի մասնակիցները պատասխանեցին ներկաների հարցերին, ծավալվեց հետաքրքիր քննարկում:

22.04.2011թ. ԳԱՐՈՒՆ Է, ՁՅՈՒՆ Է ԱՐԵԼ...

Ապրիլի 24-ին ընդառաջ՝ տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Մասնակիցները ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու եւ գրականություն բաժնի 1-ին կուրսի ուսանողներն էին: Պատմական փաստերի յուրօրինակ զուգորդմամբ հնչեցին հատվածներ Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմից:

Միջոցառման խորհուրդն էր՝ խոնարհվել անթիվ-անհամար անմեղ զոհերի

հիշատակին, բայց և շարունակել հպարտ, անկոտրում կամքով առաջ նայել՝ նպաստելով ազատ, անկախ Հայաստանի զարգացմանն ու առաջընթացին:

**23.04.2011թ. ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆԿԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
96-ԱՄՅԱԿԻՆ**

ԳՊԴ ուսանողական գիտական ընկերությունը նախաձեռնեց եւ կազմակերպեց ցերեկույթ՝ նվիրված մարդկության դեմ ուղղված ամենասոսկալի ոճիրի՝ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին:

Ուսանողները ներկայացրեցին Հայոց ցեղասպանության միջազգային-իրավական ճանաչման գործընթացը, խորին երախտագիտությամբ անդրադարձան այն պետություններին, որոնք ճանաչել են Հայոց եղեռնը:

29.04.2011թ. ՄԻՋՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ ԳՊՀ-ՈՒՄ

Բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհուրդը կազմակերպել էր միջֆակուլտետային ինտելեկտուալ, երաժշտական, հումորային մրցույթ:

Մրցույթին մասնակցում էին բնագիտական, տնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների թիմերը:

Մրցույթում ամենաինտելեկտուալը ճանաչվեց տնտեսագետների թիմը, ամենաերաժշտականը՝ բնագետների թիմը և ամենահումորայինը՝ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի թիմը:

Միջոցառումը համեմված էր գեղեցիկ երաժշտական կատարումներով, ասմունքով, ուսանողական մանրապատումներով:

30.04.2011թ. ԱՊԱԳԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻՑ

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր ուսանողական գիտաժողով:

Ներկայացվեցին զեկուցումներ՝ նվիրված մանկավարժության արդի հիմնախնդիրներին:

06.05.2011թ. ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՂՈՂԱՆՋՆԵՐ

ԳՊՀ-ում «Սարդարապատի ղողանջներ» խորագիրը կրող ցերեկույթով մեկնարկեց մայիսյան հաղթանակներին նվիրված միջոցառումների շարքը:

Ցերեկույթը նախաձեռնել էր համալսարանի բնագիտական ֆակուլտետի ուսանողական խորհուրդը: Բեմականացվեցին դրվագներ հայ պատմության մեջ վճռորոշ դերակատարություն ունեցած Սարդարապատի ճակատամարտից:

Միջոցառումն ուսանողների յուրօրինակ ուխտն էր՝ արժանի լինելու հայ ժողովրդի ազատագրության համար նահատակված հերոսների հիշատակին, դառ-

նալու Հայոց ազգային արժեքների իսկական կրողը, սիրելի մայր հողն ու մայրենի լեզուն, դառնալու լավ մասնագետներ և պետության համար պիտանի քաղաքացիներ:

07.05.2011թ. ՆՇՎԵՑ ԱՌՆՈ ԲԱԲԱԶԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԸ

Ականավոր կոմպոզիտոր, փայլուն դաշնակահար, հրաշալի մանկավարժ Առնո Բաբաջանյանի ծննդյան 90-ամյակի առթիվ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանողուհիները՝ դասախոս Արփիմե Զարգարյանի օգնությամբ, գեղեցիկ միջոցառում էին կազմակերպել: Ներկայացվեցին Առնո Բաբաջանյանի ստեղծագործական կյանքն ու գործունեությունը, հնչեցին Առնո Բաբաջանյանի լավագույն երաժշտական ստեղծագործությունները:

**13.05.2011թ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝
ՆՎԻՐՎԱԾ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ**

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը՝ աշխարհագրության ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բորիս Մնացականյանի նախաձեռնությամբ, կազմակերպել էր «Սևան. հիմնախնդիրներ, հիմնախնդիրներ» խորագիրը կրող հանրապետական ուսանողական գիտաժողովը: Ուսանողական հանրապետական գիտաժողովին մասնակցում էին ՀՀ տարբեր բուհերի ուսանողներ:

18.05.2011թ. ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ

Գավառի պետական համալսարանում «Տեղեկատվություն երիտասարդությանը» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ «Սահմանադրական իրավունքի հիմունքներ» թեմայով սեմինար-քննարկում: Սեմինարը վարում էր ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը: Ներկայացվեցին սահմանադրական իրավունքի հիմնական դրույթները և զարգացման հեռանկարները: Այս կերպ ԳՊՀ դասախոսները նպաստում են Գեղարքունիքի մարզի երիտասարդության իրավական իրազեկմանը:

20.05.2011թ. ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

ԳՊՀ-ի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնը կազմակերպել էր սլավոնական գրչությանը նվիրված 13-րդ ամենամյա ուսանողական գիտաժողով:

Ռուսաց լեզվի և գրականության բաժնի ուսանողները հանդես եկան գիտական զեկուցումներով՝ նվիրված սլավոնական գրին ու գրականությանը, ժամանակակից ռուսաց լեզվի քերականությանը և արդի միտումներին:

22.05.2011թ. ՀՀ ՍՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՇՆՈՐՀԱՎԱԼԱԳՐԵՐ ՀԱՆՁՆԵՑ

Գավառի պետական համալսարանի նիստերի դահլիճում ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը պատվոգիր հանձնեց ԳՊՀ աշխարհագրության ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բորիս Մնացականյանին և շնորհակալագրեր՝ «Կտոր մը հայրենիք» ուսանողական գիտաժողովի մասնակիցներին:

05.06.2011թ. ՍԵՎԱՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՄԻԱՍՆԱԲԱՐ ԼՈՒԾԵՆՔ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ հանդիպում ՀՀ նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի նախագահ, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Մովսիսյանի հետ:

Պարոն Մովսիսյանը խորությամբ և բազմակողմանիորեն ներկայացրեց Սևանա լճի առջև ծառայած խնդիրները: Բաց դասի ավարտին Վլադիմիր Մովսիսյանը պատասխանեց ուսանողներին և դասախոսներին հետաքրքրող հարցերին:

10.06-14.06.2011թ. ՁԻԱՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԵՄԻՆԱՐ ԳՊՀ-ՈՒՄ

Տեղի ունեցավ սեմինար՝ ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի վերաբերյալ: Սեմինարը կազմակերպվել էր «Նախաձեռնությունների և գործողությունների դաշտավայր» հասարակական կազմակերպության կողմից՝ «World Vision Հայաստան» միջազգային, բարեգործական կազմակերպության Գավառի տարածքային զարգացման ծրագրի ֆինանսավորմամբ:

Սեմինարը վարում էր «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամք» ծրագրի համակարգող Հասնիկ Գրիգորյանը: Բանախոսը ուսանողներին ներկայացրեց ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի տարբերությունները, վարակի աղբյուրներն ու ճանապարհները և կանխարգելման միջոցները:

18.06.2011թ. ԳՈՐԾԱՐԿՎԵՑ «EXAMINATION - GSU» ՀԱՍՎԱՐԳԸ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ քննությունների համակարգչային թեստավորման և անցկացման համակարգի շնորհանդես: Վերջինս նախագծել էին բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի վարիչ Հենրիկ Մելիքյանը, նույն ամբիոնի դասախոսներ Ելենա Ղուկասյանը, Մամիկոն Հակոբյանը և ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի ուսանողներ Վարազդատ Ավետիսյանը, Արշակ Կռոյանը, Ռուստամ Նավոյանը:

Անցկացվեց նախնական քննություն «Examination GSU» ավտոմատացված համակարգի ճշգրտությունն ու արդյունավետությունը ստուգելու նպատակով: «Բարձրագույն մաթեմատիկա», «Ժամանակակից հայոց լեզու», «Սահմանադրական իրավունք», «Ինֆորմատիկա» և «Գենետիկայի հիմունքներ» առարկա-

ների քննությունները կազմակերպվեցին նոր համակարգով:

24.06.2011թ. ՏԵՍԱԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԳՊԴ-ՈՒՄ

Հայկական Ատլանտյան ասոցիացիան Գավառի պետական համալսարանում անցկացրեց տեսախորհրդաժողով Ատլանտյան և Եվրոպական համագործակցության ասոցիացիայի նախագահ Տեոդոսիս Գեորգիուի հետ:

Տեսականորջի մասնակիցները քննարկեցին Հյուսիսատլանտյան դաշինքի, այդ թվում՝ դաշինքի պատմական զարգացմանը, ՆԱՏՕ-ում որոշումների կայացման կարգի ու կառուցակարգերի, Հայաստան-ՆԱՏՕ գործակցության, ինչպես նաև ՀԱԱ-ի գործունեությանը վերաբերող հարցեր:

Տեսախորհրդաժողովի նպատակն էր՝ հավաքական անվտանգության ապահովման հյուսիսատլանտյան խոշորագույն կառույցի վերաբերյալ բաց և անկեղծ քննարկման միջոցով բարձրացնել ուսանողների իրազեկության մակարդակը:

04.07.2011թ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՐԻԿՈՍԻ ՀԵՏ

Տեղի ունեցավ մանկավարժական կրթությունը իրականացնող բուհերի միջբուհական կոնսորցիումի նիստ, քննարկվեցին համալսարանների համագործակցության ծրագրերի իրականացման խնդիրները:

Նիստից հետո Սայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կոնսորցիումի անդամներին ընդունեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն: Վեհափառ Հայրապետը կարևորեց բուհերում որակյալ կրթության ապահովումը, մատաղ սերնդի ոչ միայն մասնագիտական կրթությունը, այլև հոգևոր դաստիարակությունը:

05.07.2011թ. ԳՊԴ-Ն ԿՅԱՆՔ ՃԱՆԱՊԱՐՅԵՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ 14-ՐԴ ՍԵՐՈՒՆԴԸ

ԳՊԴ մեծ դահլիճում տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի շրջանավարտների դիպլոմների հանձման հանդիսավոր արարողությունը: Հայաստանի Հանրապետության ամենաերիտասարդ բուհը կյանք ճանապարհեց շրջանավարտների 14-րդ սերնդին:

Միջոցառման վերջում տեղի ունեցավ ԳՊԴ մագիստրոսների երդման արարողությունը, որից հետո ԳՊԴ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը հանձնեց գերազանց առաջադիմությամբ ավարտած մագիստրոսների դիպլոմները:

ՏԵՂԵԿԱՏՈՒ
ԳԱԿԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ՋԵՌԱԽՈՍԱԳՐԱՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐԻ

<i>Ազգանուն, անուն, հայրանուն</i>	<i>Ժամայողական 0-264</i>	<i>Էլեկտրոնային փոստի հասցե</i>
ԳՊԴ-ի կառավարման խորհրդի նախագահ Հակոբյան Հրանտ Խաչատուրի	2-38-03 2-57-75	hrant.hakobyan@mail.ru
ԳՊԴ ղեկավար Հակոբյան Ռուզաննա Խաչիկի	2-57-75 2-55-75 0-10-28-20-75	ruzanna.hakobyan@mail.ru
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Կուտուզյան Նելլի Ալբերտի	3-05-05	nkutuzyan@gsu.am
Տնտեսական գծով պրոռեկտոր Ապրոյան Արսեն Հրաչիկի	2-55-01	aproyan@list.ru
Բանասիրական ֆակուլտետի ղեկան Կատվայան Վիկտոր Լիպարիտի	2-45-24	viktor-katvalyan@mail.ru
Բնագիտական ֆակուլտետի ղեկան Ավագյան Մարտին Պատվականի	2-62-50	avagyanmartin@rambler.ru
Հումանիտար ֆակուլտետի ղեկան Ղաջոյան Համլետ Գիրշայի	2-70-09	ghajpjan1953@mail.ru
Տնտեսագիտական ֆակուլտետի ղեկան Ամիրխանյան Սամվել Գրիգորի	2-36-51	samvelamirkhanyan@rambler.ru
Հեռակա ուսուցման ֆակուլտետի ղեկանատ	2-84-54	nkutuzyan@gsu.am
Ակադեմիական քաղաքականության վարչություն Ղարիբյան Ալինա Ամբիկի	2-61-15	alinagharibyan@rambler.ru
Ուսանողական խորհրդի նախագահ Շուքուրյան Արմեն Վաչագանի	2-70-09	-
Բանասիրական ֆակուլտետի ղեկանի տեղակալ Բաղայան Մարինե Սիքայելի	2-45-24	mbadalyan@rambler.ru
Տնտեսագիտական ֆակուլտետի ղեկանի տեղակալ Հերզոյան Մարիամ Նորիկի	2-36-51	dhergmar@rambler.ru
Հումանիտար մասն. ֆակուլտետի ղեկանի տեղակալ Գևորգյան Գոհար Վոլոդյայի	2-70-09	gohar.geworgyan@mail.ru
Բնագիտական ֆակուլտետի ղեկանի տեղակալ Գարեյան Սելանյա Վոլոդյայի	2-84-36	gareyanmelanya@mail.ru
Գլխավոր հաշվապահ Մուրադյան Գուրգեն Գևորգի	2-42-43	muradyang@gmail.com
Ռեկտորի օգնական Մայիլյան Անուշ Տոլիկի	2-57-75	mayil-an@rambler.ru
Հատուկ բաժնի պետ Սաֆարյան Խաչատուր Ժորայի	2-81-02	safaryanxachik@rambler.ru
Արհմիության նախագահ Սիրունյան Լյովա Գուրգենի	2-81-02	lyovasinunyan@mail.ru
Ավագ պարետ Զաքոյան Տարիել Հրաչիկի	2-84-41	-

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծրագրեր, զարգացումներ, արդյունքներ	3
Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին	8
Միջազգային համագործակցություն	32
Դասախոսների գործուղումներ	35
Ուսումնագիտական աշխատանքներ	38
Բանասիրական ֆակուլտետ	51
Բնագիտական ֆակուլտետ	73
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ.....	97
Տնտեսագիտական ֆակուլտետ	120
Հեռակա ուսուցման ֆակուլտետ	140
Ակադեմիական քաղաքականության վարչություն	149
ԳՊՀ գրադարան	153
ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժին	155
ԳՊՀ արհեստակցական կազմակերպություն	166
Ուսանողական խորհուրդ և ուսանողական գիտական ընկերություն	167
ԳՊՀ իրավաբանական կլինիկա	171
Տնտեսատեխնիկական գործունեություն	173
ԳՊՀ հիշարժան միջոցառումներից	176
Տեղեկատու	192

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**2010-2011 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԳՊՀ,
Գեղարքունիքի մարզ,
քաղաք Գավառ, Ազատության 1,
հեռ. (3710) 28-20-75
կայք. www.GSU.am**

Տպագրվել է «Օրենք և իրականություն»
ՄՊԸ տպարանում:
Երևան, Աճեմյան (Անդրֆեդերացիա)18,
հեռ.57-29-90